ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(77-րդ տարի) **Թիվ-5** (1675) Մայիս 2023

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Հաղթանակի գաղափարից են ծնվում նոր հաղթանակները (էջ 1-3)

2- Քաղաքական

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքական մեծ առևտրին սպասելիս (էջ 4-5)

3- Հայրենի եզերք

Տաթևիկ Աղաջանյան
Արցախ. շրջափակման 5 ամիսը (էջ 6-8)

4- Տարածաշրջանային

Ժաննա Վարդանյան
Շիա հավատացյալներ. Ադրբեջանի իրանական վախը (էջ 9-13)

5- Աշխարհաքաղաքական

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն
Թուրքիայում կայանալիք նախագահական ընտրությունները և ԱՄՆ դիրքավորումը (էջ 14-17)

6- Տեսակետ

Վանիկ Վիրաբյան
Հայաստանի դաշնակիցները, Թուրքիան, Բոլշևիկյան Ռուսաստանը, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը (էջ 18-28)

7- Հարցազրույց

«Դրօշակի» հարցազրույցը Մովսես Հերկելյանի հետ
88 թ. մտավորականությունը ժողովրդին ոտքի հանեց (էջ 29-32)

8- Դեմքեր և դեպքեր

Դավիթ Գասպարյան
Եղիշե Չարենց և Վահան Նավասարդյան (էջ 33-38)
Սաքո Շատախունի
Մի յուշ Չարենցի մասին (էջ 39-40)
Գոհար Խանումյան
Մոռացված անուն եվրոպական հայասիրական շարժման մեջ Հովհաննես Լոռիս-Մելիքով (էջ 41-43)

9- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Հայեացքը՝ լուսաստղին ՄԱՅԻՍ 28 (էջ 44)

Հաղթանակի գաղափարից են ծնվում նոր հաղթանակները

Մայիսը հայ ժողովուրդը միշտ ընկալել է որպես հաղթանակների ամիս: Հայոց պետականության հիմնադրման օրը համարվող 1918 թ. մայիսի 28-ը Հայաստանի վերանկախացումից հետո ներառվեց տոնացույցում՝ որպես Հանրապետության օր, իսկ մայիսյան այդ տոնին գումարվեցին Շուշիի ազատագրման և Արցախի պաշտպանության բանակի ստեղծման օրերը: Դժբախտաբար, վերջին տարիներին հայոց երկու պետականությունների հետ տեղի ունեցած մեծ ողբերգությունները, քաղաքական ու բարոյական անկումները ստվերեցին և անգամ կասկածի տակ դրեցին այս տոների արժեքը, նախորդող երեք տասնամյակների մեր ձեռքբերումները, հերոսացումները, սերունդների 35-ամյա պայքարը, փայփայած իդեալներն ու սերունդների ապրած կյանքը: Հաղթած, հպարտ, ամուր ժողովրդի տարածքային, քաղաքական, ռազմական, բարոյական բոլոր գահավիժումները տեղի ունեցան քաղաքական մի խմբի կառավարման տարիներին, որն անմիջականորեն իր ունեցած բոլոր ձախողությունների մեղքը փորձում է բարդել նախորդների վրա: Անկախ նրանից, թե ինչ չափի են նախորդների զանցանքներն ու հանցանքները, արդյո՞ք դրանք կասկածի ու վերանայման հիմք են այն կոնկրետ, փաստական իրողությունների, որոնք տեղի են ունեցել ներկա կառավարողների անմիջական ղեկավարման ներքո: Ժողովրդի պառակտումը, Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության քայքայումը, պետական-քաղաքական գործընթացներից քաղաքական ուժերի դուրս մղումը, հաղթանակներ կերտած զինվորական ղեկավարության մեկուսացումն ու հալածանքները, դաշնակից պետությունների հետ հարաբերությունների վատթարացումը, բանակի վերազինման գործի ձախողումը, որպես թշնամուն ուղղված ուղերձ հնչող քաղաքական անհիմն ու գրգռիչ հայտարարությունները և այդ ամենին հետևած պատերազմական գործողությունների անտաղանդ ու անկազմակերպ ղեկավարումը, ընդհանուր զորահավաքի, ինչպես և բարեկամ երկրների օգնության առաջարկների մերժումը, զինադադարի առաջարկի անտեսումը թշնամական կոալիցիայի ակընհայտ հաջողությունների պայմաններում ռազմաքաղաքական խոշոր պարտության պատճառներն էին: Ի՞նչ կապ ունեին այս ամենի հետ նախկինները, որոնց վատ կառավարման տարիներին մենք միայն հաղթանակներ էինք տարել: Զինվորական ծառայությունից խուսափած, բայց պաշտպանական համակարգի բարձրագույն հրամանատարի պաշտոնը զբաղեցրած անձը դասալիքների իր թիմի գլուխ անցած՝ պատերազմի սկզբում հոխորտում էր, թե՝ կասկածող կամ գերագույն գլխավոր հրամանատար լինելու կարողություններիս, և մինչև պատերազմի վերջին օրերը ժողովրդին կեղծ տեղեկատվություն էր մատուցում թվացյալ հաղթանակի մասին, իսկ

պարտությունից և կապիտուլյացիայի խայտառակ փաստաթղթի ստորագրումից հետո սկսեց ճվճվալ, թե նախկինները վաղուց հանձնել էին այն, ինչի համար ինքը ստորագրել է: Այս ամենը, սակայն, կարելի էր համարել անփորձության, չհիմնավորված ինքնավստահության և այլ «փոքր» մեղքերի հետևանք, եթե ակնհայտ չլինեին Արցախի, Հայաստանի, ազգային պատմության, մշակույթի և արժեքների նկատմամբ այն պատկերացումն ու հետևողական վերաբերմունքը, որոնք դրսևորվել են իշխանության գալու առաջին օրերից: Գործընթացը հասել է նրան, որ արմատական վերանայման են ենթարկվում գիտակրթական չափորոշիչները, երբ այլևս առանց ենթատեքստերի քննարկման առարկա են դառնում Հայոց ցեղասպանություն բնորոշումը, Արարատ լեռան, Կոմիտասի և ազգային ինքնությունը պայմանավորող հիմնարար այլ արժեքների ու հասկացությունների նշանակությունը: Եթե անդրադառնանք, թե քաղաքական-հասարակական ինչ միջավայրերից է սերվել և ներկայում ինչպիսի քաղաքական հակումներ է դրսևորում երիտասարդ իշխանության այս թիմը, պարզորոշ է դառնում նաև արտաքին թելադրանքով իրականացվող այն ծրագիրը, որը պետականորեն իրագործվում է Հայաստանում և Արցախի նկատմամբ:

Եվ այս ամենը տեղի է ունենում պատմական այնպիսի ժամանակահատվածում, երբ աշխարհը կրկին աշխարհաքաղաքական ու քաղաքակրթական բուռն բախումների և գլոբալ փոփոխությունների հողմապտույտների մեջ է: Ճակատագրական ժամանակահատվածը կրկնության պես զուգահեռվում է հարյուր տարի առաջ տեղի ունեցած իրողությունների հետ: Առաջին համաշխարհային պատերազմի, Ռուսաստանում փոթորկվող քաղաքացիական պատերազմի շրջանում հայությունը հայտնվել էր հակամարտող կողմերի և շահերի խաչաձևման էպի-

կենտրոնում, և չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ գտնվում էր աշխարհաքաղաքական բախման գոտու վրա: Դեռևս 1915 թ. մայիսին Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը հեռագրեցին թուրք սուլթանին՝ հայտարարելով, որ այն, ինչ իրականացվում է հայ ժողովրդի նկատմամբ, հանցագործություն է մարդկության և քաղաքակրթության դեմ: Սրանով հանդերձ, բոլորի կրավորական հայացքի առջև վերացվեց արևմտահայությունն ու վերջնականորեն սեփականվեց նրա բնօրրանը: 1918 թվականի գարնանը ցեղասպանը արդեն Արարատյան դաշտում էր և սպառնում էր արևելահայությանը ենթարկելու նույն ճակատագրին: Քաղաքական և հատկապես ռազմական ղեկավարությունը չէր հավատում ճակատ տալու հեռանկարին և առաջարկում էր նահանջել դեպի լեռնային բարձունքներ և անցնել ֆիդայական-պարտիզանական պայքարի տակտիկայի: Սակայն կար Ազգային կենտրոնական խորհրդի կողմից նշանակված այդ ժամանակաշրջանի համար թերևս ամենաճիշտ անձը, որն առարկեց բոլորին՝ փաստարկելով, որ այդ դեպքում կկրկնվի արևմտահայության հետ տեղի ունեցածը: Իր երկաթյա կամքը հակադրելով նահանջի գաղափարին՝ Արամ Մանուկյանը վճռահատեց՝ ասելով, որ պետք է մնալ և կռվել հենց այդտեղ, հաղթել կամ մեռնել առանց երկընտրանքի մասին մտածելու. «Ամէն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ, եթէ նայող կայ, նայում է միայն յանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար: Եթէ ընդհանուր ուժերով ճակատ պահելու խօսք էլ է լինում, դա լոկ խօսք է՝ զուրկ իրական հիմքից ու անկեղծութիւնից: Հայերով ո՛չ ոք չի հետաքրքրուում շօշափելի օգնութիւն հասցնելու մտքով: Դրա հակառակը, կայ դաւադրական վերաբերմունք: Մենակ ենք և պէտք է ապավինենք միայն մեր ուժերին՝ թէ՛ ճակատը պաշտպանելու և թէ՛ երկրի ներսը կարգ հաստատելու համար»: Այս էր Արամի հիմնավորումը: Իսկ մինչ վճռական ճակատամարտերը գործակցելով Դրոյի հետ՝ Արամին հաջողվել էր վերականգնել ռուսների հեռանալուց հետո փլուզված վարչական համակարգը, զսպել դրսից թելադրված ներքին թշնամու խժդժությունները, միավորել ժողովրդի բոլոր կարող տարրերին և որ ամենագլխավորն է, պարտված, գաղթական, հուսահատ զանգվածներին ներշնչել հավատ և պայքարի վճռականություն: Կարելի է պնդել, որ եթե չլիներ Արամի գաղափարակից ու գործակից ազգային ռազմաքաղաքական ընտրախավը, հնարավոր չէր լինի Հայաստանի անկախացումն ու պետականության վերականգնումը: Այդ ընտրախավը ոչ միայն նշված մի քանի ամիսներին, այլ երեք տասնամյակ ճիգ գործադրեց՝ սպանելու հայ ժողովրդի միջի ստրուկին, ներշնչելու նրան արժանապատվություն, նախնյաց ըմբոստ ոգին և պայքարի կամքը: Ահա, թե ինչ է գրում Նիկոլ Աղբալյանը այս ամենի մասին՝ ասելիքը կենտրոնացնելով մայիսի 28-ի խորհրդանշական օրվա վրա:

«Ո՞րն է իմաստը մայիս 28-ի: Այդ թուականին բովանդակ հայ ազգը, որ ստրուկ էր թուրքին և հպատակ՝ ռուսին, կը դառնար ազատ ու անկախ հայրենիքի տէր ու քաղաքացի: Այն ժողովուրդը, որ սովոր էր միայն իր վիզը երկարել թշնամին և կինը զիջիլ ուրիշին, մայիս 28-ին ինքզինք կը հռչակէր ազատ ու անկախ. Ան իր ազատութեան համար կռուեցաւ ձմրան ցուրտին, բոպիկ և մերկ, քաղցած ու արիւնաքամ վիճակի մէջ: Արևելեան և արևմտեան հայութիւնը՝ միացած Դաշնակցութեան դրօշին տակ, հասած էր ինքնագիտակցութեան՝ իբրև մէկ մարդ»:

Իսկ փորձեք պատկերացնել, որ նման ժամանակահատվածում հայ ժողովրդին առաջնորդեր ներկայիս իշխանության նման քաղաքական մի թիմ: Երևի «կպարզվեր», որ Արևելահայաստանի նկատմամբ ևս հայ ժողովուրդը իրավունքներ չունի, որովհետև դարեր շարունակ այնտեղ իշխել են օտարները: Կեզրակացվեր երևի, որ պայքարն անիմաստ է, որովհետև հնարավոր չէ հաղթել բազմապատիկ ուժեղ թշնամուն: Եվ ուրեմն ի՞նչ: Եվ ուրեմն պետք է հարմարվել և խոնարհությունը փաստելով՝ ապրել թուրքի շուքի տակ: Սա չափազանցություն չէ Նիկոլ Փաշինյանը, սրան է տանում Հայաստանը:

Փաշինյանը հայ ժողովրդի մի հատվածին վերածեց վախկոտ ու անարժանապատիվ ստրուկի: Փաշինյանն իր հենարանը դարձրեց ազգակցին թուրքից ավելի ատող կուրացած ամբոխի՝ ներշնչելով, թե այդ ամբոխն է երկիրը ղեկավարում և որոշում սեփական ճակատագիրը (հիշենք երեք միլիոն վարչապետերի մասին հեքիաթը): Եվ դժբախտաբար, այս ամբոխին դեռևս մաս կազմող փոքրամասնությունը հարց չի տալիս իր կուռքին, թե ինչո՞ւ է Արցախի ճակատագիրը որոշվում ոչ թե հրապարակում, այլ բանակցությունների փակ դռների ետևում, ինչո՞ւ են ամենաժողովրդական կառավարության նիստերի հիմնական օրակարգերը քննվում փակ ռեժիմով, ինչո՞ւ «ազնիվ» ՔՊ-ականների օրինական ու ոչ բացահայտ եկամուտներն աճում են սրընթաց ձևով, իսկ աղքատության ցուցանիշն ու աղքատների քանակը շարունակում են աճել, և ում համար են տնտեսական աճի տոկոսները, եթե այդ թվերը ոչ մի աղերս չունեն ժողովրդի կենսամակարդակի հետ: Ինչպե՞ս է, որ երկիրը ղեկավարող անձը որքան շատ է խոսում խաղաղության մասին, այնքան ավելի է մեծանում պատերազմի վտանգը, և եթե մեծ պատերազմը

չի վերսկսվում, պատճառն այն է, որ առանց դրա էլ թուրքերը Հայաստանը գրավում են մետր առ մետր: Պատերազմից հետո Նիկոլ Փաշինյանը տեղին ու անտեղի փիլիսոփայում է այն մասին, որ արցախցիներն իրենք պետք է որոշեն իրենց ճակատագիրը՝ բանակցելով ադրբեջանցիների հետ: Այդ դեպքում Ադրբեջանի ամբողջականությունը 86 600 ք/կմ տարածքի վրա ճանաչելը, եթե չի նշանակում, որ Հայաստանի ղեկավարը Արցախը պաշտոնապես ճանաչում է Ադրբեջանի կազմում, ապա ինչ է նշանակում: Ինչպես հասկանալ ձեռք բերված պայմանավորվածությունները, եթե դրանց ձեռքբերումից առաջ ու հետո Ադրբեջանը շարունակում է հարձակվել և ռմբակոծել հայկական տարածքները, իսկ Հայաստանի ղեկավարությունը ձայն չի հանում, հարցականի տակ չի դնում պայմանավորվածությունների հուսալիությունը: Ավելին, հետևողականորեն շարունակվող այս սցենարը ավելի ու ավելի է հիմնավորում կասկածը, որ Փաշինյանն ու Ալիևը գործում են համաձայնեցված ձևով: Ալիևի ձեռնարկած ռազմական բնույթի ուղղակի և անուղղակի գործողություններից հետո (ռազմական առաջխաղացումներ, շրջափակումներ, անցակետերի տեղադրում) Նիկոլ Փաշինյանը «ստիպված է լինում» տարածքներ, ճանապարհներ ու դիրքեր զիջել, որպեսզի հայկական կողմը շատ զոհ չտա: Եվ այն, ինչ այս օրերին է տեղի ունենում, իրավունք չի՞ տալիս արդյոք մտածելու, որ Նիկոլ Փաշինյանը պատրաստվում է Ալիևին հանձնել նաև Սոթքի վերջին հանքավայրը:

Ինչ կարելի է սպասել մի մարդուց, որն իր գրություններում հակակրանք է արտահայտել հայոց նախնիների հանդեպ, Արցախը համարել է ադրբեջանապատկան, Զանգեզուրով Թուրքիային միջանցք չտրամադրելու հայ ժողովրդի համառությունը բնորոշել է որպես «չուզողություն»: Նիկոլ Փաշինյանը և նրա ղեկավարած խմբակը չեն հավատում հայ ժողովրդի ուժին ու իդեալներին, երբեք կողմնակիցը չեն եղել Արցախի անկախությանը և ցավ չեն զգում նորանոր տարածքների հաշվին Հայաստանի ռազմավարական զիջումների համար: Այս ուժը չի հավատում, որ Հայաստանն ու հայությունը ունակ են իրենց պաշտպանելու և այդ պաշտպանությունը փնտրում են դրսում: Նիկոլ Փաշինյանը հետևողականորեն իրականացնում է Ռուսաստանին Անդրկովկասից դուրս մղելու արևմտաթուրքական ծրագիրը և դրա դիմաց արևմուտքից աղերսում է պաշտպանություն, որպեսզի մնա իշխանության ղեկին: Այս մասին է վկայում նաև Ռեյկյավիկում տեղի ունեցած Եվրոպայի խորհրդի 4-րդ գագաթնաժողովում սույն թվականի մայիսի 17-ին Նիկոլ Փաշինյանի արտասանած խոսքը ժողովրդավարության մասին, որում անդրադարձ չկա Արցախի իրավունքների, հայության անվտանգության վերաբերյալ: Փաշինյանը հավաստիացնում է, որ ինքը Արևմուտքի ժողովրդավարական արժեհամակարգի դրոշակակիրն է՝ ակնկալելով Արևմուտքից հովանավորություն իր իշխանության նկատմամբ: Այս մեկը, թերևս, Զելենսկուց սովորած դաս է. վերջինս էլ Արևմուտքին ներկայանում է որպես ռուսական ագրեսիայից աշխարհը պաշտպանող առաքյալ և համապատասխան գին է պահանջում դրա դիմաց:

Օտարին ապավինած և վերջինիս ծրագրերի իրականացման համար Արցախը հանձնող ու Հայաստանը բզկտման տանող Փաշինյանը ևս մեկ անգամ կոպտորեն ոտնահարեց Հայաստանի օրենսդրությունը, խորհրդարանի ու կառավարության մի շարք որոշումները՝ Արցախը փաստացի ճանաչելով Ադրբեջանի կազմում: Մեր այս գրության մեջ զուգահեռ տարվեց երկու իշխանությունների միջև, որոնցից մեկը ապավինեց հայության ուժին ու իդեալներին և անձն քաոսից կարողացավ անկախ պետություն կերտել: Մյուսը պետությունը փորձադաշտ դարձրեց օտար շահերի համար, հավատաց ու հենվեց ոչ թե սեփական ժողովրդի ուժի, այլ օտարի սին խոստումների վրա և կործանման տարավ Արցախը ու շարունակում է ինքնիշխանության կորստի տանել Հայաստանը: Հասկանալով իր կատարած հանցագործությունների մեծությունը՝ այս ղեկավարը սկսում է ավելի ու ավելի վախենալ պատժից և ավելի մեծ չափով է ապավինում ու կախման մեջ ընկնում արտաքին ուժերից: Վերջիններիս հովանավորության դիմաց էլ նա հատուցում է երկրի հաշվին:

Գրեթե բոլորն են հասկանում, որ փրկության ելքը համազգային բռունցք ձևավորելու և հետևողական պայքար ծավալելու մեջ է: Պայքարը պետք է ուժգնանա՝ ձնագնդի պես ընթացք առնելով և ոչ թե նախ սպասել, որ այդ ձնագունդը մեծանա, հետո պայքար սկսել: Պայքարել, թե լուռ հետևել՝ ինչպես է երկիրը գլորվում անդունդը. կանգնած ենք այս երկընտրանքի առջև, երկու ճանապարհն էլ անցել ենք, երկուսի արդյունքն ու հետևանքն էլ ճաշակել: Կկարողանա՞ հայ ժողովուրդը կրկին բռունցքվել, ինչպես Սարդարապատից առաջ: Հաղթանակի ձգտումից են ծնվում նոր հաղթանակները:

Քաղաքական մեծ առևտրին սպասելիս

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Մայիսի 14-ին տեղի է ունեցել Արցախի համար կարևոր նշանակություն ունեցող երկու իրադարձություն: Այդ օրը Բրյուսելում հերթական անգամ հանդիպել են Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարները: Հանդիպմանը, որն անց էր կացվել Եվրոպայի խորհրդի նախագահ Շառլ Միշելի միջնորդությամբ, նախորդել էր Հայաստանի, Ադրբեջանի և ԱՄՆ արտաքին գործերի նախարարների հանդիպումների շարքը Վաշինգտոնում: Վաշինգտոնյան բանակցություններից հետո թե՛ Հայաստանի և թե՛ Ադրբեջանի ԱԳՆ-ները հայտարարեցին, որ «մի շարք առանցքային հարցերի շուրջ (կողմերի - Հ.Մ.- Շ.) դիրքորոշումները մնում են տարամետ»[1]: Սակայն այդ հանգամանքը չխանգարեց, որպեսզի վաշինգտոնյան փուլից ընդամենը տասն օր անց Բրյուսելում կայանա Փաշինյան-Միշել-Ալիև գագաթնաժողովը, ինչը վկայում է այն մասին, որ արտգործնախարարների բանակցություններն այդքան էլ անարդյունավետ չեն եղել:

Բելգիայի մայրաքաղաքում տեղի ունեցած եռակողմ հանդիպումից հետո ԵԽ նախագահ Շառլ Միշելը մամուլին տված մեկնաբանության մեջ հաստատել է, որ ԱՄՆ-ում անցկացված հանդիպումները նոր թափ են հաղորդել Հայաստանի ու Ադրբեջանի միջև, այսպես կոչված, «խաղաղության պայմանագիր» ստորագրելու գործին, ինչը եվրոպացի գործիչը շատ կարևոր է համարել: Վերջինս նաև որոշակի մանրամասներ է բացահայտել Բրյուսելում տեղի ունեցած բանակցություններից՝ նշելով, որ. «Հայաստանի և Ադրբեջանի առաջնորդները հավատարմություն են հայտնել Ալմա Աթայի 1991 թ. հռչակագրին և Հայաստանի ու Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը՝ համապատասխանաբար 29 800 քառ. կմ և 86 600 քառ. կմ»[2]:

Միշելը նաև տեղեկացրել է, որ Փաշինյանն ու Ալիևը համաձայնել են վերսկսել սահմանային հարցերի շուրջ երկկողմ հանդիպումները և առաջընթաց գրանցել տարածաշրջանում տրանսպորտային և տնտեսական կապերի ապաշրջափակմանը վերաբերող հարցերի քննարկումներում: Նշված հարցերից բացի, ըստ Միշելի՝ Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարները քննարկել են նաև գերեվարված անձանց միմյանց հանձնելու հնարավորությունները, Արցախի հայության իրավունքների խնդիրը և այլն[3]: Սակայն ոչ մի խոսք չի եղել Արցախն ապաշրջափակելու, Լաչինի միջանցքն Ադրբեջանի կողմից ապօրինաբար փակելու և ՀՀ տարածքից ադրբեջանական ԶՈՒ ստորաբաժանումների դուրս բերման մասին: Ակնհայտ է, որ Բրյուսելում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն Արցախը ճանաչել է Ադրբեջանի կազմում և որևէ կերպ չի փորձել միջամտել «Ադրբեջանի ներքին գործերին»: Դա է վկայում նաև Ադրբեջանի տարածքի ամրագրված թիվը՝ 86 600 քառ. կմ: ՀՀ կառավարության մամուլի ծառայությունը, ինչպես

Վաշինգտոնում անցկացված բանակցությունների դեպքում, այս անգամ նույնպես որևէ հստակ տեղեկատվություն չի մատուցել Բրյուսելում անցած Փաշինյան-Միշել-Ալիև հանդիպման մասին: Միայն ընդհանուր արտահայտություններ՝ առանց որևէ մանրամասների[4]:

Եվ սա արդեն ձեռագիր է. ՀՀ իշխանություններն ինչ-որ բաներ են պայմանավորվում Ադրբեջանի իրենց գործընկերների հետ, հանրությունից թաքցնում այդ պայմանավորվածությունները, հնարավորություն տալիս Ադրբեջանին կյանքի կոչել դրանք, հետո սկսում բողոքել (բնականաբար՝ ձևական, մինչ հաջորդ նման զարգացումը - Հ.Մ.-Շ.), թե իբր Բաքուն հերթական անգամ սադրանքի է դիմել սահմանում: Իսկ իրականում, ինչպես դա ցույց տվեցին նաև Տեղ գյուղի հատվածում ադրբեջանական զորքերի առաջխաղացումն ու Լաչինի միջանցքում Ադրբեջանի կողմից հսկիչ-անցագրային կետ տեղադրելու փաստերը, պաշտոնական Երևանը հիանալի տեղեկացված է լինում սպասվող զարգացումների մասին: Համենայն դեպս, դա է վկայում, օրինակ, ՀՀ ԱԺ-ում ապրիլի 20-ին Ն. Փաշինյանի արած հայտարարությունն այն մասին, որ Տեղ գյուղում 5 կմ խնդրահարույց սահմանի 1.4 կմ հատվածն «արդեն ճշտվել է»[5]: Որովհետև սահմանների «ճշտման» գործընթացում գտնվող երկրի ղեկավարությունը որևէ կերպ չէր կարող անտեղյակ լինել, որ այդ նույն սահմանի «խնդրահարույց» հատվածում թշնամին նոր դիրքեր է տեղադրում, իսկ քիչ այն կողմ հսկիչ-անցագրային կետ տեղադրում:

Հաշվի առնելով այս ամենը՝ կարելի է վստահ պնդել, որ Փաշինյան-Ալիև զույգը նոր գործելաոճ է որդեգրել և նշված բանաձևով շարունակում է սպասարկել թուրք-ադրբեջանական շահը մեր տարածաշրջանում: Երկրորդ կարևոր իրադարձությունը, որը տեղի է ունեցել մայիսի 14-ին և մեծ նշանակություն ունի Արցախի խնդրի կարգավորման տեսանկյունից, Թուրքիայում կայացած նախագահական և խորհրդարանական ընտրություններն են: Խորհրդարանական

ընտրություններում ամեն ինչ պարզ է. Էրդողանի ղեկավարած ալյանսը վստահ հաղթանակ է տարել և տիրացել թուրքական 600 անդամ ունեցող խորհրդարանի 322 տեղերին:

Իսկ ահա նախագահական ընտրություններում հաղթողը դեռևս չի բացահայտվել: Մայիսի 28-ին Թուրքիայում կկայանա ընտրությունների երկրորդ փուլը, որի արդյունքով էլ պարզ կդառնա, թե ով է ղեկավարելու երկիրը հաջորդ հինգ տարիների ընթացքում:

Թուրքիայի նախընտրական արշավին ողջ աշխարհն է հետևում: Շատերը վստահ են, որ կախված այնտեղ անցկացվող նախագահական ընտրությունների արդյունքներից՝ կարող է փոխվել Թուրքիայի քաղաքականությունը հարակից տարածաշրջաններում, հատկապես՝ Հարավային Կովկասում, Սիրիայում, Ուկրաինայում և Ռուսաստանի ու Արևմուտքի հետ հարաբերություններում: Արտաքին քաղաքական թեմաներով քննարկումները նախընտրական այս փուլում ակտիվ են նաև Թուրքիայի ներսում: Գլխավոր հարցը ընտրություններից հետո երկրի արտաքին քաղաքական ուղղվածությունն է: Եվ սա հենց այն թեման է, որտեղ Էրդողանը կարողանում է մեծ դիվիդենտներ ձեռք բերել: Այս հարցում նրան զգալի աջակցություն են ցուցաբերում Ռուսաստանն ու անձամբ Վլադիմիր Պուտինը:

Պետք է նշել, որ հատկապես վերջին ամիսներին ռուսական կողմն ամեն ինչ արել է, որպեսզի Էրդողանը կարողանա վերընտրվել Թուրքիայի նախագահի պաշտոնում: Մոսկվան համագործակցում է Էրդողանի իշխանության հետ բոլոր ոլորտներում՝ ռազմականից մինչև միջուկային, տնտեսականից մինչ աշխարհաքաղաքականություն: Ընդ որում, հաճախ այդ համագործակցությունն իրականացվում է ի վնաս Ռուսաստանի ռեգիոնալ շահերի: Պատճառը մեկն է՝ Ռուսաստանում որոշել են, որ իրենց հիմնական գերակայությունը ներկայում Ուկրաինան է, և պետք է ամեն ինչ անել, որպեսզի այդ ուղղությամբ լրացուցիչ խնդիրներ չառաջանան: Այդ խնդրի լուծման համար նրանք ոչինչ չեն խնայում: Եվ քանի որ Թուրքիան Ուկրաինայում Ռուսաստանին վնասելու պոտենցիալ ունի, Մոսկվայում որոշել են բարիդրացիական հարաբերություններ պահպանել Էրդողանի հետ և մի շարք ծառայություններ մատուցել նրան:

Դատելով ռուս քաղաքական գործիչների ու վերլուծաբանների հայտարարություններից՝ Կրեմլում կարծում են, որ Ուկրաինայում խնդիրները լուծելուց հետո իրենք կարող են կարճ ժամանակում իրավիճակը շտկել նաև հարակից տարածաշրջաններում: Սակայն, ինչպես նշում են շատ փորձագետներ, ռուսական կողմը հետզհետե մոտենում է անդառնալիության կետին, որը հատելուց հետո նա կարող է լուրջ կորուստներ ունենալ իր համար կենսական նշանակության տարածաշրջաններում:

Եթե Թուրքիայում կրկին նախագահ ընտրվի Ռեջեփ Թայիփ Էրդողանը, իսկ այդ հարցը վերջինս կարծես արդեն լուծել է, ապա ռուսական կողմը կարող է պահանջել, որպեսզի նա վերադարձնի Հարավային Կովկասում և այլուր ռուսական կողմից իրեն տրված «նախընտրական պարտքը»: Սակայն, ըստ ամենայնի, այդ խոսակցությանը Պուտինն ու Էրդողանը կվերադառնան ոչ թե Թուրքիայի նախագահական ընտրությունների, այլ Ուկրաինայում Ռուսաստանի հատուկ ռազմական գործողության ավարտից հետո: Իսկ դա նշանակում է, որ Էրդողանը դեռ ռուսներին նոր բաներ առաջարկելու կամ նրանց խաղաքարտերը խառնելու որոշ ժամանակ ունի: Համենայն դեպս, միամտություն է ենթադրել, թե թուրք առաջնորդը կարող է ազնվորեն վարձահատույց լինել Ռուսաստանին իրեն մատուցված ծառայությունների համար:

Ի դեպ, ուկրաինական ճգնաժամը թվով, բայց ոչ երբեք կարևորությամբ, երրորդ գործընթացն է, որն ազդում է Արցախի ճակատագրի վրա: Պատճառը քիչ առաջ արդեն նկարագրեցի. Ռուսաստանում կարծում են, որ հետխորհրդային տարածաշրջանում իրենց ազդեցությունը վերականգնելու կամ մեծացնելու համար նախևառաջ պարտավոր են հաղթանակի հասնել Ուկրաինայում:

Վերոնշյալ բոլոր գործընթացները հետզհետե մոտենում են ավարտին: Թուրքիայի նախագահական ընտրությունների արդյունքները հայտնի կլինեն արդեն մայիսի 28-ին, իսկ Ուկրաինայում ընթացող պատերազմը հետզհետե սառեցվելու բազում նշաններ է ցույց տալիս: Դե, իսկ տարբեր երկրների միջնորդությամբ հայ-ադրբեջանական, այսպես կոչված, բանակցությունների տևողությունը սահմանափակված է աշխարհաքաղաքական տարբեր կենտրոնների՝ միմյանց հետ պայմանավորվելու ուշ թե շուտ վրա հասնող ժամկետներով: Հետևաբար թուրք-ադրբեջանական դաշինքը շտապում է մինչև նոր աշխարհակարգի հաստատումն առավելագույնս կորզել Հայաստանից ու Արցախից:

Աշխարհաքաղաքական և անվտանգային այս մրցավազքում հայկական երկու պետությունները, ցավոք, անելիքի մեծ ընտրություն չունեն: Մեր գործը մեկն է՝ դիմանալ ու դիմադրել, ամեն ինչ անել, որպեսզի մինչ քաղաքական «մեծ առևտրի» մեկնարկը հնարավորինս շատ բան պահենք մեր վերահսկողության ներքո: Մինչդեռ Հայաստանի իշխանությունները, բավարարելով Ալիևի բոլոր պահանջները, ճիշտ հակառակն են անում՝ վերացնելով Հայաստանի և Արցախի սուբյեկտայնության վերջին փշրանքները:

Հղումներ

1 ՀՀ ԱԳՆ մամուլի հաղորդագրություն, 04.05.2023, https://www.mfa.am/hy/press-releases/2023/05/04/pressrelease/11994:

2 Տես Press remarks by President Charles Michel following the trilateral meeting with President Aliyev of Azerbaijan and Prime Minister Pashinyan of Armenia, 14.05.2023, https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2023/05/14/press-remarks-by-president-charles-michel-following-the-trilateral-meeting-with-president-aliyev-of-azerbaijan-and-prime-minister-pashinyan-of-armenia/:

3 Նույն տեղում:

4 Բրյուսելում տեղի է ունեցել ՀՀ վարչապետի, Եվրոպական խորհրդի նախագահի և Ադրբեջանի նախագահի եռակողմ հանդիպումը, 14.05.2023, https://www.primeminister.am/hy/press-release/item/2023/05/14/Nikol-Pashinyan/:

5«Տեղ գյուղում ունենք 5 կմ խնդրահարույց սահման, որից 1.4-ն արդեն ճշգրտվել է». Փաշինյան, 20.04.2023, https://www.azatutyun.am/a/32371956.html:

Արցախ. շրջափակման 5 ամիսը

Տաթևիկ Աղաջանյան
Արցախ, լրագրող

Մննդի ու առաջին անհրաժեշտության որոշ ապրանքների համար կտրոններ, վառելիքի սղություն, գազի բացակայություն, հովհարային անջատումների գրաֆիկով մատակարարվող էլեկտրաէներգիա: Այսպիսին է 2022 թ. դեկտեմբերի 12-ից Հայաստանի Հանրապետության հետ կապող միակ ճանապարհի արգելափակման հետևանքով շրջափակման մեջ հայտնված Արցախում ստեղծված իրավիճակը:

Չսահմանափակվելով բնապահպանական կեղծ պատճառաբանություններով, Շուշիի մոտ ճանապարհը փակելով՝ Ադրբեջանը ապրիլի 23-ին արգելափակել է Արցախը Հայաստանին կապող Ստեփանակերտ-Գորիս մայրուղու՝ Հայաստանի Հանրապետության սահմանին միացնող ճանապարհահատվածը (Լաչինի միջանցքում) և սկսել անցակետի կառուցման ու կահավորման աշխատանքները: Նույն օրը հայտարարություն է տարածել ԱՀ Անվտանգության խորհուրդը՝ «բացարձակորեն անընդունելի համարելով Արցախը Հայաստանի հետ կապող, ՌԴ խաղաղապահ զորակազմի պատասխանատվության տիրույթում գտնվող Լաչինի միջանցքի արգելափակումը և այնտեղ ապրիլի 23-ին Ադրբեջանի կողմից անցակետի տեղադրումը»:

«Արձանագրելով, որ այդ քայլով Արցախի ժողովուրդը վերջնականապես դարձել է պատանդ Ադրբեջանի ձեռքում՝ էթնիկ զտման աճող ռիսկով, իսկ եռակողմ հայտարարության հետագա գործունեությունը լրջորեն վտանգված է, դիմում ենք եռակողմ հայտարարության կողմերին և հատկապես՝ Ռուսաստանի Դաշնությանը անհապաղ քննարկումներ սկսել Արցախի շրջափակման վերացման, ադրբեջանական անցակետի տեղադրման կանխարգելման և Արցախի ժողովրդի անվտանգության իրական երաշխիքների ապահովման շուրջ»,— ասվում է հայտարարության մեջ:

Անցակետի տեղադրումից հետո Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի Եղցահող, Հին Շեն, Մեծ Շեն և Լիսագոր համայնքների բնակիչները մնացել են լիակատար շրջափակման մեջ. նրանք կտրվել են ինչպես Ստեփանակերտ, այնպես էլ Հայաստանի Հանրապետություն մեկնելու հնարավորությունից: Երկկողմանի շրջափակման մեջ գտնվող Շուշիի շրջանի չորս համայնքների մի շարք բնակիչների, որոնք անցակետի տեղադրման պատճառով մնացել էին Գորիսում ու մայիսի մեկին ռուս խաղաղապահների աջակցությամբ վերադառնում էին իրենց բնակավայր, անակնկալ կերպով կանգնեցրել են ադրբեջանցի ծառայողները և անձնագրային ստուգման ենթարկել:

Ադրբեջանական խոչընդոտների պատճառով դադարել էին նաև բոլոր տեսակի հումանիտար մատակարարումներն այդ գյուղերի բնակիչներին, և

սուր հումանիտար ճգնաժամ էր առաջացել այնտեղ՝ առանց առաջին անհրաժեշտության պարագաների որևէ պաշարի: Միայն մայիսի 5-ին ՌԴ խաղաղապահների միջոցով ԱՀ կառավարության կողմից մեկ բեռնատար սնունդ, դեղորայք և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ են ուղարկվել նշյալ համայնքների բնակիչներին:

Ապրիլի 23-ին անօրինական հսկիչ անցագրային կետ տեղադրելուց հետո Ադրբեջանի կողմից արհեստական պատճառաբանություններով խոչընդոտվում է Լեռնային Ղարաբաղում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի բնականոն գործունեությունը. ապրիլի 29-ից դադարել են Արցախից Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ բուժառուների տեղափոխումը ՀՀ բուժհաստատություններ, ինչպես նաև դեղորայքի մատակարարումը դեպի Արցախ:

ԱՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից ձեռք բերված տեղեկության համաձայն՝ ադրբեջանական կողմն առաջ է քաշել հավելյալ պայմաններ՝ պահանջելով ստուգել բուժառուներին տեղափոխող մեքենաները, ինչպես նաև Կարմիր խաչի աշխատակիցների և բուժառուների անձնագրերը՝ խախտելով մինչ այդ ձեռք բերված համաձայնությունները:

ԱՀ առողջապահության նախարարության տեղեկացմամբ՝ կասեցվել է նաև Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից դեղորայքի մատակարարումը Արցախի Հանրապետության տարածք: Դրանով պայմանավորված՝ ԱՀ առողջապահության նախարարության ենթակա բոլոր բուժհաստատություններում կրկին դադարեցվել են պլանային վիրահատությունները, որոնք մասնակիորեն վերականգնվել էին շաբաթներ առաջ:

Պլանային վիրահատությունների դադարեցման պատճառով մոտ 1240 քաղաքացի զրկվել է վիրահատվելու միջոցով առողջական խնդիրների լուծման

հնարավորությունից (վերջին 2 օրվա ընթացքում շուրջ 20 դեպք է ավելացել):

Շրջափակման հետևանքով իրենց տներ չեն կարողացել վերադառնալ ընդհանուր առմամբ շուրջ 3900 անձինք, ներառյալ՝ 550 երեխա, որոնց մի մասն արդեն վերադարձել է տուն Կարմիր խաչի և ՌԴ խաղաղապահների աջակցությամբ:

Արգելափակված ճանապարհով Արցախի քաղաքացիների ոչ մի մեքենա չի անցել, իսկ մեքենաների ընդհանուր շարժը գրեթե 54 անգամ ավելի քիչ է եղել, քան պետք է լիներ շրջափակման բացակայության դեպքում (152 օրվա ընթացքում 139 840-ի փոխարեն՝ 2575 մեքենայի մուտք և ելք, այն էլ՝ միայն Կարմիր խաչի և ՌԴ խաղաղապահների կողմից): Շուրջ 13 անգամ ավելի քիչ կենսական նշանակության ապրանք է ներկրվել միայն Կարմիր խաչի և ռուս խաղաղապահների կողմից, քան իրականում պետք է լիներ առանց շրջափակման պայմաններում (152 օրվա ընթացքում մոտ 60 800 տոննայի փոխարեն՝ 4657 տոննա):

860 տնտեսվարող սուբյեկտ (ընդհանուրի 20,1%-ը) շրջափակման պայմաններում աշխատելու անհնարինության պատճառով կասեցրել է իր գործունեությունը, իսկ մնացած տնտեսվարողները գործում են մասնակի ծավալով կամ պետական աջակցությամբ:

Շրջափակման և կենսական ենթակառուցվածքների խափանման պատճառով շրջափակման մեկնարկից առ այսօր փաստացի աշխատանքը և եկամտի աղբյուրը կորցրել է նախնական հաշվարկներով շուրջ 10.900 մարդ (ներառյալ՝ պետական աջակցությամբ աշխատատեղի ժամանակավոր պահպանման դեպքերը), որը մասնավոր հատվածում աշխատողների 50 տոկոսից ավելին է:

Շրջափակման ընթացքում Արցախի Հանրապետության տնտեսությանը հասցվել է շուրջ 289 մլն ԱՄՆ դոլարի վնաս՝ հանգեցնելով մոտ 32 տոկոսի չափով ՀՆԱ-ի կանխատեսված տարեկան ցուցանիշի (903 մլն դոլար) չապահովմանը:

Սակայն չնայած կենցաղային բազում անհարմարություններին, սոցիալական, հոգեբանական խնդիրներին՝ Արցախում ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքեր են փնտրում:



Բերձորի անցակետը

Ապրիլի 28-ից «Ո՛Չ Արցախի Հանրապետության էթնիկ զտմանը» երիտասարդական շարժումը ստորագրահավաք է սկսել՝ պահանջելով դադարեցնել Ադրբեջանի վարած արցախահայության էթնիկ զտման ու ցեղասպանական քաղաքականությունը և ապահովել 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության կատարումը:

Պահանջագիրն ուղղված է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ պետություններին, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության անդամ երկրների՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության ղեկավարներին, Ռուսաստանի Դաշնության նախագահին՝ որպես Արցախում խաղաղապահ առաքելություն իրականացնող երկրի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ որպես ՀՀ անկախության հռչակագրով Արցախի Հանրապետության հարցում իրավական և քաղաքական պատասխանատվություն ստանձնած պետության կառավարության ղեկավարի: Մայիսի 9-ի դրությամբ թղթային և առցանց եղանակով հավաքագրվել է շուրջ 120.000 ստորագրություն:

«Ո՛Չ Արցախի էթնիկ զտմանը» պահանջագրի և ստորագրահավաքի նախաձեռնող խմբի կողմից մայիսի 9-ին Ստեփանակերտի Վերածնունդ հրապարակում կազմակերպվել է համաժողովրդական հանրահավաք: Հանրահավաքին նախորդել է Ստեփանակերտի Սուրբ Աստվածամոր Հովանու Մայր տաճարում անցկացված հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Հայրենական մեծ պատերազմում, արցախյան առաջին, ապրիլյան և 44-օրյա պատերազմներում նահատակված հերոսների, որից հետո տեղի է ունեցել խաչերթ՝ դեպի Եղբայրական հուշահամալիր, որտեղից էլ երթի մասնակիցները ուղղվել են դեպի Վերածնունդ հրապարակ՝ միանալով հանրահավաքի մասնակիցներին:

Հանրահավաքի ժամանակ ելույթ է ունեցել նաև ԱՀ նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը: Նրա խոսքով՝ ապրիլի 23-ին Ադրբեջանը խախտեց արցախցիների կարմիր գիծը՝ դնելով անցակետ: «Պատասխանը միակն է. պետք է պայքարել, ուրիշ տարբերակ չկա, հակառակ դեպքում դու դառնում ես ստրուկ, ոչ արժանապատիվ մարդ, քո վրայով կարող են անցնել՝ ոտքերը սրբելով: Ինձ և բոլորիս համար այդ կարմիր գծերը պետք է հստակ լինեն, որովհետև մենք իրավունք չունենք թույլ տալու, որ մեր անձնագրերը ստուգի ուրիշ պետություն: Ոչ ոք չպիտի սահմանափակի մեր ազատ մուտքն ու ելքը դեպի Հայաստան: 159 օր մենք շրջափակման մեջ ենք, չունենք գազ, չունենք լույս: Դուք գիտեք Սարսանգի ջրամբարի վիճակը: Մենք ունենք բազմաթիվ խնդիրներ, բայց դիմանում ենք ու չենք ընկճվում: Այո՛, ծանր է վիճակը, բայց մենք գիտենք մի բան. այսպես ոչ մի ռեինտեգրացիայի մասին խոսք լինել

չի կարող, սա ռեօկուպացիա է, իսկ մենք թույլ չենք տալու ռեօկուպացիա ոչ մեկին»: Դիմելով ՀՀ-ում և Սփյուռքում ապրող հայերին՝ նա կոչ արեց կանգնել Արցախի կողքին. «Արցախը միայն արցախցիների համար չէ, այլ ամբողջ հայության: Արցախը չլինի՝ չի լինի հայկական աշխարհը»:

«Մենք ձեզ հետ այսօր կերտում ենք պատմություն և պատմության մեջ մենք ենք մնալու, ոչ թե վախկոտները, ոչ թե կոռումպացված մարդիկ, ոչ թե մարդիկ, որոնք անտարբեր են եղել: Մենք ենք մնալու պատմության մեջ որպես մարդիկ, որոնք կանգնել են հայոց աշխարհում ու պաշտպանել մեր արժանապատվությունը: Վստահ եմ՝ դա լինելու է այս դարերի պատմության ամենակարևոր էջը»,— խոսքը եզրափակել է Ռուբեն Վարդանյանը:

Հավելենք, որ ստորագրահավաքը շարունակվում է:

Մայիսի 13-ին Ռուբեն Վարդանյանը հայտարարել է, որ նախորդ երկու ամիսներին քաղաքական, հասարակական մի շարք ուժերի, մտավորականների, Արցախի տարբեր ոլորտների ներկայացուցիչների լայն ներգրավվածությամբ քննարկվել է Արցախի ապագայի տեսլականը, և մշակվել են ճանապարհային քարտեզներ: Դրանք ներկայացվել են Արցախի Հանրապետության նախագահին, Ազգային ժողովին ու Անվտանգության խորհրդին և բավարար հիմք են գործողությունների ծրագիր դարձնելու համար:

«Կատարված աշխատանքի արդյունքում մեծամասնությամբ եկել ենք Արցախի անվտանգության և զարգացման ճակատ ստեղծելու համաձայնության, որը պետք է դառնա համախմբման առանցքը: Եվ այս համախմբումը ոչ թե անձերի շուրջ է, ոչ թե այս կամ այն ուժի, այլ Արցախի ապագայի, ամբողջականությունը վերականգնելու և Արցախը հայկական պահելու նպատակի շուրջ: Իրավիճակն այնպիսին է, որ մենք կամ համախմբվում ենք և պարտադրելով մեր կամքը՝ անում ենք հնարավորը իրադարձությունների ընթացքը փոխելու համար, կամ տրվում ենք պառակտող, ապակողմնորոշող ու մեզ անզոր դարձնող, հետևողականորեն տարածվող նարատիվներին ու սադրանքներին: Ջոհասեղանին հայրենիքի ճակատագիրն է, ուստի անձնական նկրտումները, շահը և պաշտոնը անիմաստ են դառնում»,— իր ֆեյսբուքյան էջում գրել է Ռ. Վարդանյանը՝ հավելելով, որ առաջիկա օրերին առավել մանրամասն կխոսի Արցախի անվտանգության և զարգացման աջակցության համահայկական ճակատի մասին:

Հանրահավաք Ստեփանակերտում 9-ը մայիսի 2023 թ.

Երթ դեպի Կոնիձոր 20-ը մայիսի 2023 թ.

Ի պաշտպանություն Արցախի՝ «Կամավորական շարժում» ՀԿ-ն մայիսի 20-ին նախաձեռնել է երթ և հանրահավաք անցկացնել Կոնիձորում: «Արցախը մերն է: Արցախը Հայաստան է, Հայաստանը՝ Արցախ:

Բոլոր հայերը արցախցի են: Ոտքի՛, քանի դեռ չենք կորցրել մեր արժանապատվությունը, որպեսզի ցույց տանք ամբողջ աշխարհին, որ հայ ժողովուրդը համաձայն չէ այն ամենի հետ, ինչ փորձում են իրեն պարտադրել»,— ասվում է շարժման տարածած հաղորդագրության մեջ:

Շիա հավատացյալներ. Ադրբեջանի իրանական վախը

Ժաննա Վարդանյան
Իրանագետ

Իրան-Ադրբեջան հարաբերություններում լարվածությունը, բացի փոխադարձ պաշտոնական մեղադրանքներից ու գործողություններից, երկրներից յուրաքանչյուրում ունենում է նաև այլ դրսևորումներ: Ադրբեջանում Իրանի հետ հարաբերությունների սրման խորապատկերին ակտիվանում են շիա հավատացյալների դեմ ճնշումները, և նրանց նկատմամբ «որս» է սկսվում:

Շիա հավատացյալներին Ադրբեջանի իշխանություններն անվանում են հինգերորդ շարասյուն և ձերբակալում են պետական դավաճանության, Իրանի հատուկ ծառայությունների հետ կապերի կամ էլ թմրանյութերի ապօրինի շրջանառության մեղադրանքներով: Նրանք հիմնականում մարդիկ են, որոնք կրոնական կրթություն են ստացել Իրանում, Իսլամական հանրապետությունում այցելել են ուխտավայրեր, որպես շիայական երկիր՝ Իրանին և նրա հոգևոր առաջնորդին համարում են հեղինակություն:

Հավատացյալների նկատմամբ ճնշումներ ու ձերբակալություններ Ադրբեջանում միշտ են եղել, բայց Բաքու-Թեհրան հարաբերությունների խիստ լարված շրջափուլերում դրանք նոր թափ են առել, ինչպես, օրինակ՝ 2021, 2022 թվականներին: Նույն գործընթացը շարունակվել է նաև 2023 թվականին: Մասնավորապես հունվարի 31-ին՝ Իրանում Ադրբեջանի դեսպանատան վրա հարձակումից ընդամենը չորս օր անց, Բաքվի ուժայինները հատուկ գործողություն են իրականացրել «Salamnews» և «Interaz» լրատվամիջոցներում՝ ձերբակալելով 7 մարդու, այդ թվում՝ լրատվամիջոցների ղեկավար, Իրանում կրոնական կրթություն ստացած Մաթլաբ Բաղիրովին: Ըստ Բաքվի իշխանությունների՝ այդ լրատվամիջոցներն Իրանի քարոզչությամբ են զբաղվել[1]:

Մեկ օր անց Ադրբեջանում հայտարարեցին «իրական լրտեսական ցանցի» երեսունինը անդամի ձերբակալման մասին. այդ թվում էին նաև նախորդ օրվա 7 ձերբակալվածները: «Բացահայտումները» դրանով չսահմանափակվեցին. փետրվար, մարտ, ապրիլ, մայիս ամիսներին ևս եղան ձերբակալություններ: Ընդհանուր առմամբ՝ հունվարի վերջից մայիս ժամանակահատվածում ձերբակալվել է ավելի քան 200 հավատացյալ՝ հիմնականում կամ Իրանի օգտին լրտեսելու, կամ թմրանյութերի շրջանառության մեղադրանքներով: Ձերբակալվածների մի մասը մեղադրվում է նաև Ադրբեջանում սահմանադրության և իշխանության փոփոխության «ձգտումների» մեջ:

Մարտի վերջին Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Ֆազիլ Մուստաֆայի դեմ մահափորձից հետո ևս Բաքվում միանգամից սլաքներն ուղղեցին Իրանի կողմը: Մահափորձը կազմակերպելու մեղադրանքով ձերբակալված չորս անձանց կենսագրություններում կարմիր թելի նման շեշտվել է հավատացյալ լինելու հանգամանքը, և թե քանի անգամ են այցելել Իրան[2]: Իր «ցանցի միջոցով» պատգամավորի նկատմամբ հարձակում կազմակերպելու մեջ Իրանին մեղադրեց անգամ նախագահ Իլհամ Ալիևը:

Իրանի կրոնական ազդեցությունն Ադրբեջանում

ԽՍՀՄ փլուզումից հետո իրենց կրոնական գործունեությամբ Ադրբեջանում ակտիվացել են Պարսից ծոցի արաբական երկրները, Թուրքիան և Իրանը: Իրանի դեպքում Ադրբեջանը գրավիչ էր թե՛ պատմական կապերի և թե՛ բնակչության գերազանցապես շիա լինելու հանգամանքներով:

Ադրբեջանի անկախացումից հետո այդ երկրում քարոզչություն էին իրականացնում հենց իրանցի հոգևորականները, սակայն 1996 թվականին Ադրբեջանում օտարերկրյա հոգևորականների քարոզչությունն արգելելուց հետո Թեհրանն իր գործունեությունը շարունակեց Իրանում կրթություն ստացած ադրբեջանցիների միջոցով[3]:

Իրանի հովանավորությամբ ստեղծվեցին տարբեր կրոնական կառույցներ, կրոնաքաղաքական կուսակցություններ, կրթական հաստատություններ, որոնք հետագա տարիներին Բաքվի իշխանությունների կողմից կամ փակվել, կամ սահմանափակումների են ենթարկվել: Այսպես՝ Ադրբեջանում Իրանի վերահսկողությամբ գործել են 22 մեդրեսեներ՝ կրոնական քոլեջներ, որոնք փակվել են 2001 թվականին[4]: Ադրբեջանում Իրանն ունեցել է նաև բարեգործական հիմնադրամ, հոգևոր առաջնորդի ներկայացուցչություն, աղոթատեղի: Վերջին երկուսը փակվել են 2021-ին Իրան-Ադրբեջան հարաբերու-

թյունների լարվածության ֆոնին, իսկ «Էմդադ Խոմեյնի» բարեգործական հիմնադրամը գործունեությունը դադարեցրել է 2014-ին[5]:

Իրանի աջակցությամբ ստեղծված կրոնաքաղաքական կառույցներից են «Ադրբեջանի իսլամական կուսակցությունը», «Հեզբոլլահը», «Հոսեյնականները» և այլն: Նշված բոլոր կառույցներն ու նրանց անդամները ենթարկվել են Ադրբեջանի իշխանությունների հետապնդումներին: Այսպես՝ 1992 թ. գրանցված «Ադրբեջանի իսլամական կուսակցությունը» 1995 թվականին զրկվել է պետական գրանցումից: Մեկ տարի անց՝ 1996 թ., հայրենիքին դավաճանելու և Իրանի օգտին լրտեսելու մեղադրանքով ձերբակալվել է կուսակցության առաջնորդ Ալիաքրամ Ալիևը: 2011-ին ձերբակալվել է նաև կուսակցության նոր առաջնորդ Մովսում Սամադովը, որը հաճախ էր քննադատում Ադրբեջանի իշխանությունների կրոնական քաղաքականությունը: 2020-ին ձերբակալվել է կուսակցության ղեկավարի պաշտոնակատար Իլհամ Ալիևը, որը թեև իր նախորդից ավելի պասիվ էր ու քիչ էր քննադատում իշխանություններին, բայց արժանացավ իր համախոհների ճակատագրին: Ալիևի դեպքում ձերբակալման առիթն էր Իրանի իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի «Ղոդս» ստորաբաժանման հրամանատար Ղասեմ Սոլեյմանիի մահվանից հետո դրսևորած ակտիվությունը (Սոլեյմանիին նահատակ անվանելը, մահվան կապակցությամբ ցավակցություն հայտնելը)[6]:

Իսլամական կառույցներից «Հեզբոլլահի» անդամները ևս տարբեր տարիներին ձերբակալվել են ահաբեկչության մեղադրանքով: Կառույցն այժմ գործում է ընդհատակում և չունի հետևորդների լայն ցանց:

Ադրբեջանում մինչև օրս շարունակվում են իսլամական մեկ այլ կազմավորման՝ «Մուսուլմանական միասնություն» շարժման անդամների ձերբակալությունները: Դեռ 2015-ին շիա հավատացյալների կենտրոն Նարդարան ավանում հատուկ գործողության շրջանակներում ձերբակալվել էր շարժման առաջնորդ Թալեհ Բաղիրզադեն:

Հարկ է նշել, որ որպես ամենակրոնապաշտ ու ըմբոստ ավան, Նարդարանը միշտ եղել է Ադրբեջանի իշխանությունների ուշադրության կենտրոնում: Իրանի ազդեցությունն ավելի շատ զգացվել է հենց այս ավանում: Արտաքինից էլ Նարդարանն ավելի շուտ հիշեցրել է Իրանը պարսկերեն ու արաբերեն գրություններով կրոնական պաստառների, մարդկանց նիստուկացի, կենցաղի պատճառով: Այս ավանից են սերել տարբեր կրոնաքաղաքական կառույցներ, այդ թվում՝ «Ադրբեջանի իսլամական կուսակցությունն» ու «Մուսուլմանական միասնություն» շարժումը: Նարդարանը միշտ առաջիններից է եղել, որտեղից լսվել է իշխանությունների կրոնական քաղաքականության դեմ բողոքի ձայնը, ըստ այդմ՝ բավականին հաճախ են տեղի ունեցել բախումները ուժային կառույցների հետ: Ավանը բնութագրվել է նաև որպես «պետություն

Շիայական կրոնական դաս

պետության մեջ»: Ավանի նկատմամբ լիարժեք վերահսկողություն սահմանելու համար 2015-ի նոյեմբերին իշխանություններն այստեղ հատուկ գործողություն են իրականացրել՝ ձերբակալելով 15 մարդու, այդ թվում՝ վերը հիշատակված Թալեհ Բաղիրզադեին: Ձերբակալությունները շարունակվել են հաջորդող օրերին՝ հասնելով 200-ի: Հատուկ գործողությունն իշխանությունները պատճառաբանել են նրանով, թե իբրև «Մուսուլմանական միասնություն» շարժումը շիա հավատացյալները ստեղծել էին երկրի սահմանադրությունը փոխելու և շարիաթի կանոններ հաստատելու նպատակով[7]:

Գործողության ժամանակ ավանում վերացրել են կրոնական բովանդակության պաստառներն ու ատրիբուտները: Հատուկ գործողությունից մեկ ամիս անց Ադրբեջանի իշխանությունները հերթական փոփոխությունն են իրականացրել դավանանքի ազատության մասին օրենքում՝ արգելելով հասարակական վայրերում կրոնական բովանդակության պաստառների, դրոշների տեղադրումը՝ դա թույլատրելով միայն կրոնական կենտրոններում, ուխտավայրերում[8]: Նարդարանում հիմնվել է ոստիկանական բաժանմունք: Այս կերպ Ադրբեջանի իշխանությունները փորձել են աշխարհիկացնել Նարդարանը և հնարավորինս վերահսկելի դարձնել այն:

«Հոսեյնականները»

Իրանի հովանավորությամբ ստեղծված կրոնաքաղաքական կառույցներից ամենաակտիվը «Հոսեյնականների» (կամ «Ադրբեջանի դիմադրության ճակատ», «Հոսեյնչիներ») շարժումն է: Այս շարժումը ստեղծվել է 2015-ին Իրանում Ադրբեջանից կրոնական գործիչ Թոհիդ Իբրահիմբեյլիի[9] կողմից:

«Հոսեյնականների» կազմում ընդգրկվել են Իրանում կրթություն ստացող կամ ստացած ադրբեջանցիները: Իսլամական հանրապետության պահա-

Ցույց Նարդարանում

պանների կորպուսի (ԻՀՊԿ) և Իրանի հովանավորյալ ուժերի հետ կառույցը մասնակցել է Սիրիայում ահաբեկիչների դեմ պատերազմին: Կառույցի այն անդամները, որոնք պատերազմից հետո վերադարձել են Ադրբեջան, ձերբակալվել են, իսկ ղեկավար կազմն ու այլ անդամները բնակվում են Իրանում: Նրանք Իսլամական հանրապետության ջատագովներ են և գործունեություն են ծավալում Իրանի պաշտոնական քաղաքականության շրջանակներում:

Բաքու-Թեհրան հարաբերությունների սրման ֆոնին կառույցի անդամների անուններն ավելի հաճախակի են հայտնվում իրանական մամուլում: Ապրիլի սկզբին, օրինակ, պետական «Իրան» օրաթերթը հարցազրույց էր անցկացրել Թոհիդ Իբրահիմբեյլիի և կառույցի ղեկավարներից Օրխան Մամեդովի հետ: Հարցազրույցի ընթացքում նրանք խիստ քննադատել էին Ադրբեջանի իշխանությունների կրոնական, ինչպես նաև տարածաշրջանային քաղաքականությունը[10]:

Ադրբեջանում, սակայն, կառույցը համարվում է ահաբեկչական, իսկ նրա անդամների նկատմամբ հետախուզում է հայտարարված՝ Ադրբեջանի քաղաքացիներին զինված խմբերում ներգրավելու, Ադրբեջանի շահերին հակասող գործողությունների համար: Բաքվում «Հուսեյնականների» հետք են տեսնում նաև 2018 թ. Գյանջայի քաղաքապետի դեմ մահափորձի կազմակերպման մեջ: Ըստ Ադրբեջանի իրավապահ ծառայությունների՝ մահափորձի կազմակերպման մեջ մեղադրվող անձը 2013-2016 թթ. ընթացքում Ղոմ քաղաքում հավաքագրել և Սիրիա է ուղարկվել Թոհիդ Իբրահիմբեյլիի կողմից[11]:

2022 թ. Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարեց, որ տարիներ առաջ Իրանի իր գործընկերոջը 20 հոգանոց ցուցակ է ներկայացրել՝ պահանջելով ձերբակալել և արտահանձնել ներկայացված անձանց: Ըստ ադրբեջանական ԶԼՄ-ների՝ ցուցակում է եղել նաև «Հուսեյնականների» ղեկավար կազմը: Իրանական կողմը, սակայն, չի կատարել այդ պահանջը:

Ուշագրավ է, որ ապրիլի վերջին Իրան-Ադրբեջան լարվածության որոշակի թուլացման ֆոնին իրանական մամուլում լուրեր շրջանառվեցին Թոհիդ Իբրահիմբեյլիի և Օրխան Մամեդովի ձերբակալության և հնարավոր արտահանձնման մասին: Լուրն ադրբեջանական մամուլում միանգամից մեկնաբանվեց որպես Ադրբեջանի պահանջի կատարում, իսկ Իրանում մեծ դժոգություն առաջացրեց: Մայիսի 2-ին հայտնի դաձավ, որ կրոնական գործիչներն ազատ են արձակվել: Ըստ պաշտոնական «Իրան» օրաթերթի լրագրող Մոհամմադ Մոթլաղի՝ նրանք ազատ են արձակվել (ԻՀՊԿ) միջամտության շնորհիվ:

Ազատ արձակվելուց մեկ օր անց տեսաուղերձով է հանդես եկել Թոհիդ Իբրահիմբեյլին՝ նշելով, որ շարժման հասցեին Ադրբեջանի մի շարք մեղադրանքների ուսումնասիրության համար «11 օր Իրանի ուժային կառույցների հյուրն էին»: Իբրահիմբեյլիի ու Մամեդովի ազատ արձակումից հետո ադրբեջանական մամուլը գրեց, որ Իրանը հրաժարվել է հանձնել նրանց Ադրբեջանին:

Չնայած դրան՝ մայիսի 3-ին նախագահ Իլհամ Ալիևը կրկնել է արտահանձնման պահանջը: Նա շեշտել է, որ հարաբերությունների կարգավորման համար Ադրբեջանն Իրանից պահանջներ ունի, որոնց թվում է «Իրանում ապաստանած ահաբեկիչների արտահանձնումը»[12]:

Այս պայմաններում կրոնական գործիչների ձերբակալությունը կարող է մեկնաբանվել երկու ձևով. կամ դա Բաքվին ուղղված ժեստ էր, կամ Թեհրանում որոշ շրջանակների մոտ նրանց արտահանձնելու ցանկություն է եղել, որը չի իրականացել հանրային մեծ աղմուկի և ԻՀՊԿ միջամտության պատճառով: Իսկ արտահանձնումն ԻԻՀ դեպքում նշանակելու էր հեռացում իր իսկ հայտարարած արժեքներից ու սկզբունքներից, ինչպես նաև հեղինակության կորուստ՝ հենց Ադրբեջանի շիաների շրջանում: Այս համատեքստում ուշագրավ է, որ ձերբակալությունից հետո ունեցած տեսաուղերձում Օրխան Մամեդովն էլ Ադրբեջանի շիաներին կոչ էր արել «անձնապաշտ չլինել»՝ ընդգծելով, որ «իրենց հետ ինչ էլ տեղի ունենա, շիաները չպետք է ընկրկեն իրենց հավատի հարցում ու Իսլամական հանրապետության նկատմամբ վատատես դառնան»[13]:

Բաքվի փորձերը՝ ինքնաբավ դառնալ կրոնի հարցում

Օտար երկրների, այդ թվում՝ Իրանի կրոնական ազդեցությունը նվազեցնելու նպատակով Ադրբեջանի իշխանությունները տարիների ընթացքում մի շարք նոր քայլեր են ձեռնարկել: 2016 թ. կրոնական կառույցների հարցերով պետական կոմիտեի նախագահ Մուբարիզ Ղուրբանլին հարցազրույցներից մեկում նշել էր, որ կրոնական ծայրահեղ խմբավորումների դեմ պայքարի մի քանի ուղղություն կա[14].

-օրենսդրական դաշտում՝ ուժայինների միջոցով.

- տնտեսական դաշտում՝ այդ խմբավորումների մոտ անօրինական ֆինանսական միջոցների ձեռքբերման և դրանով ադրբեջանցի երիտասարդներ հավաքագրելու դեմ պայքարով.

- գաղափարական և քարոզչական դաշտում, որտեղ Կովկասի մուսուլմանների վարչությունը (ԿՄՎ) պետք է ակտիվ համագործակցի ՋԼՄ-ների հետ, կազմակերպի ճանաչողական սեմինարներ:

Պետք է նշել, որ Ադրբեջանում օտարերկրացի կրոնական գործիչներին, իսկ հետագայում նաև արտասահմանում կրթություն ստացած ադրբեջանցիներին քարոզելն արգելելը (2009) հանգեցրել էր նրան, որ Ադրբեջանում չկային բավարար թվով հոգևորականներ, որոնք կկարողանային աշխատել մարդկանց հետ նրանց «պաշտոնական իսլամի» շրջանակներում պահելու համար: Այս խնդիրը, ի վերջո, հանգեցրեց նրան, որ Ադրբեջանում կրկին փոփոխություններ նախաձեռնեցին դավանանքի ազատության մասին օրենքում՝ Կովկասի մուսուլմանների վարչության հրավերի դեպքում արտասահմանցի կրոնական գործիչներին թույլատրելով քարոզել Ադրբեջանում: Նոր փոփոխություններով նախատեսվեց արտասահմանում ապրող Ադրբեջանի քաղաքացիներին ևս թույլատրել իշխանությունների հետ համաձայնեցման պարագայում քարոզ իրականացնել երկրում[15]:

- Կադրերի պակասը լրացնելու համար Ադրբեջանում սկսում են հիմնել նաև կրոնական քոլեջներ: Ադրբեջանում այլ երկրների, ինչպես նաև Իրանի հովանավորությամբ գործող մեդրեսեները փակելուց հետո՝ 2017 թ. դրությամբ, երկրում գործում էր ընդամենը 3 մեդրեսե՝ այն էլ ԿՄՎ-ի ենթակայությամբ: Նույն տարում նախագահ Իլհամ Ալիևի հրամանով հիմնվել է 8 մեդրեսե: Նոր մեդրեսեների բացմամբ Ադրբեջանի իշխանությունները փորձում են պատրաստել սեփական կադրերին, որոնք կիրականացնեն իրենց ցանկացած քարոզչությունը: Սակայն 2017-ին այդ քոլեջներում ընդունելություն չի անցկացվել դասավանդող անձնակազմի և շենքերի ոչ լիարժեք պատրաստ լինելու պատճառով[16]:

- Իսլամական քոլեջների ստեղծման մասին Ադրբեջանում հայտարարել են նաև 2019, 2022 թվականներին: Նախատեսվում է, որ քոլեջները հաջողությամբ ավարտողները կրթությունը շարունակելու են Աստվածաբանության ինստիտուտում, որտեղ ընդունելության համար 50 տեղ է հատկացված, քոլեջներում՝ 15-ն է:

Աստվածաբանության ինստիտուտը ևս նորարարությունների թվում է: Այն փոխարինում է Բաքվի իսլամական համալսարանին, որը փակվել է 2018 թվականին: Աստվածաբանության ինստիտուտում արդեն կրթում են ոչ միայն իսլամի, այլև այլ կրոնների մասնագետների: «Ադրբեջանը բազմակրոն երկիր է և ոչ միայն իսլամի, այլև այլ կրոնների համար էլ են կադրեր անհրաժեշտ: Ըստ ադրբեջանական օրենքի՝ երկրի կրոնական հաստատություններում աշխատող անձինք պետք է լինեն Ադրբեջանի քաղաքացիներ և կրթություն ստանան Ադրբեջանում», — հայտարարել էր կրոնական կառույցների հարցերով պետական կոմիտեի նախագահ Մուբարիզ Ղուրբանլին[17]: Այս փոփոխությունն իր հերթին վկայում է ոչ միայն իսլամի, այլև այլ կրոնական շրջանակների գործունեությունը պետական շրջանակներում պահելու՝ Բաքվի ջանքերի մասին:

Չնայած քոլեջների ստեղծմանը կամ ստեղծելու մտադրություններին՝ դրանց կադրերը դեռ չեն բավարարում, հատկապես այն պայմաններում, երբ «Իրանի լրտեսը» լինելու պատրվակներով պաշտոնանկ են արվում մզկիթների սպասավորները: 2022-ին մզկիթներում սպասավոր նշանակելու լիազորությունը Կովկասի մուսուլմանների վարչությունից փոխանցվում է կրոնական կառույցների հարցերով կոմիտեին: 2023-ին կոմիտեի նախագահը հայտնում է, որ լիազորությունը ստանձնելուց հետո մեկ տարվա ընթացքում 118 մարդու պաշտոնից ազատել են: «Իրանական ռեժիմը փորձում է իր մարդկանց ներդնել Ադրբեջանի մզկիթներում: Նա ջանում է Ադրբեջանում տարածել պետական կրոնի իր մոդելը: Ադրբեջանում քարոզչություն իրականացնելու համար Իրանը նաև սոցցանցային արշավներ է իրականացրել: Նման ապակառուցողական գործունությունը կանխելու և հակազդելու համար մասշտաբային աշխատանք է տարվել»,— ապրիլին հայտարարել է Ղուրբանլին[18]: Կրոնի հարցում իրանական ցանկացած ազդեցությունից ազատվելու համար Ադրբեջանում աշխատանքից հեռացնում են այն սպասավորներին, որոնք իսլամական ծիսակարգերն ու տոներն անցկացնում են ըստ իրանական կողմի հաստատած ամսաթվերի[19]: Այս պայմաններում կադրերի պակասը լրացնելու համար 2023 թվականից Ադրբեջանում սկսել են ներգրավել նաև կանանց՝ մզկիթներում կրոնական արարողությունները ղեկավարելու համար[20]:

Ուշադրության է արժանի նաև կրոնական կոմիտեի լիազորությունների ընդլայնման և Կովկասի մուսուլմանների վարչության լիազորությունների կրճատման հանգամանքը: Սա այն պարագայում, երբ վարչությունը ևս գործում է իշխանությունների հետ սերտ համագործակցությամբ և առաջ է տանում նրանց քարոզչությունը: Այնուամենայնիվ, վարչության լիազորությունների կրճատումը նշանակում է, որ կառույցի նկատմամբ կա առնվազն անվստահություն: Դրա շարժառիթներից կարող է լինել 2021-ին վարչության ղեկավար Ալլահշյուքուր Փաշազադեի հայտարարությունն առ այն, որ պատերազմում Ադրբեջանի հաղթանակում մեծ դեր ունեցավ Իրանի հոգևոր առաջնորդի ֆեթվան[21] այն մասին, որ «Ղարաբաղն իսլամական հող է»: Հարկ է նշել, որ թեև այս արտահայտությունը շատ է վերագրվում Իրանի հոգևոր առաջնորդին, սակայն գործնականում դա ապացուցող որևէ փաստ չկա[22]: Այնուամենայնիվ, Փաշազադեի հայտարարությունն Ադրբեջանում մեծագույն դժգոհությամբ ընդունվեց, և

իշխանական բոլոր քարոզչական ՋԼՄ-ները լծվեցին նրա դեմ արշավին: Հետագայում Փաշազադեն իր այս սխալը չկրկնեց և արեց միայն իշխանահաճո հայտարարություններ, իսկ Իրան-Ադրբեջան հարաբերությունների լարման ֆոնին՝ նաև խիստ հակաիրանական ու իր նախկին հայտարարությանը հակասող հայտարարություններ:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ հակաիրանական քարոզչության ճանապարհով Բաքուն ցանկանում է ազատվել ցանկացած իրանական երևույթից՝ սկսած կրոնական ազդեցությունից մինչև այն մարդիկ, որոնք Իրանին թշնամի չեն համարում:

Ըստ էության, արցախյան 2020 թ. պատերազմից հետո Իրան-Ադրբեջան հարաբերություններում մեկնարկած լարվածությունը հանգեցրել է նաև Ադրբեջանում շիա հավատացյալների նկատմամբ նոր ճնշումների, կրոնական նոր սահմանափակումների: Ադրբեջանը այնքան է ուժգնացրել հակաիրանական քարոզչությունը, որ երկրում չի հանդուրժում Իրանի նկատմամբ դրական վերաբերմունք, իսկ նրանք, ովքեր համակրում են Իսլամական հանրապետությանը, արժանանում են հալածանքների և ձերբակալությունների:

Իրանի հետ իր քաղաքացիների շփումները սահմանափակելու համար կորոնավիրուսի պատրվակով Ադրբեջանը նաև չի բացում երկրի ցամաքային սահմանները:

Հանրահավաք Նարդարանում

Ծանոթագրություններ

1 Владелец агентств Salamnews и InterAz, где были проведены задержания, является иранским пропагандистом, https://minval.az/news/124303077 , minval.az, 31.01.2023, հասանելի է 04.05.2023:

Fazil Mustafaya sui-qəsd edənlərin kimliyi bəlli oldu, https://qaynarinfo.az/az/fazil-mustafaya-sui-qesd-edenlerin-kimliyi-belli-oldu-adlar-foto, Qaynarinfo.az, 03.04.2023, հասանելի է 04.05.2023:

Svante E. Cornell, The politicization of Islam in Azerbaijan, էջ 43:

4 Փաշայան Ա., Իսլամն Ադրբեջանում, Երևան, 2014, էջ 91:

5 İmam Xomeyni adına İmdad Komitəsinin Azərbaycan nümayəndəliyi fəaliyyətini tam dayandırdı, Trend.az, https://az.trend.az/azerbaijan/society/2235034.html, 28.01.2014, հասանելի է 04.05.2023:

6 Վարդանյան Ժ., Իրանի արձագանքները Ադրբեջանում շիա զոհի բանտարկմանը. շիիզմը Թեհրան-Բաքու հարաբերություններում, Armenpress.am, https://armenpress.am/arm/news/1008196.html?fbclid=IwAR30IeD7ye_oPgcQ8gyzJsN8Bw-jdNvhKcT3hqVFiIQ5GsBKphcv3ANDCH8, 11.03.2020, հասանելի է 04.05.2023:

7 Վարդանյան Ժ., Սուքիասյան Ս., Հովհաննիսյան Տ., Նարդարան. Ադրբեջանի շիաների ըմբոստ ավանը երեկ և այսօր, Ռազմաքաղաքական հանդես - Ադրբեջան, «Զորական» գիտակրթական հիմնադրամ, Երևան, 2018, էջ 153-157:

8 «Dini etiqad azadlığı haqqında» Azərbaycan Respublikasının Qanununda dəyişikliklər edilməsi barədə, e-qanun.az, https://e-qanun.az/framework/31521 , 04.12.2015, հասանելի է 04.05.2023:

9 Իբրահիմբեյլին ժամանակին Ադրբեջանում ղեկավարել է նաև «Պայքարող հոգևորականներ» շարժումը:

رسانه های صهیونیستی در آذربایجان درباره ایران نفرت پراکنی می کنند https://www.magiran.com/article/4398382, 09.04.2023, հասանելի է 04.05.2023:

11 Elmar Vəliyevin həyatına sui-qəsd törətmiş Yunis Səfərovla bağlı yeni faktlar üzə çıxıb, saxlanılanlar var, Trend.az, 15.07.2018, https://az.trend.az/azerbaijan/incident/2929348.html, հասանելի է 02.05.2023:

12 İlham Əliyev Şuşada Heydər Əliyevin 100 illiyinə həsr olunmuş beynəlxalq konfransda, https://oxu.az/politics/725102, Oxu.az, 04.05.2023, հասանելի է 04.05.2023:

13 Şeyx Orxan Məmmədov və Şeyx Tohid İbrahimbəylinin saxlanılmasına açıqlama., https://www.youtube.com/watch?v=YUtuzMNXZrU&t=408s, 03.05.2023, հասանելի է 04.05.2023:

14 Председатель о борьбе с радикалами, Ann.az, 21.06.2016, https://bit.ly/2VqTnHM, հասանելի է 04.05.2023:

15 Азербайджанские депутаты взялись за религию, Sputnik-Azerbaijan, 24.04.2017, https://bit.ly/2vWDzSK, հասանելի է 04.05.2023:

16 Azərbaycanda yeni yaradılan İslam kollecləri bu il tələbə qəbulu apara bilməyib, Report.az, 18.09.2017, https://bit.ly/2VAy9Mu, հասանելի է 04.05.2023:

17 Мубариз Гурбанлы о закрытии Бакинского исламского университета, https://www.trend.az/azerbaijan/society/2957263.html, trend.az, 27.09.20218, հասանելի է 04.05.2023:

Иранский режим пытался внедрить своих людей в мечети Азербайджана – Мубариз Гурбанлы, https://www.trend.az/azerbaijan/society/3731775.html, trend.az, 06.04.2023, հասանելի է 04.05.2023:

19 برکناری امام جماعت مسجد شهر ایمیشلی در جمهوری آذربایجان, https://bit.ly/42japei, Qafqaz.ir, 07.05.2023, հասանելի է 08.05.2023:

20 Daha 5 qadın dini ayin icraçısı məscidlərə təyinat alıb, https://report.az/dini-xeberler/daha-10-qadin-dini-ayin-icracilari-mescidlere-teyinat-alib/, report.az, 14.04.2023, հասանելի է 04.05.2023:

21 Իսլամում բարձրագույն հոգևոր անձի վճիռ որևէ իրադարձության, երևույթի վերաբերյալ:

22 جمله « قره باغ، خاک جهان اسلام است» از مقام معظم رهبری نیست, http://azariha.org/679/, Azariha.org, 04.04.2016, հասանելի է 04.05.2023:

Թուրքիայում կայանալիք նախագահական ընտրությունները և ԱՄՆ դիրքավորումը

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

Սույն հոդվածը պատրաստ էր տպագրության, դեռևս Թուրքիայում տեղի ունեցած նախագահական և խորհրդարանական ընտրությունների նախօրյակին: Այնուամենայնիվ մենք նպատակահարմար գտանք նշված ընտրությունների առաջին փուլից հետո հոդվածը հրապարակել այնպես, ինչպես այն նախապես գրված էր, որպեսզի ընթերցողը հնարավորություն ունենա գնահատելու հոդվածում ներկայացված քաղաքական տարբեր կանխատեսումների հիմնավորվածությունը:

«Դրոշակ»

ARMENIAN CENTER FOR AMERICAN STUDIES

Թուրքիայում կայանալիք ընտրությունների առաջատար թեկնածուները

Մայիսի 14-ին Թուրքիայում տեղի կունենան նախագահական ընտրություններ, որոնք համընկնում են Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի աշխարհիկ հանրապետության հիմնադրման 100-ամյակի հետ: Ենթադրվում է, որ Թուրքիայի նախագահական և խորհրդարանական այս ընտրությունները կդառնան Էրդողանի 20-ամյա կառավարման համար ամենաթեժ մրցավազքը, քանի որ երկիրը պայքարում է տարիների տնտեսական խնդիրների և ավերիչ երկրաշարժի հետևանքների դեմ: Այս ընտրությունների արդյունքները նաև էական ազդեցություն կունենան Թուրքիա-Արևմուտք հարաբերությունների հետագա ընթացքի վրա:

Այս ընտրություններում Էրդողանի հիմնական հակառակորդն է «թուրք Գանդի» մականունը կրող Քեմալ Քըլըչդարօղլուն և վերջինիս թիկունքում կանգնած ընդդիմությունը, որը մեծ փոփոխություններ է խոստանում: Հարցումների արդյունքներով Քըլըչդարօղլուն առաջատար դիրքերում է, սակայն Էրդողանը կոշտ ընտրապայքար է տանում՝ իր թիկունքում ունենալով պետական ինստիտուտների ողջ հզորությունը: Ի վերջո, Էրդողանը երկրի ղեկին է դեռ 2003 թ., իսկ նախագահի պաշտոնում՝ 2014 թ. և դեռ շարունակում է զգալի աջակցություն վայելել երկրի ներսում:

Թուրքիայում մի զգալի ընտրազանգված կարծում է, թե Էրդողանն ամենալավ թեկնածուն է Թուրքիան ղեկավարելու համար: Եվ չնայած «Metropoll»-ի կողմից վերջերս անցկացված հարցումը ցույց է տվել, որ 43,5%-ը կարծում է, որ կքվեարկի Էրդողանի օգտին, մինչդեռ 51,6%-ը ասում է, թե չի քվեարկի նրա օգտին՝ նեոսմանիզմի և իսլամիզմի յուրահատուկ համադրությամբ Էրդողանը Թուրքիային անկասելի հզորացող տերության իմիջ է հաղորդում: Այս իսկ պատճառով «Արդարություն և զարգացում» կուսակցության համար Էրդողանը միակ մարդն է, որը կարող է «Թուրքիան կրկին հզոր դարձնել»[1]:

Այնուամենայնիվ, սոցհարցումների արդյունքներով Քըլըչդարօղլուն միանիշ թվով առաջ է անցնում Էրդողանից, ինչը նշանակում է, որ հնարավոր է նաև ընտրությունների երկրորդ փուլ տեղի ունենա: Այս պարագայում երկրորդ փուլով հաղթելու Էրդողանի շանսերն ավելի բարձր են գնահատվում՝ հաշվի առնելով երրորդ թեկնածուների մասնակցությունը:

Ի տարբերություն սոցհարցումների, փորձագիտական շրջանակները առավել մեծ են գնահատում Էրդողանի շանսերը՝ հաշվի առնելով այն վարչական լծակները, որոնց տիրապետում է ներկայիս նախագահը:

Էրդողանի օրոք Թուրքիան ամրապնդել է իր դիրքերը Արևելքում և ընդհանուր առմամբ դարձել կարևոր աշխարհաքաղաքական դերակատար՝ ներգրավվելով Սիրիայի հակամարտությունում, հարձակվելով քուրդ զինյալների դեմ Իրաքի տարածքում և ռազմական աջակցություն տրամադրելով Լիբիային ու Ադրբեջանին: Թուրքիան Էրդողանի օրոք ունեցել է նաև մի շարք դիվանագիտական բախումներ տարածաշրջանային պետությունների՝ Սաուդյան Արաբիայի, Եգիպտոսի, Արաբական Միացյալ Էմիրությունների և Իսրայելի հետ, ինչպես նաև համառ դիմակայություն՝ Հունաստանի և Կիպրոսի հետ՝ Արևելյան Միջերկրականի ծովային սահմանների շուրջ մինչև այն պահը, երբ երկու տարի առաջ նա փոխեց դիրքորոշումը՝ ձգտելով մերձեցման իր որոշ մրցակիցների հետ[2]:

Սրանց զուգահեռ Էրդողանի դիրքերը սկսել են թուլանալ, և քաղաքական դիրքերի թուլացման պատճառը ներկայում երկրի ներսում տիրող ծանր տնտեսական և սոցիալական վիճակն է: Դեռ ավելին՝ զգալի ընտրազանգվածի համար Էրդողանն է պատասխանատու Թուրքիան ավտորիտար տերություն դարձնելու և տնտեսական ծանր կացության մեջ դնելու համար: Անցյալ տարվա նոյեմբերին գնաճը հասել էր 24 տարվա ամենաբարձր մակարդակին՝ 85,5%-ին: Էրդողանի քաղաքական հաշվարկներն ավելի բարդացան այն բանից հետո, երբ երկու ավերիչ երկրաշարժեր տեղի ունեցան երկրի հարավարևելյան տասը նահանգներում: Աղետի հետևանքով ավերվեցին խոշոր քաղաքներ՝ անմիջականորեն ազդելով մոտ 10 միլիոն մարդու վրա: Ըստ Թուրքիայի պաշտոնական տեղեկատվության՝ մահերի թիվը գերազանցում է 46.000-ը[3], սակայն որոշ գնահատականների համաձայն՝ այդ թիվը կարող է հասնել 100.000-ի և շատ ավելի վիրավորների: Հասարակության զայրույթն աճում է: Զայրույթն ուղղված է կառավարության դանդաղ և ակնհայտորեն քաղաքականացված արձագանքին, որն առաջնահերթություն է տալիս Էրդողանի հեղինակությանը հասցվող վնասների սահմանափակման հարցին, քան կյանքեր փրկելուն[4]:

Էրդողանի գլխավոր հակառակորդը Քեմալ Քըլըչդարօղլուն է, որը ժողովրդահանրապետական կուսակցության («CHP») առաջնորդն է: Վերջինս դաշինք է կազմել 6 ընդդիմադիր կուսակցությունների հետ, որոնք միավորել են ուժերը՝ ձգտելով գրավել ավելի մեծ ընտրազանգվածի[5]: Քըլըչդարօղլուն ունի նաև Թուրքիայի քրդամետ ժողովրդական դեմոկրատական կուսակցության (HDP-ի) ոչ պաշտոնական աջակցությունը, որը խորհրդարանում առաջադրվում է մեկ այլ կուսակցության՝ «Կանաչ ձախերի» դրոշի ներքո, քուրդ զինյալների հետ կապերի պատճառով:

Քըլըչդարօղլուի գլխավորած «Ազգի դաշինքը» իր քաղաքական ծրագիրը ներկայացրել է 2023 թ. փոխըմբռնման հուշագրի տեսքով, որում առանձնացվում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական առաջնահերթություններ: Ներքին փոփոխությունների թվում են վերականգնել Թուրքիայի խորհրդարանական համակարգը՝ վերացնելով պետության ղեկավարի վետոյի իրավունքը օրինագծերի վրա, խզել կուսակցական պատկանելության և պաշտոններ ստանալու միջև կորելացիան, երկու տարվա ընթացքում գնաճը հասցնել 10%-ից ցածր մակարդակի և սիրիացի փախստականներին կամավոր ուղարկել Սիրիա (քանզի Թուրքիան ներկայում ընդունել է մոտ 3,6 միլիոն սիրիացի փախստականների)[6]:

Արտաքին քաղաքական խոստումները ոչ պակաս հետաքրքրական են: Մասնավորապես՝ ընտրվելու պարագայում ընդդիմությունը իր նպատակների թվում առանձնացնում է ԵՄ ինտեգրման գործընթացի վերսկսումը՝ ԵՄ անդամ դառնալու նպատակով: Ընդդիմությունը նաև պատրաստվում է հետևել

Քըլըչդարողլուի նախընտրական երթը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ընդունված որոշումներին, որը կենթադրի նաև մի շարք քաղբանտարկյալների ազատ արձակումը: ԱՄՆ հարաբերությունների առումով ընդդիմությունը ցանկանում է կառուցել հարաբերություններ՝ հիմված այն գաղափարի վրա, որ «երկու կողմերն էլ հավասար են և առաջ են մղում փոխադարձ վստահության վրա հիմված դաշինքային հարաբերություններ»: Ընդդիմությունը նաև ցանկանում է Թուրքիային նորից դարձնել ԱՄՆ «F-35» ծրագրի մաս, որից Թուրքիան հեռացվել էր Ռուսաստանի S-400 հրթիռային համակարգերի գնումից հետո[7]:

ԱՄՆ դիրքավորումը Թուրքիայի ընտրություններում

ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների մասին խոսելիս պետք է արձանագրել մի փաստ, որ քաղաքական և քաղաքագիտական շրջանակները Թուրքիային այդուհանդերձ համարում են ռազմավարական դաշնակից: Վատ դաշնակից, բայց այնուամենայնիվ դաշնակից: Այս շրջանակներում կարծիք կա, որ Թուրքիան մի յուրօրինակ «անառակ որդի» է, որը հեռացել է, սակայն մի օր, անպայման, վերադառնալու է ՆԱՏՕ-ի և Արևմուտքի «մեծ ընտանիք» և այդ ուղղությամբ Վաշինգտոնը պետք է ակտիվ աշխատի: Կա նաև պնդում առ այն, որ էրդողանական Թուրքիան ձգտում է մինիմալիզացնել արևմտյան հավաքական ազդեցությունն իր և իր տնտեսության վրա, ինչի նպատակը հնարավորինս ազատ գործողությունների հնարավորությունն է Մերձավոր Արևելքում, Հարավային Կովկասում, Միջին Ասիայում, Ռուսաստանի հետ հարաբերություններում և այլն: Այս շրջանակների մեջ էլ կա դիրքավորում, որ պետք է աշխատել Թուրքիայի հետ՝ կանխելով հարաբերությունների վերջնական վատթարացումը: Ասերկբա է, որ հավաքական Արևմուտքի համար առավել նախընտրելի է Թուրքիայում ունենալ արևմտամետ գործիչ, որի հետ հնարավոր կլիներ աշխատել առանց լրացուցիչ գլխացավանքների:

Այդ քաղաքականության ազդակներից մեկը ԱՄՆ ներկայիս նախագահ Բայդենի հայտարարությունն էր, որը բավական տարածում գտավ Բայդենի

նախագահական քարոզարշավի ժամանակ, թեև արվել էր դեռ 2019 թ. դեկտեմբերի 16-ին, մինչ նրա՝ նախագահի դեմոկրատական թեկնածու դառնալը: Մասնավորապես նա հայտարարել էր. «Կարծում եմ Էրդողանի նկատմամբ պետք է միանգամայն այլ մոտեցում ցուցաբերել՝ պարզ դարձնելով, որ մենք աջակցում ենք ընդդիմությանը»: Ըստ Բայդենի՝ Էրդողանը պետք է «պատասխան տա», և Վաշինգտոնը պետք է քաջալերի թուրքական ընդդիմության առաջնորդներին, որպեսզի «կարողանան պայքարի դուրս գալ և տապալել Էրդողանին ոչ թե հեղաշրջմամբ, այլ ընտրական գործընթացի միջոցով»[8]:

Մեկ այլ ազդակ էր նաև այն, որ ԱՄՆ հանրապետական կուսակցության առավել ագրեսիվ և ծանրակշիռ թևը՝ ի դեմս Ջոն Բոլթոնի, Ջեբ Բուշի և այլ գործիչների, ձևավորել է, այսպես կոչված, «թուրքական ժողովրդավարության նախագիծը», որը Թուրքիայում համարում են ընդգծված հակաէրդողանական շարժում: Այսինքն՝ ԱՄՆ քաղաքական դաշտում յուրահատուկ կոնսենսուս կա առ այն, որ Թուրքիան ԱՄՆ-ին հարկավոր է առանց Էրդողանի՝ առավել արևմտամետ և կախյալ քաղաքական ղեկավարությամբ:

Այս ազդակները դարձան ԱՄՆ քաղաքականության մաս, երբ էրդողանական Թուրքիան արդեն երկրորդ անգամ չհրավիրվեց նախագահ Բայդենի առաջնորդությամբ կազմակերպված ժողովրդավարության գագաթնաժողովին, մինչդեռ հրավիրված էին այնպիսի ավտորիտար պետություններ, ինչպիսիք են Իրաքն ու Պակիստանը: Թուրքիային չհրավիրելը պայմանավորված էր այն փաստով, որ ԱՄՆ վարչակազմը չէր ցանկանում քայլեր ձեռնարկել, որոնք կմեկնաբանվեին որպես աջակցություն Թուրքիայի ներկայիս ղեկավարին, որը դարձել է «ժողովրդավարության համաշխարհային անկման խորհրդանիշներից մեկը»[9]: Այդուհանդերձ, գագաթնաժողովներին չհրավիրվելը կապված էր ոչ միայն Թուրքիայի՝ ժողովրդավարության վերաբերյալ խնդիրների, այլև, ընդհանուր առմամբ, Էրդողանի օրոք ԱՄՆ-Թուրքիա վատթարացող հարաբերությունների հետ:

Այս և մի շարք այլ պատճառներով Միացյալ Նահանգների շահերից է բխում ունենալ դեմոկրատական Թուրքիա: Տարածաշրջանային հակառակորդները, ինչպիսիք են Ռուսաստանը և Իրանը, ավելի համարձակ կդառնան, եթե Թուրքիան շարունակի հեռանալ Արևմուտքից: Թուրքիայի ժողովրդավարական կառավարման և ինստիտուտների վերակառուցումը, ի վերջո, կախված կլինի ժողովրդից և երկրի ապագա ղեկավարներից: Ուստի այդ է պատճառը, որ այժմ Միացյալ Նահանգները մեծապես աջակցում է Թուրքիայում անցկացվելիք ընտրությունների ազատ և արդար լինելուն: Թուրքիան արդեն հեռանում է ՆԱՏՕ-ի ուղեծրից և ավելի ու ավելի է մոտենում Վլադիմիր Պուտինի Ռուսաստանին: Էրդողանը նաև սպառնում է Արևելյան Միջերկրական ծովի կայունությանը և անվտանգությանը՝ ներկայացնելով ստորջրյա գազի հետախուզման լայն պահանջներ և թշնամանալով ՆԱՏՕ-ի դաշնակիցների հետ: Նա սպառնում է Սիրիայի կայունությանը՝ սպառնալով նոր ռազմական ներխուժումներ սկսել Սիրիայի քրդերի դեմ: Եթե Թուրքիան կրկին դառնա արևմտյան դաշինքի համակարգի վստահելի և անբաժանելի մասը, ապա պետք է տեղի ունենա ժողովրդավարական փոփոխություն, որը կապահովի Էրդողանի հեռանալը[10]:

Ի հակադրություն Էրդողանի, ելնելով Թուրքիայի ընդդիմադիր կուսակցությունների հայտարարություններից՝ կարելի է եզրակացնել, որ վերջիններս առավել քիչ հակված կլինեն անել հայտարարություններ կամ ստանձնել քայլեր, որոնք կվտանգեն ԱՄՆ-ի և եվրոպական երկրների հետ հարաբերությունները: Կան մի քանի ուղղություններ, որոնց դեպքում Թուրքիայի հիմնական քաղաքականությունը լուրջ փոփոխության չի ենթարկվի, ինչպես, օրինակ՝ Սիրիա և Իրաք, Հունաստան և Կիպրոս, ինչպես նաև՝ Ռուսաստան և Ուկրաինա: Այդուհանդերձ Արևմուտքում կա ակնկալիք, որ անգամ այս ուղղություններով Թուրքիայի նոր ղեկավարությունը պակաս հակված կլինի այնպիսի քաղաքականություն իրականացնել, որը կվատթարացնի Արևմուտքի հետ հարաբերությունները, ինչպես, օրինակ՝ նոր ռազմական օպերացիաներ հյուսիսային Սիրիայում կամ Արևելյան Միջերկրականում[11]:

Այսպիսով՝ Արևմուտքի համար առավել նախընտրելի է ընդդիմադիր թեկնածուի հաղթանակը, որը կվարի առավելապես Արևմուտքի շահերից բխող քաղաքականություն՝ ապահովելով մի քանի հնարավոր դրական զարգացումներ: Նախ՝ Արևմուտքում կան սպասելիքներ, որ Արևմուտքի հետ առավել սերտ հարաբերություններ ունեցող Թուրքիան թույլ չի տա Ռուսաստանին շրջանցել արևմտյան պատժամիջոցները: Երկրորդ՝ Անկարան կարող է համաձայնել Շվեդիայի անդամակցությանը ՆԱՏՕ-ին: Երրորդ՝ Անկարան կարող է մեծացնել իր ռազմական ներգրավածությունը ՆԱՏՕ-ի օպերացիաներում: Չորրորդ՝ նա կարող է որոշել վերջ տալ ռուսական «S-400» համակարգերի օգտագործմանը: Եվ հինգերորդ՝ հաշվի առնելով նախորդ կետը՝ Թուրքիան կարող է ներգրավվել ՆԱՏՕ-ի հետ համատեղ հրթիռային պաշտպանական համակարգերի ձեռքբերման կամ ստեղծման քննարկումներում: Այս ամենի արդյունքում Թուրքիան այլ քաղաքական ընկալում կստանա ԱՄՆ-ի, ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի կողմից: Սակայն անգամ այս լավատեսական կանխատեսումների պարագայում, կան մի շարք խնդիրներ և մարտահրավերներ, որոնք կդժվարացնեն գործընթացի իրականացումը, ինչպես, օրինակ՝ հնարավոր տարաձայնությունները ընդդիմադիր կուսակցությունների ներսում, նոր նախագահի և խորհրդարանի փոխհարաբերությունները, կանխատեսելի առարկությունները Մոսկվայի կողմից, հա-

կաարևմտյան և հակաեվրոպական տրամադրությունները Թուրքիայի քաղաքական ասպարեզում և եվրոպական երկրների շրջանում Թուրքիայի նոր իշխանության նկատմամբ միասնական քաղաքականության բացակայությունը[12]:

Դեռ ավելին, ընդդիմության հաղթանակի դեպքում բարդ կլինի ասել, թե Քըլըչդարօղլուն ինչպիսի ղեկավար կլինի, քանի որ վերջինիս «Ազգային դաշինքը» կազմված է գաղափարապես իրարից տարբեր վեց կուսակցություններից, որոնց միավորում է Էրդողանի նկատմամբ ատելությունը[13]:

Միևնույն ժամանակ պետք չէ թերագնահատել Էրդողանի քաղաքական կշիռն ու ազդեցությունը Թուրքիայում: Վերջինս կարող է հաղթել առանց քվեարկությունը կեղծելու: Նա կարող է նաև երաշխավորել իր հաղթանակը՝ արգելելով ընդդիմադիր ամենահզոր թեկնածուների գործունեությունը և օգտագործելով Թուրքիայի ընտրական համակարգի վրա իր զգալի վերահսկողությունը: Եթե Էրդողանը զգա, որ պարտվելու է, չպետք է ակնկալել, որ նա հանգիստ կհեռանա: Եթե նա կորցնի պաշտոնը, ապա ամենայն հավանականությամբ՝ կոռուպցիայի մեղադրանքներ կառաջադրվեն ոչ միայն վերջինիս, այլ նաև իր ընտանիքի բազմաթիվ անդամների և մերձավոր շրջապատի նկատմամբ: Եթե պարտությունը անխուսափելի լինի, դատավորները և ընտրական գործընթացում ներգրավված Էրդողանին հավատարիմ պաշտոնյաները կարող են տապալել արդյունքները, ինչպես նրանք փորձեցին անել՝ չեղյալ համարելով Ստամբուլի քաղաքապետի ընտրությունների արդյունքները 2019 թ.: Նա նաև կարող է գործարկել ոստիկանությունը և զինված ուժերը: Ընտրություններում պարտվելուց հետո նա հեշտ չի հրաժարվի իշխանությունից: Դեռ ավելին, արտաքին գործերի նախարարության և Թուրքիայի զինված ուժերի ներսում Էրդողանի հավատարիմներն այժմ գերիշխող դիրքեր են զբաղեցնում, և նրանք, ամենայն հավանականությամբ, կշարունակեն մնալ համակարգում հետագա տարիների ընթացքում[14]:

Ինքը՝ նախագահ Էրդողանը, մեծ վստահություն է արտահայտում իր հնարավոր ընտրության հարցում, ինչն էլ պետք է նշան լինի Արևմուտքի համար, որն ըստ Էրդողանի՝ աջակցում է ընդդիմությանը[15]: Ըստ Էրդողանի՝ Արևմուտքի դիրքորոշումը թիրախավորում է թուրք ժողովրդին, այդ իսկ պատճառով մայիսի 14-ը կդառնա յուրահատուկ բեկման կետ[16]:

Էրդողանին հատկապես զայրացրել էր այն փաստը, որ մարտ ամսին տեղի էր ունեցել հանդիպում Քըլըչդարօղլուի և Անկարայում ԱՄՆ դեսպան Ջեֆֆ Ֆլեյքի միջև: Էրդողանի համար սա ուղղակի միջամտություն էր Թուրքիայի ընտրություններին, և այդ իսկ պատճառով Թուրքիան պետք է «դաս տա ԱՄՆ-ին այս ընտրություններում»[17]:

Այսպիսով՝ Թուրքիայում կայանալիք նախագահական ընտրությունները առավել կարևորվում են Արևմուտքի համար: Ակնհայտորեն վերջիններիս ֆավորիտն այս ընտրություններում թուրքական ընդդիմությունն է, որն ակնկալվում է, որ կվարի առավել արևմտամետ քաղաքականություն և առավել սերտ կապերի մեջ կգտնվի ԱՄՆ-ի և եվրոպական երկրների հետ: Սակայն, մյուս կողմից՝ Էրդողանը շարունակում է մնալ հզոր թեկնածու այս ընտրություններում, որն իր ձեռքի տակ ունի բազմաթիվ իշխանական լծակներ: ■

Ծանոթագրություններ

1 Aydintaşbaş A., Letter from Istanbul: Turkey has difficult years ahead, https://www.brookings.edu/blog/order-from-chaos/2023/04/04/letter-from-istanbul-turkey-has-difficult-years-ahead/ , (19.04.2023):

2 Explainer: What's at stake in Turkey's upcoming elections? https://www.reuters.com/world/middle-east/whats-stake-turkeys-upcoming-elections-2023-03-22/, (19.04.2023):

3 Syria/Turkey Earthquakes Situation Report #7, March 8, 2023, International Medical Corps:

4 Ciddi S., Turkey after Erdogan, Foundation of Defense for Democracies, Washington, D.C., March 2023:

5 Explainer: What's at stake in Turkey's upcoming elections?, նշվ. աշխ.:

6 Kirby P., Turkish elections: Erdogan kicks off race to hold on to power, https://www.bbc.com/news/world-europe-65239092, (20.04.2023):

7 Memorandum of Understanding on Common Policies (January 30, 2023)

https://en.chp.org.tr/haberler/memorandum-of-understanding-on-common-policies-january-30-2023, (20.04.2023):

8 Turkey slams Biden's past call for U.S. to back Erdogan opponents, https://www.reuters.com/article/us-usa-election-biden-turkey-idUSKCN25B0XS, (21.04.2023):

9 Aydintaşbaş A., Pita A., What's at stake in Turkey's elections?https://www.brookings.edu/podcast-episode/whats-at-stake-in-turkeys-elections/, (21.04.2023):

10 Ciddi S., Edelman E., In Support of a Democratic Turkey A unique opportunity exists for the United States to stand behind the Turkish people in their time of need., https://www.fdd.org/analysis/2023/04/14/in-support-of-a-democratic-turkey/, (25.04.2023):

1 Turkey (Türkiye): Major Issues and U.S. Relations, Congressional Research Service, Updated March 31, 2023, pp. 7-8:

12 Pierini M., Siccardi F., The Strategic Consequences of a Kiliçdaroğlu Victory Over Erdoğan, https://carnegieeurope.eu/strategiceurope/89534, (25.04.2023):

13 Cook S., What if Kemal Kilicdaroglu Wins Turkey's Election? https://foreignpolicy.com/2023/04/14/turkey-election-kemal-kilicdaroglu-chp-platform-erdogan/, (26.04.2023):

14 Turkey after Erdogan, նշվ. աշխ.:

15 Hacaoglu S., Kozok F., Erdogan Says His Election Victory Will Amount to Message to West, https://www.bloomberg.com/news/articles/2023-04-12/erdogan-says-his-election-victory-will-amount-to-message-to-west#xj4y7vzkg, (26.04.2023):

16 Erdoğan confident over victory in first round of presidential race, https://www.hurriyetdailynews.com/erdogan-confident-over-victory-in-first-round-of-presidential-race-182342, (27.04.2023):

17 Stamouli N., 2023's most important election: Turkey https://www.politico.eu/article/turkey-2023-election-erdogan-kilicdaroglu/, (27.04.2023):

Հայաստանի դաշնակիցները, Թուրքիան, Բոլշևիկյան Ռուսաստանը, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը

Վանիկ Վիրաբյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոն, պատմության և հասարակագիտության ֆակուլտետ

Մինչ 1917 թ. Անդրկովկասի ոչ մի ազգային-քաղաքական ուժի կողմից պետական ինքնուրույնության և անկախության հռչակման հարց չի դրվել, այլ ընդամենը լայն ինքնավարության՝ Ռուսաստանի կազմում: Համանման ծրագրեր կային Արևմտահայաստանում՝ ի դեմս ՀՅԴ նախագծերի: Այդ հարցը Անդրկովկասի քաղաքական ուժերի համար ազգային առաջնահերթություն չի եղել՝ պայմանավորված աշխարհաքաղաքական իրադրության թելադրանքով:

Անկախության խնդիրը՝ որոշակի վերապահումներով, առաջադրվեց միայն 1918 թ. մայիսյան իրադարձությունների ժամանակ, երբ Անդրկովկասի փլուզումը դարձավ փաստացի իրողություն: Անդրկովկասյան ժողովուրդները հարկադրված էին ինքնահռչակվել և այն իրագործելու համար փնտրել դաշնակիցներ, որոնց սկզբնապես ունեին միայն Ադրբեջանն ու Վրաստանը՝ ի դեմս Թուրքիայի և Գերմանիայի: Հայաստանը պարտադրված եղավ սպասել պատերազմի ավարտին և դաշնակից երկրներին, որոնք այնքան էլ չէին շտապում:

Ի վերջո, 1918 թ. վերջում բրիտանական զորաջոկատները և գրեթե միաժամանակ ժամանած Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և այլ երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունները Անդրկովկասից ժամանակավորապես դուրս մղեցին Թուրքիային և Գերմանիային: Այդ փաստը հույսեր ներշնչեց հատկապես եվրոպասեր հայերին: Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս անգլիացիների, կարծես թե արդեն ուներ հուսալի հովանավորներ և ակնկալում էր վերջիններիս դիվանագիտական-ռազմական աջակցությունը: Սակայն կարելի է ասել, որ հայկական կողմը չափից ավելի չարդարացված հույսեր կապեց հաղթող պետություններից սպասվող օգնության հետ՝ հօգուտ Հայաստանի հանգուցալուծելու սահմանների և ՀՀ ինքնիշխանության հարցերը: Դաշնակիցները խաբուսիկ հույսեր ներշնչեցին բարեկամ համարվող հայ ժողովրդին: Սա հանգեցրեց ձախողումների մասնավորապես արտաքին-քաղաքական հաշվարկների մեջ և ռազմավարական ընտրանքում:

Անմիջական հարևաններ Ադրբեջանի ու Վրաստանի հետ Հայաստանի հարաբերությունները մնացին չափազանց վատ, իսկ պատերազմական բնույթի բախումները չվճռեցին կուտակված խնդիրները, սահմանների մասին հարցերը մնացին չլուծված: Հույս կար, թե Փարիզի խաղաղության վեհաժողովը կլուծի դրանք, սակայն քաղաքական ակնկալիքները չարդարացան: Փաստերի ռեալ գնահատման առումով հետաքրքրական է Է. Անդերսենի և Գ. Պարխուլաձեի փորձագիտական եզրահանգումը, ըստ որի՝ Հայաստանի քաղաքական ղեկավարության միամտությունն արտահայտվեց այն ենթադրության մեջ, թե հարավկովկասյան հարևանների՝ Վրաստանի և Ադրբեջանի հետ հարաբերությունների զարգացման, ծագած տարածքային բախումների հարցերը մեծ տերությունները կլուծեն իրենց օգտին՝ որպես հատուցում և շնորհակալություն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայության գործադրած ջանքերի համար, ըստ այդմ՝ հրաժարվելով անմիջական հարևանների հետ դրանք բանակցությունների միջոցով լուծելու փորձերից: Այդ պայմաններում 1918 թ. վերջին տեղի ունեցավ Վրաստանի հետ Հայաստանի ռազմական բախումը, որը զգալի վնաս հասցրեց երկուսին էլ: Հայաստանը բոլոր կողմերից հայտնվեց շրջափակման և մեկուսացման մեջ, որին հաջորդեցին Հայաստանի և Ադրբեջանի միջև երկարատև «հիբրիդային» պատերազմները վիճելի տարածքներին՝ Ղարաբաղին, Զանգեզուրին և Նախիջևանին տիրելու համար: Այս գործընթացն ուղեկցվեց դաժանագույն էթնիկական զտումներով և ընդհատվեց միայն երկու հանրապետությունների անկմամբ և խորհրդայնացմամբ: Ըստ վերոնշյալ կովկասագետների՝ այդ պատերազմի ընթացքում բրիտանական զինված ուժերի հրամանատարությունը, որի՝ որպես «օբյեկտիվ և ազնիվ միջնորդի» վրա էր դրված արևելյան միջերկրածովյան շրջանի վրա հսկողության իրականացումը (Օսմանյան կայսրության նախկին տարածքներ, Կովկաս և հյուսիսային մերձսևծովյան շրջան), փաստացի կանգնեց նավթով հարուստ Ադրբ-

բեջանի կողքին՝ մասնավորապես Ղարաբաղյան հարցը վճռելով վերջինիս օգտին[1]:

Այդուհանդերձ, ինչպես ոչ առանց հիմքի նշում են մի շարք հետազոտողներ, հենց 1918 թ. աշնան տագնապալից իրադարձությունները խորհրդային ղեկավարությանը դրդեցին քայլեր ձեռնարկել և հարձակում սկսել նախկին դաշնակիցների դեմ, որոնք Ռուսաստանում ծավալել էին ակտիվ հետախուզական, տեռորիստական և դիվերսիոն-սադրիչ աշխատանքներ՝ սպիտակ բանակներին զինելով, ֆինանսավորելով և ուղղորդելով ոտքի կանգնել փորձող ռուսական նոր տիպի պետության դեմ:

Անդրկովկասի ռազմակալումը անգլիացիների կողմից նշանակալից չափով, սակայն ոչ արմատապես փոխեց Հայաստանի Հանրապետության քաղաքական կուրսը, քանզի նրանց դուր չէր գալիս հայերի ռուսամետությունը: Իրականում հայկական ղեկավարության «օրիենտացիան» մի շարք առումներով փոփոխական էր: Երբեմն առ երբեմն նկատվում էր ձգտում դեպի Ռուսաստանը, քանզի դաշնակիցները չէին կարողանում հայ ժողովրդին պատնեշել բացահայտ ազգասպանությունից, որն իրագործվում էր ողջ Անդրկովկասում: Հայոց կառավարության մոտ շատ դեպքերում տարակուսանք էր առաջացնում անգլիացիների դիրքորոշումը՝ «էթնիկական, տնտեսական, ֆինանսական, ռազմական և այլ տեսանկյուններից»:

Նման բան տեղի ունեցավ Երրորդ հանրապետության տարիներին և մասնավորապես՝ 2018-2020-ական թթ., երբ ՀՀ կառավարությունը արտաքին-քաղաքական ռազմավարության և հաշվարկների հարցում համաշխարհային այլ ուժերի դրդմամբ կտրուկ շրջադարձերի դիմեց և հայտնվելով նախկին անտանտյան-եվրոպական երկրների և ԱՄՆ ազդեցության տիրույթում, Ռուսաստանի հետ էլ անորոշության և ոչ հստակ դիրքորոշման մեջ՝ մեկուսացավ և լքվեց: Որպես հետևանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը երկիրը ներքաշեց համաշխարհայնացման անկանխատեսելի գործընթացների և հայ-ադրբեջանական արյունոտ ռազմաքաղաքական հակամարտության մեջ, իսկ «օբյեկտիվ և ազնիվ միջնորդների» դեր ստանձնած ՄԱԿ-ը, եվրոպական երկրները և մասնավորապես՝ Մեծ Բրիտանիան ու ԱՄՆ-ն՝ ՆԱՏՕ-ի ռազմական պատրաստության բովով անցած և մինչև ատամները միլիտարիզացված Ադրբեջանին, Թուրքիայի բացահայտ և ծանրակշիռ աջակցությամբ հնարավորություն տվեցին ետ գրավելու Արցախի մեծ մասը, հօգուտ Ադրբեջանի կատարելու Հայաստան-Ադրբեջան միջպետական սահմանագծի լուրջ վերագծումներ՝ վերջինիս համար ապահովելով ռազմավարական էական առավելություններ:

Այս վերջին հանգամանքից ելնելով՝ կարելի է պնդել, որ որպես դաշնակիցներ շահելով Առաջին աշխարհամարտում Գերմանիայի և Թուրքիայի դեմ պատերազմը, սակայն ներքուստ շահագրգռված չլինելով Ռուսաստանի հզորացմամբ՝ քաղաքացիական պատերազմի մեջ ներքաշված երկրում ամեն կերպ խրախուսեցին անջատողական տրամադրությունները: Իբր թե բոլշևիզմի վտանգի դեմ պայքարելու ցնորական նպատակներից ելնելով՝ Անտանտի երկրները խրախուսեցին երկու և ավելի Ռուսաստանների գոյության հնարավորությունը և պայքարը նրանց միջև:

Է. Անդերսենը և Գ. Պարխուլաձեն այստեղ ևս նկատում են «Հայ ժողովուրդը և առաջին հերթին հայ քաղաքական և զինվորական առաջնորդները չընդունեցին Բրեստի հաշտության պայմանները և փորձեցին խոչընդոտել թուրքական ծավալապաշտությանը՝ հույսը դնելով արևմտյան դաշնակիցների ակտիվ օգնության վրա: Ռազմական գործողությունները շարունակվեցին, բայց քանի որ հայերը ոչ մի ռեալ օգնություն չստացան, գրեթե ողջ պատմական Հայաստանը զավթվեց թուրքերի կողմից, շարունակվեց ցեղասպանությունը, որին զոհ գնացին հարյուր հազարավոր նոր սպանվածներ և փախստականներ: Միայն համաշխարհային պատերազմի ավարտը և Օսմանյան կայսրության (սուլթանական Թուրքիայի) 1918 թ. հոկտեմբերի 30-ի կապիտուլյացիան կանխեցին «հայկական հարցի վերջնական լուծումը», հայերի վերջնական անհետացումը իրենց պատմական հայրենիքից:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, դեռևս 1918 թվականի մայիսին հռչակելով իր անկախությունը, Հայաստանը պատրաստվեց հաղթող տերությունների ձեռքից ընդունելու դեռևս 1914 թ. խոստացված «փայլուն ապագան»: Նորաթուխ հայկական պետության առաջնորդները չափից ավելի մեծ տարածքային պահանջներ ներկայացրին պարտված Թուրքիային: Փարիզի հաշտության վեհաժողովում, որտեղ վերաձևվում էր հետպատերազմյան աշխարհի քարտեզը, հայկական պատվիրակության կողմից հնչեցվեցին պահանջներ, որոնք ներառում էին հսկայական տարածքներ, և որոնց մի մասը հազիվ թե կարելի էր համարել «բուն հայկական»: Ընդ որում, էթնիկ զտումներից հետո այդ տարածքներում հայկական բնակչություն գրեթե չկար:

Դաշնակից պետությունները, պատերազմի օրերին հաճույքով օգտագործելով հայ ժողովրդի մարդկային և այլ ռեսուրսները, սկսեցին փոքրիկ, սահմանափակ բնական հարստություններ ունեցող Հայաստանը դիտարկել որպես «ցավալի թյուրիմացություն և դժվար լուծելի խնդիրների աղբյուր»: Նրանք չշտապեցին ոչ միայն վերջինիս տարածքային պահանջների բավարարման, այլև նույնիսկ նրա պետական անկախության ճանաչման հարցում»[2]:

1918 թ. մայիսի 28-ին Թիֆլիսում անկախության հռչակումից, ռուսական զորքերի հապճեպ նահանջից և Կովկասյան ճակատը լքելուց հետո ստեղծված դժվարին ու բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում՝ ի դեմս ՀՀ կառավարության դեր ստանձ-

նած Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի, որը հայտարարեց Հայաստանի անկախության հռչակման մասին և իրեն հռչակեց «հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմել հայոց ազգային կառավարություն՝ ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»[3]: Սակայն հանգամանքների բերումով հայ քաղաքական առաջնորդները ավելի քան երեք ամիս ուշացումով հայտնվեցին Երևանում: Հայոց նորանկախ պետությունը գոյատևեց մոտ երկուսուկես տարի՝ կարճատև ու դժվարին ժամանակահատված, հիմնականում սեփական ժողովրդի և նախընտրած քաղաքական առաջնորդող ուժի՝ Դաշնակցության գործունեության, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի և Միացյալ Նահանգների խիստ սահմանափակ օժանդակության շնորհիվ:

Պատմության ընթացքը ցույց է տվել, որ Հայաստանը գտնվելով համաշխարհային կարևորագույն խաչմերուկում՝ իբրև անկախ պետական միավոր, կարողացել է թերևս գոյատևել այն ժամանակ, երբ շրջապատող տերությունները բավարար չափով ուժեղ չեն եղել, որպեսզի շահագրգռված լինեին տիրելու հայկական միջանցքին: Ակնհայտ է, որ ով կարողանում էր տիրել անառիկ միջնաբերդ հիշեցնող և շրջակայքին իշխող Հայկական լեռնաշխարհին, նա կարողանում էր իշխել միջմայրցամաքային ճանապարհներին, անսպառ ռեսուրսներին և ժողովուրդներին, ինչպես դա տեղի ունեցավ Տիգրան Աշխարհակալի օրոք:

11-րդ դարից կորցնելով պետականությունը և 1917 թ. աննախադեպ շրջադարձից հետո ակամայից հայտնվելով իր անկախ պետությունը հռչակել-չհռչակելու երկընտրանքի առջև՝ ինչին ավելի պատրաստ գտնվեցին բեկերից, խաներից և ազնվական խավից ձևավորված վրաց և թուրք-մահմեդական քաղաքական էլիտաները, ռոմանտիկ մտավորականներից բաղկացած և հայ քաղաքական առաջնորդությունը ստանձնած խավը հիմնականում մտածում էր, որ առանց դրսի հովանավորության պետությունը չի կարող գոյատևել՝ անկախ նրանից, թե այդ բարերար տերությունը կլիներ Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան, թե՞ Ֆրանսիան, իսկ Ռուսաստանը այդ պահին հաշվարկներից դուրս էր: Դրան ավելացրած այն հանգամանքը, որ Ռուսական կայսրության փլուզման մեջ շահագրգիռ երկրները, մասնավորապես՝ Մեծ Բրիտանիան, ամեն կերպ ձգտեց իր գնահատմամբ՝ «ռուսից ավելի ռուս» հայերին և նրանց առաջնորդներին ներգրավել սեփական իմպերիական հավակնությունների դաշտ:

Անկախ Հայաստանը անկարող եղավ ինքնուրույն գոյատևել քեմալականների և բոլշևիկների դեմքով վերակենդանացած Թուրքիայի և Ռուսաստանի մրցակից նպատակադրությունների պայմաններում[4]: Տարածաշրջանային ուժերի յուրահատուկ փոխհարաբերությունների պայմաններում ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայերի, ինչպես և արևելահայության ցանկություններն ու գործողությունները մեծապես անպտուղ եղան, իսկ բարերարների որոնումը՝ անարդյունավետ և անհուսալի: Այդ առումով դիտարժան եզրահանգում է արել թուրք պատմաբան Բ Գյոքայը «հետևաբար, դա թուրքական ազգային շարժման ոչ պատահական մերձեցումն էր ռուս բոլշևիկների հետ, որն առաջին անգամ նյութականացավ այդ տարածաշրջանում թուրք-բոլշևիկյան համագործակցության ձևով՝ Խորհրդային կողմից Կովկասի նկատմամբ հսկողության հաստատմամբ

Դա ավելին էր, քան եղել է երբևիցե դրանից առաջ: Համագործակցությունը նման էր գործնական ընկերակցության, իսկ այնուհետև այն հանգեց սկզբունքների ընդհանրության:

Թուրքերը չէին ձգտում գնալ առաջ՝ դեպի պատմականորեն ռուսների կողմից զավթված Հայաստանի մասը, և ռուսներն ավելի առաջ չէին շարժվում դեպի թուրքական Հայաստանը»[5]:

Հայ ժողովուրդը և նրա առաջնորդները անկարող եղան ապահովելու սեփական անվտանգությունը և ենթարկվեցին մրցակից տերությունների քաղաքական հաշվարկներին: Հայաստանի ճակատագիրը, ինչպես և այսօր՝ 2020-ական թվականներին, մեծապես կախվածության մեջ հայտնվեց գերտերություններից: Հայկական պետության ճակատագրի համար կարևոր գործոններ դարձան արտաքին-քաղաքական առաջնահերթությունների ընտրությունը և գաղափարախոսական նախապատվությունների համադրումը, ինչպես նաև աշխարհաքաղաքական միջավայրը և նրա վերաբերյալ առաջնորդների պատկերացումներն ու հայեցակարգային մոտեցումները: Նրանց աշխարհաքաղաքական նպատակադրումները անհամապատասխան էին մարդկային-նյութական ռեսուրսների ու միջոցների հետ ակընհայտորեն չափազանց ծավալուն պահանջատիրությունը իշխում էր սակավազոր հնարավորությունների վրա: Հայ քաղաքական էլիտան իր նպատակադրումները և արտաքին-քաղաքական ընտրանքը նույնականացնում էր արևմտյան դաշնակիցների աշխարհաքաղաքական ձգտումների հետ, ինչը և՛ քեմալական Թուրքիայի, և՛ բոլշևիկյան Ռուսաստանի համար մեկնաբանվում էր, թե նրանք արևմտյան իմպերիալիստների կամակատարներն են: Հայաստանի Հանրապետությունը կառավարող ՀՅ Դաշնակցությունը Մոսկվայի և Անկարայի կողմից դիտվեց իբրև, այսպես կոչված, միջազգային սոցիալիստական հեղափոխության, թուրքական ազգայնականության և բոլշևիկների ու քեմալականների հակագաղութային նպատակների թշնամի: Այստեղից հարկ է եզրակացնել, որ, ի վերջո, անկախ Հայաստանի նպատակադրման ձախողումը ո՛չ ընդդիմադիր հայ քաղաքական ուժի, ո՛չ էլ հայ քաղաքական առաջնորդների անձեռնհասության կամ ագրեսիվության պատճառով էր, այլ

աշխարհաքաղաքական զարգացումները ծրագրող և դրանց ընթացք տվող ուժերի՝ ի դեմս մի բևեռում գտնվող արևմտյան երկրների և մյուս բևեռում՝ Թուրքիայի և Ռուսաստանի:

1920 թ. սկզբներին ակնհայտ դարձավ՝ խորհրդային ուժերը հաղթել էին Անտանտի կողմից բացահայտորեն ֆինանսավորված և ռազմական աջակցություն ստացող սպիտակ ուժերի դեմ առճակատման մեջ: 1920 թ. բոլշևիկյան ուժերը սրընթաց առաջացան դեպի Կովկաս՝ այն վերանվաճելու հստակ նպատակով: Այս պայմաններում ՀՀ դաշնակցական առաջնորդներն առերեսվեցին մի նոր և լուրջ վտանգի հետ: Ակնհայտ էր, որ Խորհրդային Ռուսաստանն անվերապահորեն չէր աջակցի արևմտյան տերություններին ապավինող և բոլշևիկների դեմ անսքող թշնամություն դրսևորող քաղաքական ուժի կողմից կառավարվող հանրապետությանը: Ակնհայտ դարձավ, որ ՀՀ քաղաքական ղեկավարությունը սխալվել է իր հաշվարկներում՝ ավելացրած այն, որ չփորձեց ավելի ճկուն գտնվել թուրք ազգայնականների հանդեպ: Թեև, վերջին հաշվով, Հայաստանի անկման գերակա գործոնը խոշոր տերությունների արտաքին քաղաքական և աշխարհաքաղաքական հավակնոտ ու եսասիրական օրակարգն էր[6]: Հովհաննիսյանը գտնում է, որ հակառակ իրենց հաստատուն արևմտյան արևելումին՝ Դաշնակցությունը և հայկական կառավարությունը մնացին առանձին և լքված Արևմուտքի կողմից, որն Արևմտյան Հայաստանը գցել էր թղթի վրա: Երկիրը ուժասպառ եղավ, օժանդակություն չստացավ, իրադարձությունների ձգձգումը նպաստեց ոչ միայն բոլշևիկյան Ռուսաստանի և Թուրքիայի գործակցությանը, այլև առիթ տվեց թուրքերին նոր պատերազմ սկսելու և Հայաստանին ճնշող պայմաններ պարտադրելու[7]: Այդ ժամանակ քաղաքական որոշ գործիչների մոտ արդեն կար աստիճանաբար որոշակիացող համոզմունք բոլշևիզմի հնարավոր հաստատունության և համաշխարհային նոր ռեալ ուժ դառնալու վերաբերյալ: Դա նրբորեն նկատել է Ալ. Խատիսյանը ՀՀ պառլամենտի 1920 թ. ապրիլի 30-ի նիստում (No 86) ունեցած ելույթում. «Այնուամենայնիվ, չպետք է անտեսել, որ բոլշևիկներն են Ռուսաստանի իրական ուժը, այդ փաստը մատնանշվում է մասնավորապես Եվրոպայում, ուր նկատվում է դեպի Ռուսաստան ունեցած քաղաքականության բեկում. ֆրանսիական պառլամենտը հանձնարարել է կառավարությանը՝ բանակցություններ վարել Ռուսաստանի հետ: Նույն տեսակետին է Իտալիան, Ամերիկայի դիրքը հայտնի է ձեզ այն, ինչ հնարավոր չէր հունվարին, այն հնարավոր է դառնում, և մեծ տերությունները մտածում են կամ գուցե սկսել են բանակցություններ վարել Ռուսաստանի հետ թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական հարցերի վերաբերյալ»[8]:

ՀՀ կառավարող քաղաքական ուժը պահը կորցրեց և չըմբռնեց, որ քաղաքական իրադրությունը անդրկովկասյան տարածաշրջանի ու Հայաստանի շուրջ 1919 թ. վերջին 1920 թ. սկզբներին կտրուկ

Զորահանդես վարչապետ Ալ. Խատիսյանի պատվին՝ Սարիղամիշում. 1919 թվական, 3-ը նոյեմբերի

փոխվել է՝ շրջադարձային զարգացումների սկիզբ դնելով: Թուրքական ազգայնական շարժումը այդ պատմափուլում կտրուկ վերելք էր ապրում Թուրքիան վերակենդանանում էր քեմալականների իշխանության ներքո, իսկ կոմունիստները հաղթանակած էին դուրս գալիս ռուսական քաղաքացիական պատերազմում, որը էապես հրահրվեց դրսից, ինչպես այսօր՝ նպատակ հետապնդելով վերջնականապես հյուծել Ռուսաստանին, ջախջախել նրան ու դառնալ աշխարհի միահեծան տերերը՝ օգտագործելով կեղծ կարգախոսեր: Ադրբեջանում առաջխաղացող թուրքերի ու Կարմիր բանակի աքցանում հայտնված՝ Հայաստանը հայտնվեց երկփեղկված վիճակում: Օրակարգում դեռևս ամուր նստած էր Արևմուտքի միջոցով ելք գտնելու ձգտումը, որն էլ արդեն շատ ծանր վիճակում հայտնված Հայաստանի կառավարությանը խորհուրդ տվեց գնալու անհապաղ համաձայնության թուրքերի հետ՝ նախապատվությունը տալով վերջիններիս:

Այս հեղհեղուկ վիճակում էլ Հայաստանի ճակատագիրը օրակարգային դարձավ Բաքվում 1920 թ. սեպտեմբերի սկզբին հրավիրված հայտնի Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում: Այնտեղ քննարկվեց Հայկական հարցը, և դրա հետևանքը եղավ Հայաստանի հանդեպ խորհրդային քաղաքականության խորապես ծրագրված հաշվարկը՝ հաջորդող մի քանի տարիների համար: Հայաստանի ճակատագիրը ստորադասվեց մուսուլմանական աշխարհում հեղափոխության կեղծ օրակարգին, ինչպես նաև թուրք և պարսիկ ազգայնականների շրջանում դաշնակիցներ ձեռք բերելու ռազմավարությանը: Ակնհայտ էր, որ Հայաստանը խորհրդային պետության համար արժեք չէր ներկայացնում, Հայաստանի անկախությունը և հայ ժողովրդի ֆիզիկական գոյության հարցը ստորադասվեցին Ռուսաստանի հեղափոխական նպատակներին:

Ինչպես շատ դիպուկ նկատել է ամերիկահայ պատմաբան Ռ. Սյունին, 1920 թ. փետրվարից դեկտեմբեր

բախտորոշ ամիսներին պարզ դարձան հայկական պետության հանդեպ արևմտյան հավատարմության սահմանները, և քեմալական թուրքերի ու Խորհրդային Ռուսաստանի մահաբեր դաշինքն[9] իր շրջապտույտի մեջ առավ հայկական հանրապետությանը: Փետրվարին՝ Լոնդոնի համաժողովից սկսած, Հայաստանը հետզհետե կորցրեց դաշնակիցների արդյունավետ և ցանկալի աջակցությունը, իսկ ապրիլին Սան Ռեմոյում Բրիտանիան, Ֆրանսիան և Իտալիան հստակեցրին, որ չնայած հայ ժողովրդի կորուստների ու հավատարմության հանդեպ իրենց կարեկցությանը՝ իրենք հայկական հանրապետության գոյությունը երաշխավորելու նպատակով ուժ չեն կիրառի: Սին հույսեր կային, թե Միացյալ Նահանգները կվերցնի այդ բեռն իր վրա, սակայն վերջինս էլ արդեն հստակորեն հրաժարվել էր Հայաստանի նկատմամբ խնամակալության բեռից:

Այդ ընթացքում ադրբեջանցիներն օգտվելով տերությունների բացահայտ թողտվությունից՝ տիրեցին Ղարաբաղին այն պահին, երբ Ադրբեջանը Մ. Քեմալի խորհրդով անարյուն խորհրդայնացվեց և Կարմիր բանակը մտավ Բաքու, ինչն արմատապես փոխեց ուժերի հավասարակշռությունն Անդրկովկասում: Խորհրդային ուժերի Կովկասում գտնվելը Հայաստանի և Վրաստանի տեղական բոլշևիկներին խրախուսեց ապստամբություններ սկսելու, սակայն իշխող մենշևիկներն ու դաշնակցականները դաժանորեն ճնշեցին այդ շարժումները: Մայիսյան խռովությունը Հայաստանում հանգեցրեց անհամեմատ ավելի չափավորական կառավարության փոխարինմանը Դաշնակցության բյուրո-կառավարության կուսակցական դիկտատուրայով:

Հայաստանի դաշնակցական առաջնորդները «հարկադրված էին» անզոր և անվստահելի բանակի միջոցով լուծել ուժից վեր խնդիրներ, ինչպես նաև զսպել հանրապետության սահմանների ներսում՝ Զանգիբասար-Վեդիբասարում, Բասարգեչարի, Կարսի և այլ շրջաններում գտնվող մուսուլմանների ստվար զանգվածի հակահայկական գործողությունները, որոնք հովանավորվում և ռազմական-նյութական զգալի աջակցություն էին ստանում Թուրքիայից: Ավելին, մահմեդական շրջանների հնազանդեցման ընթացքում հայկական զորքը տկարացավ և ուժասպառվեց: Բանակաստեղծ քաղաքականության ոլորտում կառավարությունը ոչ միշտ ճիշտ լուծումներ գտավ, երբեմն էլ ուղղակի նրան պակասեց շրջահայացությունը և կոնկրետ իրավիճակների օբյեկտիվ վերլուծությունը, հետևաբար դրական զարգացումների հետ մեկտեղ մի շարք երևույթների տրվեցին անսթափ և հապշտապ լուծումներ, ինչը որոշակիորեն վնասեց հանրապետության անվտանգության համակարգի ձևավորմանը:

Որոշակի բացասական դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ դեռ 1919 թ. գարնանը Ռուսաստանի հարավի ռազմաքաղաքական շրջաններում տեղեկատվություն էր տարածվել այն մասին, թե ՀՀ կառավարությունը փոխել է իր վերաբերմունքը Հայաստանում գտնվող ռուսների և մասնավորապես՝ պետական պաշտոնյաների և սպաների նկատմամբ, ինչն այդ պահին խիստ անցանկալի էր և կարող էր վատթարացնել Ռուսաստանի հարավ-ՀՀ ռազմաքաղաքական հարաբերությունները, խնդիրներ ստեղծել ամենուր սփռված հայ գաղթականության համար և այլ հույժ կարևոր հարցերում: Վրաստանում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Լ. Եվանգուլյանը 1919 թ. մայիսի 30-ին ահազանգում է կառավարությանը և մասնավորապես ՀՀ ԱԳՆ-ին. «Հայաստանի կառավարության վերաբերմունքը դեպի ռուսներն ընդհանրապես և մասնավորապես՝ դեպի ռուս պաշտոնյաները և սպաները, որոնք Հայաստանում պետական ծառայության մեջ են, զգալի չափով փոխվել է...

Ռուս գյուղացիներին հաճությամբ չեն վերադարձնում իրենց տեղերը, ռուս սպաներին համարյա թե քշում են զորքից հաջող ազգայնացման դրոշի տակ, բոլոր քաղաքացիական հաստատություններում գտնվող ռուս պաշտոնյաներին փոխարինում են հայերով, նույնիսկ Երևանում կազմվել է մի ընկերություն, որի նպատակն է ազգայնացման ճանապարհով երկրում արմատախիլ անել ռուսական ոգին»[10]: Եվանգուլյանը զգուշացնում էր, որ ռուսների վերաբերյալ այդ լուրերը չափազանցված հասնում են Դենիկինի գլխավորած կամավորական բանակին: Ձգաստության կոչելով՝ Եվանգուլյանը խորհուրդ էր տալիս չանտեսել այն կարևոր հանգամանքը, որ Կուբանի և Թերեքի երկրամասերում գտնվում են թուրքական սպանդից մազապուրծ հազարավոր հայ գաղթականներ, որ չի կարելի այս ամենը և կամավորական բանակի դեպի հայերն ունեցած սրտագին վերաբերմունքը նկատի ունենալով՝ հարաբերությունները վերջինիս հետ վատթարացնել, որով այդ գաղթականների վիճակը կմոտենա վերջնական բնաջնջման: Նա անհրաժեշտ էր գտնում պահպանել բարեկամական հարաբերությունները թե՛ Հայաստանում բնակվող ռուսների հետ և թե՛ նրանց միջոցով այն «Ռուսիա»-ների հետ, որոնք ներկայումս գոյություն ունեն[11]:

Միևնույն ժամանակ կառավարությունը ռազմական գործողություններ իրականացրեց մուսուլմանական գյուղերի դեմ՝ քրդերին ու թուրքերին նախկին ռուս-թուրքական սահմանից դուրս հանելով: Հրաժարվելով ճանաչել հայկական պահանջները՝ քեմալականները վիճարկեցին սահմանային այն շրջանը, որը 1878 թ. օսմանյան թուրքերը զիջել էին ցարական Ռուսաստանին: Էլ ավելի չարաղետ էր Հայաստանի համար այն, որ երբ հայկական բանակը փորձեց շարժվել դեպի մուսուլմանաբնակ Նախիջևան, ճանապարհն արգելափակվեց խորհրդային ու թուրքական զորքերով՝ միավորված կեղծ կարմիր դաշինքով: Հուլիսին Բաթումում բրիտանական կայազորը՝ դաշնակիցների վերջին զորքն Անդրկովկասում, նահանջեց՝ հայերին մենակ թողնելով ավելի հզոր թշնամիների դեմ:

Հայկական դիվանագիտական ջանքերը զարգացան երկու առանձին ուղղություններով. մեկն՝ Արևմուտքում, որը և հանգեցրեց Սևրի պայմանագրին, որով թղթի վրա ստեղծվեց ընդարձակ հայկական պետությունը՝ Վուդրո Վիլսոնի գծած սահմաններով, մյուսը՝ Մոսկվայում և Երևանում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների հետ՝ թուրք ազգայնականներից պաշտպանություն ձեռք բերելու նույնքան ապարդյուն ջանքերով:

Եվ հանրապետությունում, և արտերկրում գտնվող հայերը 1920 թ. համախմբվեցին անկախ պետությանն աջակցելու նպատակի շուրջ: Նրանք ունեին այն հույսը, որ ինչ-որ պահի, անկանխատեսելի ապագայում, փոքրիկ կովկասյան միավորը կդառնա ավելի ընդարձակ, միավորված հայկական պետության կորիզը, որը կներառի պատմական Հայաստանի հողերը, այն հողերը, որոնց վրա երիտթուրքերը 1915-1916 թթ. բնաջնջել էին հայերին: 1920 թ. մայիսի վերջին նախագահ Վ. Վիլսոնը դիմեց Կոնգրեսին Հայաստանի նկատմամբ հայկական իրավասության հաստատման թույլտվություն ստանալու համար, սակայն սենատոր Հենրի Քեբոթլոջի առաջնորդած «անհաշտները» Սենատում դեմ քվեարկեցին նրա դիմումին: Դաշնակիցների ընկրկման պայմաններում Հայաստանի անկախ ապագան ավելի ու ավելի էր պայմանավորվում Խորհրդային Ռուսաստանի հետ վստահելի հարաբերության մշակումով: Բայց այստեղ ևս ամեն ինչ հստակ չէր խորհրդային առաջնորդները բաժանված էին երկու մասի՝ չափավորների, ինչպես, օրինակ՝ արտաքին գործերի կոմիսար Գեորգի Չիչերինը, որոնք պատրաստ էին Հայաստանի ու Վրաստանի հետ հաստատել խաղաղ միջպետական հարաբերություններ, և ռազմատենչների, օրինակ՝ Սերգո Օրջոնիկիձեն, որոնք ձգտում էին հարավկովկասյան մնացյալ հանրապետությունների հեղափոխական կամ ռազմական ուղով գրավմանը:

Անկախ պետության ստեղծմանն ի նպաստ՝ Չիչերինը փորձում էր համոզել հայերին ետ կանգնելու Արևմտահայաստանի նկատմամբ պահանջներից: Բայց հայերը մերժեցին: Նախիջևանի, Զանգեզուրի և Ղարաբաղի հարցով լուրջ տարաձայնությունները ևս պառակտում էին Հայաստանի ու Խորհրդային Ռուսաստանի հարաբերությունները: Նույնիսկ երբ երկու պետությունների միջև բանակցությունները շարունակվում էին, Կարմիր բանակի զորամիավորումները շարժվեցին վիճահարույց տարածքներ, և խորհրդային ու հայկական զորքերը բախվեցին Զանգեզուրում: Խորհրդային պատվիրակ Բորիս Լեգրանը բանակցեց ընդհարման շուտափույթ դադարի համար և օգոստոսի 10-ի համաձայնությամբ ճանաչեց «Հայաստանի Հանրապետության անկախությունն ու լիարժեք ինքնորոշումը»[12]: Այդ նույն օրը Եվրոպայի մյուս ծայրում հայկական պատվիրակությունը ստորագրեց Սևրի դաշնագիրը՝ հանրապետության ճակատագիրը կապելով արևմտյան խոստումներին: Տասն օր անց՝ օգոստոսի 24-ին, Խորհրդային Ռուսաստանը ստորագրեց Մ. Քեմալի առաջնորդած թուրք ազգայնականների հետ բարեկամության դաշնագիրը, և Հայաստանն ընկավ խորհրդային մուրճի ու քեմալական զնդանի արանքը: Հանրապետության գոյության վերջին արարը սկսվեց սեպտեմբերի սկզբին, երբ թուրքական զորքերը նախահարձակ եղան նախկին ռուսթուրքական սահմանի երկայնքով: Իրադարձություններն արագ զարգացան: Թեպետ Մոսկվան համակրում էր քեմալականների հակակայսերական օրակարգը, կողմերից յուրաքանչյուրը կասկածանքով էր վերաբերում Անդրկովկասի առնչությամբ մյուսի մտադրություններին: Լեգրանը Երևանում մեծահոգի պայմանագրի մի նախագիծ էր ստորագրել՝ խորհրդային ճանաչում շնորհելով Հայաստանի տարածքային պահանջների մի մասին, սակայն, միևնույն ժամանակ Մոսկվայում և Բաքվում խորհրդային քաղաքականությունը կողմնորոշվել էր դեպի ռազմատենչների դիրքորոշումը՝ նախապատվություն տալով հանրապետության խորհրդայնացմանը, որն ընթացավ 1920 թ. կեսերին՝ անդրկովկասյան տարածաշրջանի շուրջ քաղաքական իրադրության շրջադարձային փոփոխությունների համատեքստում: Երբ քաղաքացիական պատերազմը Ռուսաստանում գրեթե ավարտվեց, Ռուսաստանի ներքին գործերին միջամտած, քաղաքացիական կռիվներին օժանդակած և ինտերվենցիան ուղղորդող եվրոպական երկրները պարզապես լքեցին հովանավորյալներին, այդ թվում՝ ազգային հանրապետություններին, որոնք իրենց ակնկալիքները շաղկապել էին Եվրոպայի հաղթող երկրների հետ: Բարդ իրավիճակում Անտանտի երկրները «սթափվեցին», վերաձևումներ կատարեցին իրենց ռազմավարական հաշվարկներում՝ նկատելով, թե ինչպես քաղաքացիական կռիվներում հաղթանակած բոլշևիկյան նոր Ռուսաստանը և պատերազմում պարտված քեմալականների Թուրքիան փոխշահավետ համաձայնության են գալիս: Ստեղծված ցայտնոտային իրավիճակում դաշնակիցներից լքված Հայաստանին այլ ելք չմնաց, քան ուշացած այլընտրանք չունեցող քաղաքական համաձայնության գնալ Խորհրդային Ռուսաստանի հետ՝ հայ ժողովրդի համար ձեռք բերելով գոյատևման հնարավորություն: Իսկ ՀՀ նախկին դաշնակիցները ևս, տագնապելով աշխարհաքաղաքական ուժերի այս նոր համախմբումից, ուղիներ որոնեցին՝ եզրեր գտնելու թե՛ Խորհրդային Ռուսաստանի, թե՛ քեմալական Թուրքիայի հետ՝ զուգընթաց ձգտելով վերականգնել կորսված դիրքերը մուսուլմանական երկրների հետ, որի ուղղությամբ նոր ռազմավարության հիմքը դրվեց Ռուսաստանի կողմից Արևելքի ժողովուրդների 1-ին համագումարում:

Դրանով իսկ Հայաստանի շահերը և գոյության խնդիրը ստորադասվեցին մուսուլմանական աշխարհում դիրքերի ձեռքբերմանը՝ այն ուղղելով բրիտանական կայսերապաշտական ռազմավարության ծավալման դեմ: ՀՀ դաշնակիցներն էլ արդեն 1920-1923 թթ. վերջնականապես հրաժարվեցին թե՛ Սևրի պայմանագրից, թե՛ հայկական հանրապետության

գոյության երաշխավորի դերից՝ բացառելով ռազմուժի կիրառումը հայկական հարցի լուծման համար:

Թուրքիայում թե՛ քեմալականների, թե՛ նախկինների կողմից Սևրի մերժումին զուգընթաց ակնհայտ էր նաև Հայաստանին օգնելու նախկին

խոստումներից հաղթող երկրների հրաժարումը, ինչն էլ կրկնվեց 1920 թ. վերջին և հանգեցրեց հայկական կապիտուլյացիային:

Հետևանքը եղավ հոկտեմբերի 24-ին հայկական զորքերի ձեռնարկած հարձակման ձախողումը, հակառակորդի ակտիվ հակահարձակումը, և արդեն հոկտեմբերի 29-ին թուրքերը հայտնվեցին Սարիղամիշում, հոկտեմբերի 30-ին՝ Կարսում, որը չպաշտպանվեց: Քեմալականների հարձակումը շարունակվեց և հենց հոկտեմբերի 30-ին Երևանը օգնության խնդրանքով դիմեց Անտանտի իր դաշնակիցներին, նոյեմբերի 5-ին՝ ԱՄՆ-ին, իսկ նոյեմբերի 6-ին թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլը: Մեծ տերություններից և ոչ մեկը կոնֆլիկտին միջամտելու ցանկություն չդրսևորեց, Հայաստանին թողեցին ճակատագրի քմահաճույքին, ինչպես դա եղավ հարյուր տարի անց՝ 2020 թ. չարաբաստիկ աշնանը:

Օգտվելով ամենաթողությունից՝ թուրքերը շարունակեցին հարձակումը, որն ուղեկցվում էր դաժանագույն կոտորածով և էթնիկական զտումներով: Սիմոն Վրացյանի գլխավորած կառավարությունը հարկադրված էր ընդունել ստեղծված վիճակի անելանելիությունը, որի հետևանքը եղավ Ալեքսանդրապոլի կապիտուլյացիոն հաշտությունը: Ստորագրվեց Անկարայի կառավարության առաջին միջազգային պայմանագիրը: «Նա, — հիշում է Ք. Աթաթյուրքը, — մեզ, այսինքն՝ ազգային կառավարությանը հանձնեց այն տարածքները, որոնք «օսմանյան» կառավարությունը կորցրել էր 1876-1877 թթ.»[13]:

Ինչքան էլ Քեմալական Թուրքիան և Խորհրդային Ռուսաստանը դաշնակիցներ էին, այդուհանդերձ թե՛ մեկին և թե՛ մյուսին ձեռնտու չէր մյուսի ծավալվելը ռազմավարական շահեր ներկայացնող տարածաշրջանում, ինչպես և այսօր: Անտանտը հատկապես խորհրդային կողմի ծավալումը դիտարկեց որպես փորձ Հայաստանը դարձնելու «իր միջնաբերդը», սակայն նա բավարարվեց ընդամենը դեկլարատիվ հայտարարագրերով:

Վհատված հայկական բանակը հոկտեմբերի 30-ին Կարսը գեներալ Քյազիմ Կարաբեքիրի զորքերին հանձնելով՝ դրանով վճռեց Հայաստանի Հանրապետության ճակատագիրը: Թուրքական բանակը գրավեց Ալեքսանդրապոլը (Գյումրին) և շարժվեց առաջ դեպի Ղարաքիլիսա՝ հայկական կառավարությանը ստիպելով կնքել զինադադարի նվաստացուցիչ պայմանագիր: Թուրքական հաջողություններից անհանգստացած՝ Խորհրդային Ռուսաստանն առաջարկեց միջնորդել հակամարտության լուծմանը, որի հետ Երևանն ու Անգորան համաձայնեցին: Բանակցությունների մի մասը անմիջականորեն թուրքերի հետ անցավ Ալեքսանդրապոլում, իսկ մյուս մասը խորհրդային պատվիրակների հետ՝ Երևանում: Այդ ընթացքում առավել ռազմատենչ կոմունիստները որոշեցին գործն իրենց ձեռքը վերցնել և նոյեմբերի 29-ին Հայաստանը հռչակեցին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Կարմիր բանակը Հայաստան մտավ Ադրբեջանից՝ կանխելով իշխանությունը խաղաղ փոխանցելու Լեգրանի ջանքերը: Խորհրդային Ադրբեջանի առաջնորդ Նարիման Նարիմանովը «մեծահոգաբար և միակողմանի կարգավորեց» Հայաստանի հետ տարածքային վեճերը՝ Նախիջևանը, Զանգեզուրն ու Ղարաբաղն «ընծայելով» նորահռչակ Խորհրդային Հայաստանին, ինչն ընդամենը քաղաքական հնարք էր: Հետագայում այդ «ընծայի» վերաբերյալ որոշումն արագ փոխվեց: Ի հակադրություն սրան՝ թուրքերը հայկական տարածքի անդամահատման հարցում չափազանց արմատական գտնվեցին: Այդ իրավիճակում ՀՀ դաշնակցական կառավարությունը որոշեց իշխանությունը փոխանցել խորհրդային ուժերին, բայց Թուրքիայի հետագա հետապնդումների դեմն առնելու համար միևնույն ժամանակ ստորագրեց թուրքերի կողմից առաջադրված կոշտ պայմանների տակ: Գեներալ Դրոն (Դրաստամատ Կանայան)՝ Հայաստանի դաշնակցական կառավարության լիազոր ներկայացուցիչը, և Միլինը՝ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչը, 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանը հռչակեցին «անկախ սոցիալիստական հանրապետություն»: Մի քան ժամ անց նախկին կառավարության պատվիրակությունը կնքեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որը թեպետև փաստացի անօրինական էր, այդուհանդերձ հաստատեց այն սահմանը, որը ձգվեց նորաստեղծ Խորհրդային Հայաստանի Հանրապետության և ազգայնական Թուրքիայի միջև:

Խորհրդայնացման պահին երկիրը գտնվում էր իր արդի պատմության անկման ծայրագույն կետում: Հայերը ոչ միայն արտաքսվել էին Հայկական բարձրավանդակի թուրքական ենթակայության տակ գտնվող մասից՝ 1915 թ. ցեղասպանական կոտորածներով ու տեղահանմամբ, այլև Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումից ի վեր պատերազմի, գաղթի ու համաճարակների հետևանքով կտրուկ անկում էր ապրել Ռուսա-հայաստանի բնակչությունը: Մինչև 1920 թ. Արևելյան Հայաստանում ապրում էր ընդամենը 720.000 մարդ, ինչը նշանակում էր 30 տոկոս անկում, այն դեպքում, երբ 1919 թ. ՀՀ համեմատական կայունացման շրջանում բնակչության թիվը 961,7 հազար մարդ էր[14]: Ավելին, այս բնակչության գրեթե կեսը փախստականներն էին: Բազմաթիվ հասարակական և քաղաքական հաստատություններ, որոնք հայերը դարեր շարունակ կառուցել էին Կովկասում և Թուրքիայում, ոչնչացվել էին: Հայկական միջին խավը՝ ժամանակին արտոնյալ վերնախավը Թիֆլիսում և Բաքվում, այժմ վստահություն չէր վայելում Վրաստանի և Ադրբեջանի նոր խորհրդային կառավարությունների մոտ: Նրանց ոչ նախանձելի ընտրությունն էր կամ

հարմարվել օտար սոցիալիստական կարգին, կամ գաղթել Արևմուտք: Պատերազմի, ցեղասպանության, հեղափոխության և քաղաքացիական պատերազմի յոթ տարիներին (1914-1921 թթ) հայ հասարակությունը բազմաթիվ առումներով «ապաարդիականացվել էր», հետ էր դարձել դեպի իր նախակապիտալիստական երկրագործական տնտեսություն ու ավելի ավանդական գյուղացիական հասարակություն: Եվ այսպես՝ Առաջին Հանրապետությունը հավակնելով ստեղծել ընդարձակ Հայաստան՝ խիստ սահմանափակ միջոցների և հզոր հակառակորդների պայմաններում հայտնվեց աշխարհաքաղաքական անձուկ փակուղում և կործանվեց, այլընտրանքը պարտադրաբար եղավ Խորհրդային Հայաստանը:

Հարավկովկասյան պետությունների դիվանագիտության լուրջ պարտությունն էր նաև 1920 թ. ապրիլի 19-ից ապրիլի 26-ը Սան Ռեմոյի կոնֆերանսի ձախողումը, որի ընթացքում Վրաստանի և Հայաստանի պատվիրակությունները տարածքային վեճերի լուծման հարցում չկարողացան միմյանց հետ համաձայնության գալ, ինչն էլ առիթ տվեց մեծ տերությունների կառավարություններին հրաժարվելու իրենց բոլոր մշուշոտ խոստումներից՝ աջակցելու անդրկովկասյան հանրապետություններին՝ Ադրբեջանին, Հայաստանին և Վրաստանին, ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի առաջխաղացման: Այդ պահից դեռևս անկախ հարավկովկասյան հանրապետությունները (Ադրբեջանն արդեն խաղից դուրս էր մնացել, այդ պահին դեռևս անկախ էին Հայաստանն ու Վրաստանը) արևմտաեվրոպական տերությունների կողմից թողնվեցին ճակատագրի քմահաճույքին:

Հենց արևմտյան տերություններն էլ դրդեցին քեմալական ուժերին և արդեն 1919-1920 թթ. սահմանագծում աստիճանաբար ուշքի եկող Ռուսաստանին գնալու ռազմաքաղաքական մերձեցման և միմյանց աջակցության, որի հարցում Թուրքիան անմասն չմնաց: Այս հանգամանքը պատմագիտության կողմից անբավարար է հետազոտված, թեև կան այդպիսի փաստեր: Այսպես՝ 1920 թ. սեպտեմբերի 17-ին Նովոռոսիյսկ է ժամանում թուրքական «Այդին-Ռեյս» հրետանավը, իսկ հոկտեմբերի 17-ին՝ «Փրեվեզ» հանմանման հրետանավակը: Մուստաֆա Քեմալի կառավարությունը խորհրդային հրամանատարությանը տրամադրում է այդ նավերը գեներալ Վրանգելի դեմ պայքարելու համար:

Որպես հետևանք՝ ամբողջական ռազմական ջախջախման և քեմալական Թուրքիայի կողմից հայկական տարածքի սրընթաց զավթման պայմաններում Հայաստանի Հանրապետության կառավարությունը թույլ տվեց Վրաստանի զորքերին ժամանակավորապես՝ 3 ամսով, զբաղեցնել Լոռվա չեզոք գոտին՝ իբր թե այն թուրքերի կողմից գրավել թույլ չտալու համար: Սակայն նոյեմբերի 16-ին վրացական զորքերը ոչ միայն գրավում են չեզոք գոտին, այլև տեղաշարժվում ավելի առաջ՝ դուրս գալով նախկին Թիֆլիսի նահանգի հին սահմանագիծ, որը Վրաստանում համարվում էր անվիճարկելի և արդար սահման հարավկովկասյան երկու հանրապետությունների միջև: Դա հաստատվեց նաև Մոսկվայի պայմանագրով, և Վրաստանի կողմից հսկողության տակ առնվեց Բորչալուի գավառի նախկինում վիճարկելի ողջ հատվածը, որտեղ վրացական կողմը կարճ ժամկետում անցկացրեց պլեբիսցիտ՝ հանրաքվե, որի հիման վրա ողջ Բորչալուի գավառի Լոռու հատվածը, այսինքն՝ և՛ չեզոք գոտին, և՛ 1919 թ. հունվարի 17-ի պայմանագրով Հայաստանի Հանրապետությանը հանձնված հողաշերտը անեքսիայի ենթարկվեցին Վրաստանի կողմից, և շուրջ մեկ տարվա ընթացքում նրա սահմանագծումը փոփոխության չենթարկվեց, իսկ հետագա զարգացումները մշտապես իրենց տիրույթում պահեցին սահմանազատման խնդիրները[15]:

Հայ ժողովրդի դաշնակից երկրները առաջին աշխարհամարտի ժամանակ մեծ հաճությամբ և արդյունավետությամբ օգտագործելով հայ ժողովրդի մարդկային և այլ ռեսուրսները՝ ի դեմս հայկական լեգիոնի, որի շարքերում հայերը տվեցին հազարավոր զոհեր[16], սկսեցին ոչ մեծ բնական ռեսուրսներ ունեցող Հայաստանը դիտարկել որպես «ցավալի թյուրիմացություն» և դժվար վճռելի հարցերի աղբյուր: Ըստ այդմ՝ նրանք ոչ միայն շտապողականություն չցուցաբերեցին վերջինիս տարածքային պահանջների բավարարման, այլև նույնիսկ նրա պետական անկախության ճանաչման խնդրում:

1920 թ. օգոստոսին՝ ՀՀ անկումից քիչ առաջ, հաղթող դաշնակից տերությունները Թուրքիայի հետ Սևրի հաշտության պայմանագիրը ստորագրելիս կարծես թե հաշվի առան Հայաստանի շահերը, ըստ որի՝ հայերին պետք է հատկացվեր նախկին Օսմանյան կայսրության տարածքի մի զգալի մասը, սակայն այդ պայմանները մնացին թղթի վրա: Ինչպես կարծում են մի շարք կովկասագետներ, դաշնակիցները ոչ մի ռեալ ցանկություն չդրսևորեցին օգնելու Հայաստանին՝ այդ տարածքների միացման հարցը լուծելու ռազմուժի միջոցով: Այդ հարցը ինքնուրույն լուծելու ՀՀ կառավարության փորձերը բախվեցին թուրքական նոր պատերազմի հետ, որի հարցում ուրույն դերակատարում ունեին «բոլշևիկյան Ռուսաստանի ու Ադրբեջանի «կարմիրները»[17]: Հայությունը կրեց ջախջախիչ պարտություն, և հայկական Առաջին հանրապետությունը կործանվեց՝ կուլ գնալով իրար հետ մերձեցած Թուրքիային և Խորհրդային Ռուսաստանին, որոնք իրար մեջ բաժանեցին Հայաստանի Հանրապետությունը[18]:

Ինչպես վերևում նշեցինք, որքան էլ որ քեմալական Թուրքիան և Խորհրդային Ռուսաստանը դաշնակիցներ էին, այդուհանդերձ թե՛ մեկին, և թե՛ մյուսին ամենևին էլ ձեռնտու չէր մյուսի ծավալվելը ռազմավարական շահեր ներկայացնող տարածաշրջանում, ինչպես և այսօր: Դա նկատել է նաև ադրբեջանցի հեղինակ Իլգար Նիֆտալիևը «Շարունակելով կասկածել Անկարային Անտանտի

հետ գաղտնի համաձայնության մեջ և ցանկություն ունենալով օկուպացնել ողջ Հայաստանը և ներխուժել Ադրբեջան՝ Մոսկվան հասկացավ, որ հասել է ռազմական միջամտության ժամանակը՝ նպատակ հետապնդելով շուտափույթ խորհրդայնացնել Հայաստանը, որպեսզի այն լիովին չկորցնի թուրքական ընդարձակվող ռազմական ներկայության պայմաններում: Գ Օրջոնիկիձեի առաջարկով, ինչը հավանություն ստացավ Ի Ստալինի կողմից, բոլշևիկները վճռեցին ռազմական եղանակով սեպի նման խրվել Թուրքիայի և Ադրբեջանի միջև, նրա համար, որպեսզի հայկական բուֆերի ստեղծմամբ հետագայում վերջիններիս զրկեն անմիջական սահմաններից»[19]: Դա ակնհայտորեն դրսևորվեց նաև Վրաստանի պարագայում 1921 թ. փետրվարին, երբ իրագործվում էր Վրաստանի խորհրդայնացման ծրագիրը, քեմալական Թուրքիան օգտվելով Վրաստանի ծանր կացությունից, Քյազիմ Կարաբեքիրի զորամասերն ուղարկեց՝ գրավելու Բաթումը և մի շարք այլ շրջաններ, ինչի մասին թուրք զորահրամանատարը բացեիբաց հայտարարեց 1921 թ. մարտի 17-ին, կարծելով, թե խորհրդային կողմը կամ չի հասցնի խոչընդոտել, կամ իրենք վերջինիս կկանգնեցնեն կատարված փաստի առջև: Չնայած վրացիների համառ դիմադրությանը՝ նրանք կարող էին պարտվել, եթե վրաց զորքերին չօգնեին ժամանակին տեղ հասած Կարմիր բանակի զորամասերը, որոնք էլ հարկադրեցին թուրքերին հեռանալ[20]: Խորհրդային Ռուսաստանը հաստատեց իր գերակայությունը այդ կենսականորեն կարևոր ռազմավարական հանգույցում:

Անտանտը խորհրդային կողմի այդ ռազմավարական ծավալումը անդրկովկասյան տարածաշրջանում դիտարկեց որպես փորձ Հայաստանը դարձնելու «իր միջնաբերդը» և հենակետը Արևելքում ազդեցությունը մեծացնելու նպատակով:

Խորհրդայնացման գործընթացից հետո դաշնակիցները ելնելով իրենց շահերից և աշխարհաքաղաքական նոր իրավիճակով պարտադրված՝ արխիվ ուղարկեցին իրենց հակաբոլշևիզմը: Դաշնակիցները հապճեպ լքեցին Անդրկովկասը՝ այն ճանաչելով բոլշևիկյան ազդեցության ոլորտ և հակվելով Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերությունների բարելավման անհրաժեշտության գաղափարին: Անտանտի գերագույն խորհուրդը 1920 թ. հունվարի 16-ին բանաձև է ընդունում Ռուսաստանի նկատմամբ տնտեսական շրջափակումը վերացնելու մասին, իսկ 1920 թ. նոյեմբերին Դ. Լլոյդ Ջորջը և խորհրդային կողմի ներկայացուցիչ Լ. Բ. Կրասինը նախնական համաձայնության են գալիս ռուս-բրիտանական տնտեսական պայմանագրի կնքման վերաբերյալ[21] սկսվում է առևտրական պայմանագրի ակտիվ քննարկումը, որը ստորագրվում է 1921 թ. մարտի 16-ին[22]: Արդյունքում Մեծ Բրիտանիայի վարչապետը ոչ միայն համակերպվում է Անդրկովկասում Խորհրդային Ռուսաստանի ներկայության փաստի հետ, այլև ոչ պաշտոնապես իր կառավարության համաձայնությունն է տալիս տարածաշրջանում վերջինիս ազատ գործելու հարցում[23]:

Այսպիսով՝ ազգամիջյան և աշխարհաքաղաքական զարգացումները 1918-1920 թթ. Անդրկովկասում ընթացել են ՀՀ ղեկավարության ու հայ ժողովրդի համար ամենաանպաստ ձևով: Հայաստանը դավաճանաբար լքվեց իր դաշնակիցների կողմից, սրընթաց գահավիժեց Սևրի լուծման չափազանց գայթակղիչ բարձունքներից և 1920 թ. աշնանը թուրք-հայկական պատերազմի ժամանակ հայտնվեց բոլոր կողմերից թշնամիներով շրջափակված անձուկ միջավայրում: Ինչպես 1920 թ., այնպես էլ 2020 թ. արցախյան պատերազմի ժամանակ Թուրքիան օժանդակեց Ադրբեջանի հաղթանակին, իսկ Թուրքիային էլ զգալի չափով օժանդակեց Ռուսաստանը, որի առումով չափազանց խոսուն են Անկարայում ռուս-թուրքական պայմանագրի 100-ամյակի առիթով 2021 թ. մարտի 16-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովում (պառլամենտ) կազմակերպված հանդիսությանը (կոնֆերանսին) Թուրքիայում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Ա. Վ. Երշովի կողմից «Թուրքիայի և Ռուսաստանի հարաբերությունները 1921 թվականի մարտի 16-ին կնքված Մոսկովյան պայմանագրի հարյուրամյակի կապակցությամբ» թեմայով ունեցած զեկույցում բերված ծանրակշիռ փաստերը. «Անտանտի և նրա դաշնակիցների դեմ այդ պատերազմում թուրքական զորքերի կողմից օգտագործված բոլոր փամփուշտների կեսից ավելին, յուրաքանչյուր չորրորդ հրացանը, յուրաքանչյուր չորրորդ հրետանին և յուրաքանչյուր հրետանապարկը ներմուծվել են Խորհրդային Ռուսաստանից:

Անկարայի կառավարության կողմից Գերմանիայում գնված 22 ինքնաթիռները Թուրքիա են հասցվել Ռուսաստանի տարածքով՝ առանց որևիցե մաքսային և հարկային տուրքերի: Նովոռոսիյսկի նավահանգստից «Շախին» նավով մեծ գաղտնիությամբ ինքնաթիռները արագ հասցվել են թուրքական ափամերձ գոտի: Ինքնաթիռների առաքումը համընկավ թուրքական բանակի հարձակման հետ, դրանք հաջողությամբ կիրառվեցին անատոլիական ճակատում:

Նույն ձևով Նովոռոսիյսկից Թուրքիա ուղարկվեց զենք և զինամթերք: Սևաստոպոլի և Ինկերուլուի միջև դիվանագիտական պատվիրակությունների և բանագնացների փոխադրության համար օգտագործվել են խորհրդային երեք ստորջրյա նավեր»[24]: 1920 թ. մարտի 27-ին ֆրանսիացի մարշալ Ֆոշը գրել է թուրքական կառավարությանը. «Ամեն գնով շարունակվող Ռուսաստանի ծովային մատակարարումները, ինչպես նաև թուրք ժողովրդի անանախադեպ ինքնազոհաբերությունը նրանց երբեք դժվար դրության մեջ չեն դնի»: Ժամանակակից հետազոտողների տվյալներով՝ ընդհանուր առմամբ Ռուսաստանը Թուրքիայի ազգայինազատագրական շարժմանը տրամադրել է մոտ 80 միլիոն թուրքական լիրայի չափով ոսկի՝ որպես օգնություն, որը 1920-ական թթ. սկզբին Մեջլիսի բյուջեի կեսից ավելին էր:

Խորհրդային մասնագետները օգնել են կարգա-

վորելու ռազմական արտադրությունը. նրանց ղեկավարությամբ կառուցվել է վառոդի երկու ֆաբրիկա, Ռուսաստանը ֆինանսական օգնություն է տվել դաշտային տպարաններ և կինոսարքավորումներ ձեռք բերելու համար: Մ. Վ. Ֆրունզեն Տրապիզոնում թուրքական իշխանություններին է հանձնել 100 հազար ռուբլի ոսկու հաշվարկով գումար՝ ռազմաճակատում ծնողներին կորցրած երեխաների համար որբանոց կառուցելու համար: Հենց դա նկատի ունենալով՝ նշվում է Մ. Ք. Աթաթյուրքի նամակի մասին՝ ուղղված Լենինին. «Պատմության հետ ընդհանուր կապի առումով, լցված արյունոտ պատերազմների աղմուկով, որոնք հարյուրամյակներով տեղի են ունեցել թուրքերի և ռուսների միջև, մեր միջև այդպիսի արագ հաշտեցումը ապշեցրեց այլ ազգերին: Թուրքիան ավելի մոտիկ է Ռուսաստանին, հատկապես վերջին ամիսների Ռուսաստանին, քան Արևմտյան Եվրոպային: Թուրքիան չի նահանջի իր կուրսից Սովետական Ռուսաստանի նկատմամբ, և հակառակի մասին բոլոր լուրերը զուրկ են հիմքից: Ես վստահեցնում եմ Ձեզ, որ մենք երբեք չենք ստորագրի համաձայնագիր և չենք մտնի ալյանսի մեջ՝ ուղղակիորեն կամ անուղղակի ուղղված ընդդեմ Խորհրդային Ռուսաստանի»[25]:

Թուրք-հայկական պատերազմի թեժ պահին՝ 1920 թ. նոյեմբերին, երբ ինչպես արդարացիորեն նշում է ժամանակակից առաջատար հետազոտողներից Վ. Մ. Մուխանովը, մեծ տերություններից և ոչ մեկը ցանկություն չունեցավ միջամտելու հակամարտությանը, ուղղակի Հայաստանը թողնվեց ճակատագրի քմահաճույքին:

Միանգամայն իրավացի է հայտնի թուրքագետ Ռ. Սաֆրաստյանը, երբ եզրահանգում է, որ Հայաստանի վրա հարձակման վերջնական ժամկետը որոշելիս հաշվի առնվեց հիմնականում արտաքին գործոնը: Ըստ հեղինակի՝ 1920 թ. օգոստոսի վերջին և սեպտեմբերի սկզբին իրադրությունն այնպիսին էր, որ Հայաստանի դեմ նախանշվող պատերազմին չէին միջամտի ո՛չ արևմտյան երկրները, ո՛չ էլ բոլշևիկները: Ըստ այդմ՝ որոշիչ նշանակություն ունեցավ քեմալականների և բոլշևիկների միջև փաստացի դաշնակցային հարաբերությունների հաստատումը: 1920 թ. սեպտեմբերի 8-ին Կարին (Էրզրում) հասավ Ռուսաստանից որպես օգնություն ուղարկած 200 կիլոգրամ ոսկին: Նրա մի մասը հանձնվեց Կարաբեքիրի հրամանատարության տակ գտնվող բանակին, մյուս մասը ուղարկվեց Անկարա և օգտագործվեց քեմալականների, պաշտոնյաների և սպաների աշխատավարձերը վճարելու նպատակով[26]: Ավելին, դաշնակիցները չէին էլ մտածում խանգարել Հայաստանի ոչնչացման՝ Մ. Քեմալի ագրեսիվ ծրագրերին: Ռ. Սաֆրաստյանի դիպուկ բնութագրմամբ՝ սկսած 1920 թ. ամռանից և մանավանդ՝ հայ-թուրքական պատերազմի սկզբնական փուլում քեմալականների ձեռք բերած հաջողություններից հետո Անկարայի և Լոնդոնի միջև ի հայտ եկան որոշ ընդհանուր եզրեր, սկիզբ դրվեց գաղտնի շփումների դիվանագիտությանը, դրան զուգընթաց առժամանակ Անկարայի սերտ հարաբերությունները Մոսկվայի հետ սկսել էին որոշ չափով սառել, և շփումները ընդունել էին անկանոն բնույթ: Թուրքական աղբյուրները նշում են, թե Քեմալը կարողացավ ճիշտ գնահատել այդ նոր ձևավորվող իրադրությունը և ճարպկորեն օգտվել դրանից[27]: Կարելի է ասել, որ 1920 թ. կեսերին իրավիճակը ավելի շուտ առավելություններ տվեց քեմալական Թուրքիային, քան բոլշևիկյան Ռուսաստանին, որը քաղաքացիական պատերազմից դժվարությամբ էր դուրս գալիս, դեռ բազմաթիվ տագնապներ ուներ, ինչն էլ պայմանավորեց Մ Քեմալի ճարպիկ խաղարկումը թե՛ անգլիացիների, թե՛ ռուսների և թե՛ հայերի մյուս դաշնակիցների հետ, ինչն էլ նրան գործողությունների ազատություն ընձեռեց Հայաստանի հարցում:

Թուրքիան կարողացավ ապահովել առավել բարենպաստ դիվանագիտական մթնոլորտ Հայաստանի դեմ պատերազմում իր ռազմավարական նպատակներին հասնելու համար:

Քաղաքական այդ ընթացքի նրբերանգները ընդհանուր առմամբ ճիշտ է նկատել Ալ. Խատիայանը. «Միւս կողմէ, Փարիզի Վեհաժողովը չափազանց կ՛ուշացնէր Թուրքիոյ խնդիրներով զբաղուիլը և քեմալականներուն ժամանակ տուաւ ուժեղանալու համար: Իսկ յետոյ, երբ Ռուսաստանը վերջացուց իր ներքին քաղաքացիական կռիւները, Դաշնակիցները վախցան բարդութիւններէն և հեռացան՝ բախտի բերմունքին ձգելով նորակազմ հանրապետութիւնները»[28] և որ ինքը «եկած է այն անխախտ համոզման, որ Դաշնակիցները լքեցին Հայաստանը, որ Թուրքերը ատկէ լայնօրէն օգտուեցան, բայց Թուրքերու գլխաւոր զինակիցները բոլշևիկներն էին, որ ոյժ և հնարաւորութիւն տուին Թուրքերուն յարձակելու Հայաստանի վրայ: Այդ անվիճելի փաստ է: Փաստ է նոյնպէս, որ իրար օգնելէ ետքը իրար մէջ բաժնեցին Հայաստանը: Եւ բոլշևիկները ըրին այդ ո՛չ թէ առանձին թշնամութենէն դէպի Հայաստանը, այլ դրդուած իրենց «համաշխարհային» քաղաքականութենէն, որուն համար անոնք պէտք կը զգային շահելու Թուրքերու բարեկամութիւնը՝ զոհաբերելով Հայաստանը: Եւ բոլշևիկները Թուրքերուն տուին այն, ինչ-որ անոնք կուզէին – Կարսը, Սուրմալուն, Արտահանը, մնացած մասը, ինչ-որ Թուրքերուն պէտք չէր, այսինքն՝ Հայերով բնակուած շրջանները Ռուսները առին»[29]:

1920 թ. օգոստոսին՝ ՀՀ անկումից քիչ առաջ, հաղթող տերությունները Թուրքիայի հետ հաշտության պայմանագիր ստորագրելիս կարծես թե հաշվի առան Հայաստանի շահերը, ըստ որի՝ հայերին պետք է տրվեր նախկին Օսմանյան կայսրության տարածքի մի մասը: Այն մեծ տպավորություն թողեց հայ քաղաքական շրջանակների վրա, սակայն հայտնի պատճառներով Սևրի պայմանագիրը չմտավ գործողության մեջ: Իսկ արդեն 1921 թ. փետրվարի 21-ից մինչև մարտի 14-ը Լոնդոնում տեղի ունեցած Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի կառավարությունների

ղեկավարների և արտաքին գործերի մինիստրների խորհրդաժողովում սկիզբ դրվեց Թուրքիային նոր զիջումների գնալու քաղաքականությանը: 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում Ֆրանսիայի և քեմալական Թուրքիայի միջև կնքված Ֆրանկլեն-Բույոնի պայմանագիրը Մերձավոր Արևելքում Սևրի համակարգի կործանման կարևոր փուլերից մեկն էր, որը հանգեցրեց Կիլիկիայի հայերի նոր սպանդին և հայաթափմանը: Եռյակ համաձայնության անդամ կենտրոնական պետություններից մեկը դուրս էր գալիս Սևրի համակարգից՝ դրանով իսկ Սևրի պայմանագիրը դատապարտելով չգոյության: Արտահայտելով ֆրանսիական կառավարող շրջանների այդ տրամադրությունները՝ Փարիզի քաղաքական շրջաններում մեծ հեղինակություն վայելող հրապարակախոս Մորիս Պերնոն գրեց. «Այլևս մենք չպետք է փորձարկումների ենթարկենք ո՛չ ինքնավար Քրդստանի և ո՛չ էլ անկախ Հայաստանի հարցերը»[30]: Եվ արդեն 1922 թ. նոյեմբերից մինչև 1923 թ. հուլիսը տեղի ունեցած Լոզանի կոնֆերանսում թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ Ինոնյուն հայտարարեց, որ քրդերը չեն ցանկանում բաժանվել Թուրքիայից, ինչպես որ նախատեսվում էր Սևրի պայմանագրով, որ Անատոլիայի քրդերը պատրաստ են թուրքերի հետ կողք կողքի, զենքը ձեռքին պայքարել Քրդստանը Թուրքիայից անջատելու ամեն մի փորձի դեմ[31]:

Ինչպես կարծում են կովկասագետներ Է. Անդերսենը և Գ. Պարխուլաձեն, դաշնակիցները ոչ մի ռեալ ցանկություն չդրսևորեցին՝ օգնելու Հայաստանին այդ տարածքների միացման հարցը լուծելու ռազմուժի միջոցով: Հայաստանը կանգնեց նոր փորձությունների ճանապարհին: ■

Գրականություն

1- Andrew Andersen and George Partskhaladze, Новый виток карабахского конфликта в контексте армяно-российских отношений. October 10, 2020:

2- Andrew Andersen and George Partskhaladze, նշվ աշխ:

3 «Հորիզոն», 31 մայիսի, 1918 թ, Թիֆլիս, «Զանգ», 7 հունիսի, 1918 թ., Երեւան: Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Հ Հ ԳԱԱ «Գիտություն» հրատ, Երևան, 2000, էջ 18:

4 Tsvetkova Tsvetelina, Turkish National Movement and Soviet Russia in Caucasus (1919-1922), Journal of Balkan and Black Sea Studies, Year I, Issue 1, Fall 2018, pp. 77-114:

5 Gökay Bülent, Turkish Settlement and the Caucasus, 1918-20. Middle Eastern Studies, Vol. 32, No. 2 (1996), p. 61, 68:

6 Ronald Grigor Suny, Armenia in the Twentieth Century (Chico, CA: Scholars Press, 1983), էջ 32-33:

7 Հովհաննիսյան Ռ., Հայ Յեղափոխական Դաշնակցության դերը Հայաստանի Հանրապե-տության մեջ// «Դրօշակ», թիւ 19 (1402), 13 յունվարի, 1993, էջ 32-33:

8 «Յառաջ», Երևան, 15 մայիսի, 1920, No 91:

9 Suny Ronald Grigor, Armenia in the Twentieth Century, Chico, CA: Scholars Press, 1983, pp. 32-33:

10 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 164, թ. 51-52, ֆ. 275, ց. 5, գ. 114, թ. 74-75:

11 Տես նույն տեղում:

1 Hovannisian Richard G., The Republic of Armenia, vol. IV, Between Crescent and Sickle: Partition and Sovietization (Near Eastern Center, UCLA), Berkeley-Los Angeles-London, 1996, p. 95:

13 Мустафа Кемаль. Путь новой Турции. Т. 3. Интервенция союзников. Греко-турецкая война и консолидация национального фронта. 1920–1921, М.: Гос. Изд-во Литиздат Н.К.Й.Д., 1934, с. 119:

14 Հայկական հարց. Հանրագիտարան, Եր., «Հայկ. հանր. հրատ.», 1996, էջ 212:

15 Վիրաբյան Վ., Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-1921 թթ, Եր, ԵՊՀ հրատ, 2016:

16 Վիրաբյան Վ., Պողոսյան Ս, Եփրիկյան Ա, Հայկական զինուժը 1914-1920 թթ, Եր, Լուսակն հրատ, 2020:

17 Տես Առաջնորդող հոդվածներ, «Երկու ճակատներու վրա. հայկական հաղթանակ թուրքերու և ռուսներու դեմ», «Ի՞նչ է իմաստը այս խաղերուն», «Ճակատամարտ», Կ Պոլիս, 1920, N 569, «Քեմալական գործողությունները Հայաստանի դեմ», «Թուրք հարձակողականը», N 574:

18 Մանրամասն տես Խուրշուդյան Լ., 2017, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, ԵՊՀ հրատ, էջ 192-349:

19 Տես lio-caucasus.org/assets/files/Нифталиев---Армяно-азербайджанский-территориальный-конфликт-в-советско-турецких-отношениях-(1920-год).pdf.:

20 Մայիլյան Բ Վ., Վրաստանի Հանրապետության 1918-1921 թթ արտաքին քաղաքակա-նության հիմնական ուրվագծերը, Չորրորդ տարեկան գիտաժողով, 30 նոյեմբերի-4 դեկտեմբերի, 2009 թ, Մաս I, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ՀՌՀ հրատ, 2010, էջ 135-136:

21 Lang D. M., A modern history og Georgia, London, Publisher : Weidenfeld and Nicolson, 1962, p. 231:

22 Վիրաբյան Վ 2021, Ազգամիջյան զարգացումները և Անտանտի պետությունները Անդրկովկասում 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո// Պատմություն և մշակույթ. Հայագիտական հանդես. Հատոր 2 (Գիտական հոդվածների ժողովածու). Հայագիտական հանդես, Եր., ԵՊՀ հրատ., 2021, 65-82:

23 Pipes R., The formation of the Soviet Union. Communizm and Nationalizm. 1917-1923 (Russian Research Center Studies), Cambridge, Massachusets (USA), Published by Harvard University Press, 1964, p. 234:

24 Посольство России в Анкаре Rusya Büyükelçiliği Ankara: https://www.aravot-ru.am/2021/03/16/ 352472/: Բեռնման օրը՝ 22.08.2021 թ.:

25 Տես Посольство России в Анкаре Rusya Büyükelçiliği Ankara: https://www.aravot-ru.am/2021/03/16/ 352472/: Բեռնման օրը՝ 22.08.2021 թ.:

26 Սաֆրաստյան Ռ., Մուսթաֆա Քեմալ. Պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.)/ Ռ. Ա. Սաֆրաստյան; ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Եր.: «Տիր» հրատ., 2019, Էջ 75:

27 Սաֆրաստյան Ռ., նշվ աշխ, էջ 80-81:

28 Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը. Բ տպագր., Բէյրութ, տպ. «Համազգայինի», 1968, էջ 193:

29 Տես Խատիսեան Ալ., նշվ աշխ, էջ 293:

30 Բայբուրդյան Վ., Քրդական հարցի արծարծումները միջազգային դիվանագիտության կողմից 1916-1923 թվականներին//Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ. Հատոր XXIX/ Խմբ. խորհուրդ՝ Ռ. Ա. Սաֆրաստյան և ուրիշ., Եր.: «Զանգակ» հրատ., 2014, էջ 211:

31 Բայբուրդյան Վ նշվ աշխ, էջ 212:

88 թ. մտավորականությունը ժողովրդին ոտքի հանեց

«Դրօշակի» հարցազրույցը Մովսես Հերկելյանի հետ
Արվեստաբան, արվեստաբանության դոկտոր

Դրօշակ — Ընկեր Մովսես, Դուք 1970-ականներին Լիբանանից եկել եք Հայաստան բարձրագույն կրթություն ստանալու նպատակով: Ուսանել եք Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնում, ինչպես նաև գեղարվեստաթատերական ինստիտուտի արվեստաբանության բաժնում՝ իբրև ասպիրանտ, ստացել եք արվեստաբանության թեկնածուի գիտական աստիճան: Հայրենիք գալիս ունեցել եք նաև այլ հանձնառություն: Պատմեք, խնդրում եմ, այդ ամենի մասին:

Մ. Հ. — Սկսեմ այնտեղից, որ ծնվել եմ Լիբանանի հայաբնակ Այնճար գյուղում: Գյուղի բնակչության 90 տոկոսից ավելին մուսալեռցիներ են: Գյուղն ունի իր քաղաքապետարանը, թեև այստեղ միշտ որոշիչ է Դաշնակցության «Կարմիր լեռ» կոմիտեի գործունեությունը: ՀՅԴ կոմիտեին կից այստեղ գործում էր Դաշնակցության «Բաբկեն Սյունի» պատանեկան միությունը, որի անդամ եմ եղել պատանության տարիներին: Երբ տարիքս հասավ, Դաշնակցության շարքերն անցնելիս երդմանս կընքահայրը եղավ նշանավոր ազգային-պետական գործիչ Կարո Սասունին: Սովորում էի գյուղի «Հառաջ» դպրոցում, մտածում էի, որ ավարտելուց հետո կդառնամ ատաղձագործ. սիրահարված էի, և մտքերս այս հարցերի շուրջ էին պտտվում: Այդ տարիներին գյուղ եկավ մտավորական մի մարդ՝ Սարգիս Ջեյթլյանը, որը դարձել էր «Կարմիր լեռ» կոմիտեի հերթապահը, միաժամանակ պատանեկան միության վարիչն էր և դպրոցի տնօրենը: Նշեմ, որ ծնված լինելով Մուսալեռում, նա նույնպես հասակ էր առել Այնճարում, այնուհետև ուսման և գործերի բերումով հեռացել էր գյուղից: Այնճարի ղեկավարության հրավերով նա այստեղ էր վերադարձել Եգիպտոսից: Ընկեր Ջեյթլյանը աչքի ընկնող, յուրատեսակ անձ էր, և պատանեկան միության անդամներն ու աշակերտները սիրում էին նրան: Նախակրթարանի հինգերորդ դասարանում էի, մի անգամ նա ինձ իր մոտ կանչեց, ասաց, թե ուզում է, որ զրուցենք, բայց ոչ որպես տնօրեն ու աշակերտ, այլ ինչպես դաշնակցական ընկերներ: Այն ժամանակ ես նկարում էի, գրում էի, բեմադրում էի և դերասանություն էի անում: Ընկեր Ջեյթլյանը տեղյակ էր այդ ամենից և այդ մասին խոսեց շատ երկար: Նա ինձ ասաց, որ կամ կշարունակեմ ապրել այդպես անհոգ՝ աղջիկ խաղացնելով, չարություններ անելով, կամ կսովորեմ և իմ այս շնորհքները զարգացնելով՝ լուրջ մարդ կդառնամ: Ինձ մտածելու համար մեկ շաբաթ ժամանակ տվեց, սակայն նրա սենյակից դուրս գալուց հետո որոշեցի, որ կանեմ այնպես, ինչպես ասել էր: Պատճառն այն էր, որ նրա մտերմիկ, անկեղծ խոսքը մեծ ազդեցություն էր ունեցել ինձ վրա: Նա ասաց, որ եթե որոշեմ հետևել իր խորհրդին, վստահ պետք է լինեմ, որ հանձին իրեն՝ դաշնակցական ընկեր ունեմ, որն իմ կողքին է լինելու:

Ես շարունակեցի ուսումս: Իհարկե, կովարար էի, որի պատճառով հեռացրին դպրոցից, հաճախեցի բողոքականների դպրոց, սակայն այստեղից էլ ինձ վտարեցին վատ վարքիս պատճառով: Ինչևէ, ի վերջո ավարտական վկայական ստացա, որից հետո այցելեցի ընկեր Ջեյթլյանին: Այդ ժամանակ արդեն նա փոխադրվել էր Բեյրութ, որտեղ կենտրոնական կոմիտեի հերթապահն էր և «Վահե Սեթյան» տպարանի տնօրենը: Նա ինձ տարբեր հանձնարարություններ տվեց, իսկ մի օր էլ, երբ արդեն ՀՅԴ բյուրոյի անդամ էր, կանչեց և ասաց, թե իմ «մարզական» պարապմունքներն ու մյուս զբաղմունքները պետք է թողնեմ, քանի որ իրենք ուզում են ինձ ուղարկել Հայաստան՝ ուսումը շարունակելու: Բացատրեց, որ ինձ համար հեշտ չի լինի Հայաստանում հաստատվելը, և ճանապարհը ինքս պետք է գտնեմ: Մեկ ամիս չանցած՝ կրկին կանչեց: Այս անգամ երեքով էինք. ներկա էր նաև Դաշնակցության բյուրոյի անդամ Հրայր Մարուխյանը: Նրանք երկուսով բացատրեցին ինձ, թե Հայաստանում ինչ եմ անելու: Ասացին, որ ես հայրենիքում պետք է դառնամ Դաշնակցության աչքը, պետք է նայեմ, թե ինչ է անցնում- դառնում, նաև պետք է այնտեղ տարածեմ «Բագին» ամսագիրը, «Ազդակ Շաբաթօրյակ-Դրօշակ» թերթը, ազգային-հեղափոխական գրականություն, ինչպես և Հայաստանում արգելված հայ գրողների աշխատությունները, ինչպես, օրինակ՝ Հակոբ Օշականի կամ Լևոն Շանթի ստեղծագործությունները: Ասացին նաև, որ գաղտնիության համար իմ գործը կլինի միայն իրենց երկուսի հետ: Անշուշտ, համաձայնվեցի: Այդպես էլ եղավ, հետագայում գործերով միայն նրանց հետ էի շփվում: Մորս ազգական Մարտիրոս Գուշակյանը համայնավար էր և համայնավարական «Կանչ» թերթի խմբագիրը: Նրա միջոցով դիմեցի Հայաստանում սովորելու համար, սակայն առաջին տարին մերժեցին, երկրորդ տարին ևս մերժեցին: Թույլատրվեց երրորդ տարին, և կարողացա գալ ու ընդունվել պետական համալսարան: Մինչ այդ Լիբանանում համալսարանի ճարտարապետական բաժին էի ընդունվել,

այնտեղի ուսումնառությունը թողեցի կիսատ և եկա Հայաստան: Ի դեպ, գալուց առաջ Սարգիս Զեյթլյանն ասաց. «Հայաստանում երկու մարդու իմ կողմից բարև կփոխանցես, իսկ հետո ինձ կասես, թե ինչպես արձագանքեցին»: Ասաց, որ երկուսն էլ իմ դասախոսներն են լինելու: Այդ մարդկանցից առաջինը Զավարյանն էր՝ Սիմոն Զավարյանի եղբոր տղան: Նա մեզ դասավանդում էր վրացական գրականություն, սակայն հիմնականում պատմում էր Սայաթ-Նովայի և Շոթա Ռուսթավելու «Վագրենավորի» մասին: Նոր տարվա նախօրյակին համալսարանի հին շենքում մի օր մոտեցա նրան և ասացի. «Ընկեր Զավարյան, ես Զեզ Լիբանանից բարև եմ բերել»: Նա ինձ մի անկյուն քաշեց և հարցրեց, թե՝ ումից, պատասխանեցի՝ Սարգիս Զեյթլյանից: Զավարյանը գունատվեց, ասաց. «Տղա՛ ջան, ես այդպիսի մարդու չեմ ճանաչում և այլևս ինձ նման բարևներ չբերես»: Ես հուսահատվեցի և երկրորդ անձին չէի ցանկանում մոտենալ, սակայն Նոր տարին մոտենում էր, Բեյրութ պետք է վերադառնայի և ընկեր Զեյթլյանին զեկուցեի իր հանձնարարության կատարման մասին: Երկրորդ անձը Ռաֆայել Իշխանյանն էր: Թեև Զավարյանի վերաբերմունքից հետո կասկածների մեջ էի, այնուամենայնիվ մի օր միջանցքում մոտեցա Իշխանյանին և փոխանցեցի բարևը: Նա զարմացավ, նախ հարցրեց, թե Բեյրութից եմ, պատասխանեցի, որ Այնճարից եմ: Իշխանյանն ասաց.«Ավելի լավ, ուրեմն դու մերոնքական ես»: Ուզում էր ասել՝ դաշնակցական: Հետո ավելացրեց. «Այստեղ խոսելու տեղ չէ, կգաս մեր տուն, կխոսենք»: Գնացի իրենց տուն, խոսեցինք, ասաց, որ ինձ պետք է ծանոթացնի իր փեսայի հետ: Այդ ժամանակ Իշխանյանի դուստրը և Վազգեն Մանուկյանը նոր էին նշանվել: Իշխանյանն ասաց. «Վազգենն էլ մարդ է փնտրում, որի միջոցով կարող է կապ հաստատել Դաշնակցության հետ»: Այդ օրերին արդեն Վազգենն ընդհատակյա խումբ ուներ: Մենք ծանոթացանք, մտերմացանք, և այդ մտերմությունը շարունակվում է մինչև այսօր:

Դրօշակ — Դուք այդ ժամանակ Զեզ հետ գրականություն էիք բերում և տարածում Հայաստանում:

Մ. Հ. — Այո՛, «Բագինը» և «Ազդակ Շաբաթօրյակ-Դրօշակն» էի տարածում, ինչպես նաև՝ գրականություն: Դրանք հիմնականում ուղիղ չէին մտնում Հայաստան, այլ Մոսկվայի կամ Օդեսայի ճանապարհով: Մանրամասների մեջ չմտնելով՝ ասեմ, որ տարբեր մարդիկ այս գործում օգտակար էին լինում: Օրինակ՝ Մոսկվայում շատ էր օգնում բանաստեղծ, թարգմանիչ Աբրահամ Ալիքյանը: Ալիքյանը ներգաղթած էր, Մոսկվայում ավարտել էր Գորկու անվան գրականության ինստիտուտը և նույն ինստիտուտում դասավանդում էր: Մաքսատան գրաքննիչները, (բնականաբար հայերեն գրականությունը հայերի ձեռքի տակով էր անցնում) կապի մեջ էին Ալիքյանի հետ և գիտակցաբար այդ գրականությունը հանձնում էին նրան: Իսկ Մոսկվայից Հայաստան մամուլն ու գրականությունը հասնում էր շատ հեշտությամբ: «Ազդակ Շաբաթօրյակ-Դրօշակը» բաժանվում էր շատ ավելի զգուշությամբ և ավելի քիչ մարդկանց, քան «Բագինը»: Այստեղ հասցնելու և տարածելու գործում լավ դերակատարություն ուներ Ռազմիկ Դավոյանը: Իր հետ տարիներ շարունակ ես շատ լավ գործակցել եմ: Ինչ-որ բաներ էլ ես էի սահմանով անցկացնում: «Բագինը» ես տալիս էի վստահելի մարդկանց՝ Սոս Սարգսյանին, Ռազմիկ Դավոյանին, Հրանտ Մաթևոսյանին, Բագրատ Ուլուբաբյանին և ուրիշների: Ինձ համար վստահելի գործակիցներ էին Ալբերտ Կոստանյանը, Մեյրան Խաթլամաջյանը, Պետրոս Այնթապլյանը, Ռուբեն Հովսեփյանը, Ռաֆայել Իշխանյանը, Աննա Պետրոսյանը և այլք: Մեզ հետ գործակցել են նաև Սիլվա Կապուտիկյանն ու Ալեքսանդր Թոփչյանը, որոնք թեև «Բագինը» ստանում էին այլ միջոցներով (առաջինը՝ «Մշակութային կապի կոմիտեի», իսկ երկրորդը՝ իր հոր՝ Էդվարդ Թոփչյանի միջոցով), սակայն նրանց նկատմամբ նույնպես մեծ վստահություն ունեինք: Թվարկված մարդկանց «Բագինը» տալիս էի ուղղակիորեն, ուրիշների դեպքում ամսագիրը դրվում էր դարակներում, և նրա մեջ գրություն էր լինում. «Կարդա՛ և փոխանցի՛ր»: Կարդացողը փոխանցում էր իրեն վստահելի մարդու: Բռնվելու դեպքում հնարավոր չէր շղթան բացահայտել: Համալսարանի պատմաբաններին «Ազդակ Շաբաթօրյակ-Դրօշակը» տալիս էր Ռ. Իշխանյանը: Նաև Պետրոս Այնթապլյանը կար, որը շատ զարգացած մարդ էր, լայն կապեր ուներ մտավորական շրջանակների հետ, նրանց փոխանցում էր «Ազդակ Շաբաթօրյակ-Դրօշակը» և «Բագինը»: Պետրոս Այնթապլյանը մամուլն ու գրականությունը տալիս էր նաև հորեղբոր տղային՝ Մացակ Այնթապլյանին, որն էլ տարածում էր դասախոսների և իր ուսանող ընկերների շրջանում:

«Ազդակ Շաբաթօրյակ-Դրօշակը», իհարկե, ես ավելի քիչ մարդկանց էի տալիս: Ռուբենի հուշերի կամ Վրացյանի «Հայաստանի Հանրապետության» նման գրքերը հասցվում էին, օրինակ, նաև Զոն Կիրակոսյանին կամ մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ալեքսան Կիրակոսյանին: Այս երկու անձիք կենտկոմի անդամներ լինելով՝ իրավունք ունեին գրադարանում արգելված գրականություն կարդալ, սակայն եթե այդպես անեին, պետք է արձանագրվեր, որ այդ մարդիկ այդ գրքերը կարդացել

են: Այդ պատճառով գերադասում էին շատ բաներ այսպես կարդալ: Գրքերն էլ շրջանառվում էին մամուլի պես՝ կարդալու և փոխանցելու շղթայով: Ասեմ, որ ամենամեծ ժողովրդականությունը վայելում էր Անդրանիկ Ծառուկյանի «Թուղթ առ Երևան»-ը: Սրա պահանջարկը այնքան մեծ էր, որ նույնիսկ խմորատիպ ձևով տպագրել և տարածել էինք: Այդպես խմորատիպ տարածվել է նաև Օտյանի «Փանջունին»:

Այդ տարիներին Սարգիս Ջեյթլյանը խմբագրին հանձնարարել էր, որ «Բագինը» քաղաքականանա: Պատահում էր, որ «Բագինը» ազգային անվտանգության կոմիտեի կողմից բռնագրավվում էր, բայց հետո այդ բռնագրավված օրինակը կրկին հայտնվում էր մարդկանց ձեռքին: Նշանակում է, որ հենց ազգային անվտանգության աշխատակիցներն էին այն տարածում: Երբ այս մասին Ջեյթլյանն իմացավ, թելադրեց Պողոս Մնապյանին, որպեսզի քաղաքականացնի «Բագինը», ինչը և Մնապյանը կատարեց հաջողությամբ: Մնապյանին հանձնարարվել էր նաև հատուկ ուշադրություն դարձնել հայաստանցի այն երիտասարդ գրողներին, որոնք իրենց ստեղծագործությամբ դուրս էին սոցիալիստական ռեալիզմի կաղապարներից: Դա վերաբերում էր գրականագետ Ալեքսանդր Թոփչյանի համախոհներին և ուրիշների՝ Հենրիկ Էդոյանին, Արտեմ Հարությունյանին, Դավիթ Հովհաննեսին, Սլավիկ Չիլոյանին, Արմեն Մարտիրոսյանին և այլոց: Այս մարդկանց հետ ես մշտապես մոտ եմ եղել, բայց արգելված էր նրանց «Բագին» տալը, որպեսզի չվտանգվեն: Այս գրողներից շատերին, սակայն, ամսագիրը կամ նրա առանձին նյութերը փոխանցում էր Ալեքսանդր Թոփչյանը, որին հասու էին իր հոր՝ գրողների միության նախագահ Էդուարդ Թոփչյանի ձեռքի տակ եղած օրինակները:

Դրօշակ — Անդրադառնանք Վազգեն Մանուկյանի հետ գործակցությանը:

Մ. Հ. — Երբ 1969 կամ 70 թվականին Վազգեն Մանուկյանը վերադարձավ Մոսկվայից, իր համախոհ ընկերների հետ արդեն ինչ-որ բաներ արել էր Մոսկվայում: Օրինակ՝ ցույցեր էին կազմակերպել Թուրքիայի դեսպանատան առջև, դրա համար ձերբակալվել էին և այլն: Այնտեղ նա ծանոթ էր եղել մի շատ կարևոր մարդու հետ: Այդ մարդը Համբարձում Հովակիմի Հարությունյանն էր, որին ավելի շատ ճանաչել էին որպես Համո Ակիմիչ: Նա եղել էր Խորհրդային Միության դեսպանը Կանադայում, որտեղ ծառայությունն ավարտելուց հետո վերադարձել և աշխատել էր ԽՍՀՄ արտգործնախարարությունում՝ որպես խորհրդական: Այս մարդը շատ լավ իմացել էր Խորհրդային Միության խոհանոցը, և առաջին անգամ ինքն էր Վազգենին ասել, որ Խորհրդային Միությունը քայքայվելու է, և մենք պետք է պատրաստ լինենք անկախության: Նա շուտ է մահացել, սակայն հասցրել է Վազգենին և ընկերներին քաղաքականապես դաստիարակել: Բացատրել է, թե ինչ է Ամերիկան, ինչ է Խորհրդային Միությունը, և ինքը համաձայն

է եղել անկախության գաղափարի հետ: Այս մարդն է Վազգենին ծանոթացրել մարշալ Բաղրամյանի, մարշալ Բաբաջանյանի և ծովակալ Իսակովի հետ:

Վազգեն Մանուկյանը պաշտոնյա չեղած ժամանակ շփվել էր նաև Հայաստանի կենտկոմի առաջին քարտուղար Զարուբյանի հետ, որը նույնպես մեծ հայրենասեր էր:

Դրօշակ — Այժմ խոսենք Վազգեն Մանուկյանի գլխավորությամբ համալսարանում գործած «Մշակութային ակումբի» մասին, ապա անդրադառնանք «Թարգմանչաց տոներին»:

Մ. Հ.— Մոսկվայից վերադառնալով՝ Վազգեն Մանուկյանը ցանկացել է այստեղ շարունակել իր ազգային գործունեությունը: Նա մտածել է, որ եթե քաղաքական բնույթի կազմակերպություն ստեղծի, իշխանություններն դրա դեմ անմիջապես կոշտ միջոցներ կձեռնարկեն և որոշել է մշակութայինի անվան տակ ստեղծել ինչ-որ կազմակերպություն: Համալսարանում ստեղծվում է «Մշակութային ակումբը», որը որոշ ժամանակ անց բացահայտվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է: Եթե չեմ սխալվում, 1972 թվականին ստեղծվում են, այսպես կոչված, «Թարգմանչաց տոները» իբրև թե պատմությունից հայտնի հայկական այդ տոնը տոնելու նպատակով: Այս անվան տակ հավաքները տեղի էին ունենում հիմնականում Մերգեյ Մերգելյանի ինստիտուտին պատկանող Ծաղկաձորի պանսիոնատում՝ Մերգելյանի հովանավորությամբ: Մերգելյանը Վազգենի հետ սերտ հարաբերությունների մեջ էր, ես էլ եմ շփվել իր հետ, ինչպես նաև Գուրզադյանի և Իոսիֆյանի նման մեծ գիտնականների հետ: Նրանք բոլորը հայրենասեր մարդիկ էին: Կազմակերպությունը հիմնելու համար ստեղծվել է ղեկավար մարմին՝ հանձնախումբ: Յոթ հոգանոց այդ հանձնախմբի մեկ անդամի՝ Վրեժի մահվանից հետո ինձ ընդգրկեցին...:

«Թարգմանչաց տոները» կազմակերպվում էին ամեն տարի աշնանը: Մերգելյանի գլխավորած ինստիտուտի պանսիոնատում հավաքվում էին մինչև 150 հայտնի մտավորականներ ու արվեստագետներ՝ դերասաններ նկարիչներ, գրողներ և այլն: Նրանց թվում էին Սոս Սարգսյանը, Լուսինե Ջաքարյանը, Խորեն Պալյանը, Մետաքսյա Սիմոնյանը, Սիլվա Կապուտիկյանը, Հրանտ Մաթևոսյանը, Բագրատ

Ուլուբաբյանը, Ռազմիկ Դավոյանը, Համո Սահյանը, Մուշեղ Գալշոյանը, Սերո Խանզադյանը, ճարտարապետներ Արթուր Թարխանյանը և Ջիմ Թորոսյանը, արվեստաբաններ Շահեն Խաչատրյանն ու Հենրիկ Իգիթյանը, նկարիչներ Հակոբ Հակոբյանը, Կարեն Սմբատյանը, Սեյրան Խաթլամաջյանը: Այս հավաքների ժամանակ քննարկվում էին մշակույթի, հայոց լեզվի և գրականության հետ կապված խնդիրներ, ինչպես նաև ազգային ու անկախության հետ կապված հարցեր: Այս ձեռնարկների նպատակներից մեկը մտավորականներին համախմբելն էր, օրինակ՝ ռուսականացման վտանգի դեմ մտավորականները պատրաստ էին միահամուռ պայքարի:

Նշածս հանձնախումբը գործում էր մի քանի ուղղություններով. անում էինք խիստ գաղտնի, կիսագաղտնի և բացահայտ գործեր: Այսպիսի սկզբունք կար, եթե անում էինք գերգաղտնի գործեր, մյուսներն այդ մասին չպետք է իմանային: Եթե որևէ մեկը որևէ տեղեկություն էր բերում, ոչ ոք չպետք է հարցներ, թե որտեղից է այդ տեղեկությունը:

Ասեմ, որ Դաշնակցությունը ամբողջովին տեղյակ էր այս գործունեությանը, ինչպես նշեցի, կապի մեջ էի Մարուխյանի և հատկապես Ջեյթլյանի հետ:

Դրօշակ — Ինչո՞ւ Դաշնակցության կողմից փորձ չի արվել ավելի սերտ կապեր հաստատել, գործակցել, կոսակցական բջիջներ ստեղծել Հայաստանում:

Մ. Հ. — Վազգեն Մանուկյանը ցանկանում էր, որ պաշտոնական հարաբերություններ լինեին, սակայն Ջեյթլյանը դեմ էր. նա ասում էր, որ բացահայտվելու դեպքում հետևանքները շատ ծանր կլինեն: Այդ պատճառով Դաշնակցությունը խուսափել է, օրինակ, նաև նյութական աջակցություն ցույց տալ: Կազմակերպությունն ինքն էր իր անդամների եկամուտներից հատկացնում գործերի համար: Մյուս կողմից՝ եթե Դաշնակցության անունն ի հայտ գար, շատերը կհեռանային: Ավելացնեմ, որ այս խմբի գործերին ամբողջովին տեղյակ էր Ռաֆայել Իշխանյանը, մասամբ՝ Հրանտ Մաթևոսյանը, Ռազմիկ Դավոյանը, Պետրոս Այնթապլյանը:

Դրօշակ — Ձեր ղեկավար խումբն ունենում էր իր առանձին ժողովները:

Մ. Հ. — Այո՛, և մեր ժողովները, քննարկումները տեղի էին ունենում հիմնականում Վազգեն Մանուկյանի տան նկուղում, ինքն էր մեր ղեկավարը, մենք բոլորս իրար «շեֆ» էինք ասում, որպեսզի չիմացվի, թե ո՞վ է մեր իսկական ղեկավարը, միաժամանակ դա մեր գաղտնաբառն էր (փարոլան): Այստեղ մենք հաճախ կարտ էինք խաղում, որպեսզի, եթե հանկարծ գան ձերբակալելու, տեսնեն, թե ինչով էինք զբաղված: Մեզ, իհարկե, հետևել են, հետագայում փաստեր են ի հայտ եկել, որ ուշադրության կենտրոնում ենք եղել: Ի դեպ, ինձ Հայաստանից «պերսոնա նոն գրադա» հայտարարելով՝ 81 թվականին արտաքսել են... Սովետից: Այսինքն՝ Հայաստանում 71-ից սկսած՝ 10 տարի գտնվելուց հետո: Գորբաչովի ժամանակ ինձ ներում եկավ:

Մի անգամ՝ 74 թվականին, Վազգենը եկավ և ասաց, թե հստակ տեղեկություններ ունի, որ Սովետը պիտի քանդվի, և մենք պետք է պատրաստվենք անկախության: Մենք թերահավատությամբ վերաբերվեցինք այդ մտքին: Այնուամենայնիվ, ես այս լուրը փոխանցեցի Սարգիս Ջեյթլյանին և Մարուխյանին: Մարուխյանն ասաց, թե ԿԳԲ-ն մեզ փորձում է, ցանկանում է իմանալ, թե ինչ ենք մտածում անկախության մասին, ինչ-որ բան անո՞ւմ ենք այս ուղղությամբ, թե՞ ոչ: Իր ասածի մեջ տրամաբանություն կար, իսկ Ջեյթլյանն ասաց, որ եթե նույնիսկ դա այդպես է, մենք պետք է պատրաստ լինենք անկախությանը: Պատմությունը, ցավոք, ցույց տվեց, որ պատրաստ չէինք այդ օրվան: Այո՛, մենք պատրաստ էինք ըմբոստության, և «Թարգմանչաց տոները» այս առումով մեծ դեր էին խաղացել: Անկախությանն առնչվող հարցերը քննարկվում էին այնտեղ, նույն կերպ մտածող մտավորականների համախմբում էր տեղի ունեցել, սակայն պատմությունը ցույց տվեց, որ մենք պատրաստ էինք ըմբոստության, բայց ո՛չ անկախության:

Դրօշակ — Այսինքն՝ կարելի է ասել, որ այդ շարժումը նախապատրաստեց սերնդի մի փաղանգի՝ ապագա անկախության համար:

Մ. Հ.— Ոչ թե մի հատվածի, այլ աչքի ընկնող և ճանաչված գրեթե ողջ մտավորականությանը: Առանց մտավորականության ժողովուրդը տեղից չի շարժվի: Այդ մտավորականությունը ժողովրդին ոտքի հանեց, իսկ անկախությունից հետո ամորձատեցին մտավորականությանը, և մենք այսօր, իբրև այդպիսին, բառի իրական իմաստով, մտավորականություն չունենք: Չկա այն մտավորականությունը, որը ժողովրդին կարող է ոտքի հանել, և սա արվել է ծրագրված ձևով:

Եղիշե Չարենց և Վահան Նավասարդյան

Դավիթ Գասպարյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արտասահմանյան ուղևորության օրերին՝ 1925 թ. փետրվարի 15-ի կիրակի առավոտյան, Չարենցն այցելում է Հռոմի ազգային թանգարան, ուր տեղի է ունենում նրա և Վահան Նավասարդյանի «չպայմանավորված» հանդիպումը:

Այդ «անակնկալ» հանդիպումը Հռոմի ազգային թանգարանի սրահներից մեկում Նավասարդյանի նախաձեռնությամբ Չարենցից գաղտնի կազմակերպել էին Մխիթարյան միաբանության հայր Դ. Տեր-Կյուլյանի հանձնարարությամբ Հռոմում Չարենցին ուղեկցող երկու ուսանողներ՝ ապագա բժիշկ Ահարոն Խաչատրյանը և ապագա ճարտարապետ Արման Սարյանը: Այդ օրը Չարենցին ուղեկցել է Արման Սարյանը, որը և հանդիպման անմիջական կազմակերպիչն էր[1]: Այդ հանդիպման տպավորություններով և, ընդհանրապես, ՀՅԴ-ի հանդեպ այդ տարիներին ունեցած վերաբերմունքով Չարենցը գրում է «Հանգուցյալ պարոնը կամ պարոն հանգուցյալը (Արտասահմանյան պատմվածք)» գրությունը (1925, 16. II, Հռոմ) և տպագրում[2]: Վահան Նավասարդյանի անդրադարձը «Չարենց: Հուշեր և խորհրդածություններ» գիրքն է (Կահիրե, 1957, վերահրատարակվել է Թեհրանում, 1962 և Երևանում, 2007):

Հռոմում կոմունիստ Չարենցի և դաշնակցական Վահան Նավասարդյանի «պատահական», «անակնկալ» հանդիպման մի դրվագ.

Նավասարդյան — Գիտցած ըլլաք, որ պիտի գանք, դահիճներ և ձեր ձեռքեն պիտի փրկենք մեր հայրենիքը, անիկա մերն է, մե՛նք կերտեցինք:

Չարենց — Հայ ժողովրդին պատուհասը եղած եք դո՛ւք, ձեր մտքեն բնավ մի անցնեք, թե օր մը կրնաք ոտք դնել հայրենի հողին վրա, քանի չեք փոխած ձեր խելքը, այդ օրը չեք տեսներ, հայ ժողովուրդը ատելով կ՛ատե ձեզ»[3]: Եվ այսպես՝ երկու ժամ:

Այսպես մտաբերում է հուշագիրը: Հիմա այս ամենն՝ ըստ գործող անձանց և գրավոր բնագրերի՝ Չարենցի արտասահմանյան պատմվածքի և Նավասարդյանի գրքի:

Չարենցն իր գրությունը բնորոշել է որպես «պատմվածք», մինչդեռ գեղարվեստական թանձր հագեցվածություն ունեցող ակնարկ է՝ որոշակի իրական հերոսով, նրա հետ անցկացրած խոսքուզրույցով: Գրել է արտասահմանում, երբ ավելի մոտիկ էր տեսնում ու զգում խորհրդային կարգերի նկատմամբ ստեղծված բացասական վերաբերմունքը և իրեն դրսևորում որպես անհողդողդ կոմունիստ: Արտասահմանյան շրջագայության այս օրերին Չարենցն այդպիսին էր. ընդամենը մի քանի տարի հետո շատ բան պիտի փոխվեր նրա մեջ: Փոփոխության անկյունադարձային ազդարարը պետք է լիներ արտասահմանից վերադառնալուց անմիջապես հետո

նրա կազմակերպած «Նոյեմբեր» խմբակցությունը: Ամենևին պատահական չէ, որ խմբակցության նախնական «Հոկտեմբեր» համահեղափոխական անունը նա դարձրեց «Նոյեմբեր»՝ դրանով իսկ պարզ ասելով՝ այո՛, խորհրդային, բայց մեր, տեղական պայմանները հաշվի առնելով: Սա այն էր, ինչ նորագույն շրջանի գրականության ձևավորման սկզբում իր հանրահայտ հոդվածում առաջ քաշեց Ալեքսանդր Մյասնիկյանը[4], ինչի համար սխեմատիկ կուսակցականները նրան հոչակեցին սպեցիֆիկ: Չարենցը ևս այս ճանապարհով գնաց դեպի համահայկականություն՝ ճանապարհ բացելով դեպի միջնադար, դեպի գրաբար, դեպի տոհմիկ հայրենի արժեհամակարգ:

Կիրակի առավոտ Չարենցն այցելում է Հռոմի ազգային թանգարան, առանց որևէ անակնկալի սպասելու՝ մտնում է ներս և միայնակ շրջում սրահներում, որովհետև «...դեռ չէին հավաքվել տուրիստները, այդ <...> համաշխարհային ցեցերը <...>, երբ մեկը, ետևից երևի մոտենալով, բռնեց հանկարծ թևս մի մի անասելի ֆամիլյարությամբ... Ցնցվեցի, Հռոմում ես չունեի բառացի և ոչ մի ծանոթ...»[5]: Չարենցը, պահպանելով իրավիճակի հավաստիությունը, հանդիպումը և հերոսին ներկայացնում է երգիծական-հեգնական-ծաղրական ոճով, ինչն իր հետ բերում է չափազանցություններ ու ծամածռություններ. «Ա՛, եթե չեմ սխալում՝ Դուք պետք է պարոն Չարենցը լինեք»,— ասում է Նավասարդյանը:

Չարենցի անդրադարձը. «...տպավորությունս այն էր, որ ես հանդիպում եմ մեկին, որին տարիներ առաջ տեսել եմ դագաղում... <...>, մի կենդանի ննջեցյալի, <...>, մի հարություն առած հանգուցյալի, որին ես ինքս սեփական աչքերով տեսել եմ դագաղում, անգամ ճանապարհ եմ դրել մինչև գերեզմանատուն և նույնիսկ մի բուռ հող էլ ինքս եմ ցանել վրան <...>: Եվ ահա հանկարծ, այսքան անսպասելի կերպով

Ե. Չարենցը և Ավ. Իսահակյանը Վենետիկում 1925 թ.

ելնում է դեմս նա՝ այդ հանգուցյալը... <...>, փաստը մնում է փաստ և այդ փաստն այն էր, որ այս կամ այն ճանապարհով կողքիս բուսած այդ պարոնն ամենայն սիրալիրությամբ նայում էր աչքերիս և արդեն սեղմում էր ձեռքս բարեկամական ամենայն քնքշությամբ»[6]:

Ձեռքսեղմումը փոխադարձվում է, բայց նա ստանում է Հանգուցյալ Պարոն անունը: Հիշում է նրան որպես խմբագիր «...մի հայտնի կուսակցության, ես անգամ կասեի՝ մի տիեզերական կուսակցության կենտրոնական թերթի»[7]: Նկատի ունի Թիֆլիսում լույս տեսնող «Հորիզոն» օրաթերթը, որի խմբագիրն էր Նավասարդյանը 1918 թ. հուլիսի 16-ից:

Զրույցը ծավալվում է. ինչ պետք է խոսեին երկու հայրենասեր հայորդիներ, որոնց բաժանում էր սոսկ, ...բայց աչալուրջ կուսակցական պատկանելությունը և Հայաստանի պատմաքաղաքական անցյալն ու ներկան: Մեկը մնացել էր անցյալում՝ որպես Հանգուցյալ Պարոն, մյուսը ներկան կառուցողն էր և իր օրերի երգիչը: Մեկը՝ վտարանդի, մյուսը՝ երկրի պատվիրակ, ճանապարհորդ: Չարենցը նշում է, որ իրենց զրույցը ներկայացնում է բառացի, այնպես, ինչպես եղել է. «Ընդհանրապես խնդրում եմ նկատել, որ ես այստեղ տալիս եմ այդ պարոնի խոսքերը՝ համարյա բառացի ճշգրտությամբ»[8]: Մոռանալու հարց չկար, որովհետև շարադրել է թարմ տպավորություններով անմիջապես հաջորդ օրը Հռոմում:

Մեկը մյուսին վերաճանաչելուց, առանձին դրվագներ հիշելուց հետո երկուսի առջև կանգնում է երեկվա ու այսօրվա Հայաստանի կերպարը: Նավասարդյանի կարոտն է, որ անգամ ձերբակալվելու վտանգն աչքի առաջ ունենալով՝ ասում է՝ ինչ գնով էլ լինի պիտի մեկնի Երևան. «Բայց ես չեմ կարող առանց Երևանի,— համարյա լացակումաց բացականչեց Հանգուցյալը:—Ես, ինչ էլ պատահի, պիտի գնամ, լսո՞ւմ եք: <...>: Օ՜, Դուք չեք կարող հասկանալ, թե ի՞նչ բան է հայրենիքը և ի՞նչ է հայրենիքի կարոտը... թեկուզ, ներողություն, կարծում եմ, որ Դուք անձամբ հասկանում եք... Այդ բանին ապացույց կարող է ծառայել Ձեր «Ես իմ անուշը...»... Օ՜, ես հիացած եմ Ձեր այդ բանաստեղծությամբ, ես նույնիսկ արտատպել եմ այն իմ թերթում»[9]: Խոսքի շաղախը նույնն է. «...քաղցր բան է հայրենիքը, պ. Չարենց և ոչ մի բանով չի կարելի փոխարինել»[10]: Այսպես շարունակվում է Նավասարդյանի կարոտաբաղձ խոսքը՝ Չարենցի միջարկումներով՝ «... ահռելի է, երբ մեռելը ծիծաղում է կենդանի մարդու վրա»[11]: Նավասարդյանի խոսքի մեջ հնչում են արտահայտություններ, որոնք Չարենցը գրանցում է. «Դուք չե՞ք վիրավորվում, որ բոլշևիկյան արյունարբու բռնակալության ագենտ եք և այդ չգիտեք»: «Եվ տղայական է ձեր այն միտքը, թե Դաշնակցությունը մեռել է երկրում: Դաշնակցությունը կա: <...>: Դուք չեք հասկանում Դաշնակցության մոգական ուժը, պարո՞ն. դա մի այնպիսի ուժ է, որ բոլոր հայերին կապում է իրար, այո՛, բոլոր հայերին, առանց բացառության: <...>: ...հարկավոր է բոլշևիկ չլինել: Թողեք ձեր հիմար դասակարգային թեորիան, պ. Չարենց, և մանավանդ ձեր սոցիալիզմը»[12]:

Նավասարդյանը հետաքրքրվում է Երևանի փողոցների նորոգմամբ... Եվ Չարենցը «մանրամասն պատմում» է ամեն ինչի մասին՝ մտքում ինքն իրեն հարց տալով, թե ինչո՞ւ է հետաքրքրվում միայն փողոցներով, բայց ոչ երկրի ընդհանուր շինարարությամբ: Չարենցը թեև հեգնանքով, բայց Նավասարդյանի խոսքերից արձանագրում է ճշմարտություններ. նրա ներքին դիրքորոշումը իր հերոսի հանդեպ ճիշտ այնպես է, ինչպես նոր-նոր ավարտած «Երկիր Նաիրի» վեպում, երբ թվում է, թե քննադատում է Մազութի Համոյին, բայց երգիծանքի թեթև շղարշի տակ Կարսի պաշտպանության կապակցությամբ նրա շուրթերից այնպիսի ճառ է հնչեցնում, կարծես Ղևոնդ Երեցն է Ավարայրի ճակատամարտից առաջ կամ Վահան Մամիկոնյանը՝ Վահանանց պատերազմից առաջ...

Հեգնական ժխտումով հաստատելու կամ համակրանք դրսևորելու այս բազմանիստ պտտվող խոսքը դառնում է չարենցյան ոճի անբաժանելի մասը: Իր ասելով՝ հասկացողը կհասկանա... Իսկ հասկացողը կհասկանա, եթե խոսքի այդ պտույտների միջով հետևի խոսքի իմաստին և շինծու արտաքին հեգնանքը սահմանազատի հաստատուն խոսքից:

Ահավասիկ Նավասարդյանի հերթական խոսքը. «Մի՞թե գաղտնիք է Ձեզ համար, որ հոժարակամ հանձնեցինք իշխանությունը ժողովրդին փրկելու նպատակով: Եվ մենք փրկեցինք ժողովուրդը՝ հեռանալով իշխանությունից»[13]:

Ի վերջո, Նավասարդյանը հետաքրքրվում է Հայաստանի շինարարությամբ և ավելացնում. «... մենք ընդհանրապես այն համոզմունքն ունենք, որ ինչ-որ շինում եք դուք երկրում, շինում եք մեզ համար: Այնպես որ, որքան շատ, այնքան լավ»[14]:

«Մեզ համար»-ը, ըստ էության, նույնն է, թե՝ երկրի համար, որովհետև կուսակցությունները գալիս են ու գնում, իսկ ժողովուրդը մնում է:

Հեգնանքը խորանում է այն աստիճան, որ, եթե ձեր աչքերով նայենք իրականությանը, Հայաստանում չկան ո՛չ սրճարաններ և ո՛չ ճաշարաններ, չկան դահլիճներ, որպեսզի ժողովներ գումարվեն, իսկ կանայք սպիտակեղեն չեն օգտագործում, որովհետև չունեն, այլ տկլոր շրջում են Աբովյանով:

Սա խոսք ու զրույցի արտաքին ձևն է, բայց Չարենցը վեհանձնորեն պահում է հարգանքը զրուցակցի նկատմամբ, որովհետև հանգամանքների մեկ այլ դասավորության դեպքում տեղերը կարող էին նույնությամբ փոխվել: Սա երկու պատասխանատու հայի հայելային անդրադարձ խոսքն է հայրենիքի ճակատագրի հանդեպ: Իսկ խորքում հաշտությունն է, որի խորհրդանշական արտահայտությունը Նավասարդյանի նամակն է, որ նա տալիս է Չարենցին՝ Երևանում հանձնելու մորը:

Ամբողջ շարադրանքի ընթացքում Չարենցը մի քանի անգամ հիշում է իր մոր խոսքերը հանգուցյալների մասին, ըստ որի՝ նրանց հանդեպ պետք է լինել մեղմ ու բարի: Երկու մայրերն էլ դեռ ապրում էին, և նրանք ըստ էության, դառնում են Մայր Հայաստանի խորհրդանշանը և խորքում հաշտեցնում երկու որդիներին, որոնք հայրենիքի համար նույն մարդն էին, եթե չլինեին կուսակցական տարբերությունները: Իսկ կուսակցականությունը, վերջին հաշվով, երբեմն հասցնում է ոչ միայն գաղափարական մոլեռանդության, այլև՝ մոլագարության: Համենայն դեպս կատաղի բոլշևիկները քիչ չէին հատկապես 1920-1930-ական թվականներին:

Հուսալով, որ ընդամենը երկու տարի անց իրենք Երևանում կլինեն, Նավասարդյանը, ինչպես աննկատ եկել էր, այդպես աննկատ էլ հեռանում է Չարենցի գրության մեջ...

Չարենցի ասած այս պատմվածքը՝ իրականում ակնարկը, նրա հանճարի բացառիկ փայլատակումներից է: Այո՛, ինքը հանդես է գալիս որպես կոմունիստ և հեգնում է Դաշնակցության երևելի դեմքերից մեկին, բայց խորքում միասնությունն ու ընդհանրությունն ավելի շատ է, քան արտաքին ձևի մեջ դրված առճակատումը: Այդպես, որովհետև խորքում հայրենիքի բախտն ու ճակատագիրն էր, իսկ նրանք անձնապես իրար հետ հակասություն չունեին. միայն կուսակցականն էր կուսակցականի դեմ, այնինչ խորքում երկու հայրենասեր հայեր էին, որոնք կայացած հայրենիք էին երազում...

Վահան Նավասարդյանը (1886-1956) ուսանել է Պետերբուրգի համալսարանի պատմության և տնտեսագիտության բաժանմունքներում: Երիտասարդ տարիքից մտել է Դաշնակցության շարքերը և դարձել կուսակցության եռանդուն գործիչներից մեկը, 1919 թվականին կուսակցական ցանկով ընտրվել է ՀՀ խորհրդարանի: Առաջին հանրապետության անկումից հետո հեռացել է Պոլիս, Բեռլին, ապա հաստատվել Կահիրեում և 1922-ից ստանձնել ՀՅԴ օրգան «Հուսաբեր» օրաթերթի խմբագրի պաշտոնը, վերջին տարիներին, մինչև մահ՝ խմբագրապետ: Շուրջ քառորդ դար եղել է ՀՅԴ Բյուրոյի անդամ: Նրա գիրքը լույս տեսավ ետմահու:

Գրքում նշում է, որ Չարենցին ճանաչել է «...երկրից. ավելի ճիշտը՝ այն օրից, երբ ընկ. Աղբալյանը նրա ծնունդն ավետեց»[15]: Ասում է, որ «անակնկալ» հանդիպումն, իբր, տեղի է ունեցել Չարենցի նախաձեռնությամբ, որը չի համապատասխանում իրականությանը: Գրում է. ««Մի օր ինձ մոտ եկավ իմ և Չարենցի մեկ ընդհանուր ծանոթը և մտերմաբար ասավ. «Ձեզ մի հետաքրքրական լուր, այստեղ է Չարենցը, իրեն հայտնեցի Ձեր մասին. փափագ ունի Ձեզ հանդիպելու, բայց չի ուզում, որ Դուք այս մասին իմանաք. Ես խոստացա հանդիպումը գլուխ հանել և իր փափագը Ձեզանից գաղտնի պահել <...>: Հաջորդ օրը, «անակնկալի եկած», թանգարանի նկարներից մեկի առջև տեսա Չարենցին ու դրանից հետո այն մի քանի օրը, որ ես մնացի Հռոմ, մենք եղանք գրեթե միասին»[16]: Խոսում է «Հանգուցյալ պարոնը կամ պարոն հանգուցյալը» գրության մասին. «...Չարենցը մեր հանդիպումին գրական ձև է տված, արդեն խորագիրն իսկ մատնում է գրության թաքուն իմաստը, հանձին նվաստիս՝ Չարենցը պատահական հանդիպում է ունենում Հ. Յ. Դաշնակցության հետ, որ իր համոզումով՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո ամեն տեղ մեռած ու գերեզմանված պիտի լիներ...»[17]:

Ահա նաև Չարենցի գրությանը նրա տված գնահատականը. «...Չարենցը ընդարձակորեն տալիս է միայն մեկ մասը այն զրույցի, որ զանազան՝ «գերազանցորեն քաղաքական», հարցերի շուրջ նա ունեցավ ինձ հետ: Ես չեմ կարծում, թե այդ զրույցից որևէ բան նա թաքցրած լինի իր իշխանավորներից: Եվ պատճառ չուներ այդպես անելու, լիապես համոզված եմ, որ առանձին գրությամբ նա մեր հանդիպումը իր անխարդախ ձևի մեջ հանձնած է, ուր պետք է:

Խորքին մեջ անճիշտ խոսք չունի Չարենցը. մեր զրույցի նաև այն մասի մեջ, որ հրատարակության տված է, բայց միայն, ինչպես ասացինք, գրական ձևի տակ: Ճիշտ չէ ձևը, բայց ոչ խոսքը»[18]: Սա լավ է, որ երկուստեք վկայում են, որ խոսքի նենգափոխություն չի եղել. Փոխադարձ վստահությունն էլ արժեք է տալիս նրանց գրություններին:

Նավասարդյանը Հռոմի Via Imperia պողոտայի պատին տեսնում է պատմական քարտեզ՝ Հայաստանով հանդերձ, ներշնչվում ու «Չարենցի շքեղ երգը՝ «Ես իմ անուշ Հայաստանի»-ն քաղցրությամբ և լի հոգիով» արտասանում, բայց վեճը շարունակվել է: Չարենց. «Եթե իմանայի, թե այդքան Դուք պիտի սիրեք այդ կտորը, ես այն չէի գրի: <...>: Ո՛չ, կգրեի, բայց չէի հրապարակի»[19]: Հրաժեշտից առաջ Չարենցն ասել է. «Ո՛վ գիտե՝ հիմա ի՞նչ բաներ պիտի գրեք մեր հանդիպումի և մեր ունեցած զրույցների մասին»: Նավասարդյանը պատասխանում է. «Չէ՛, ոչ միայն լրջացել և հասունացել եք, այլև անհամեստացել. ի՞նչ պիտի գրեմ Ձեր մասին և ինչո՞ւ պիտի գրեմ, որքան մեծ բանաստեղծ եք, այնքան փոքր քաղաքական դեմք եք, ո՞վ է հետաքրքրվողը Ձեր քաղաքական դատումներով, իսկ ինչ վերաբերում է Ձեր գրական տաղանդին, այդ մասին Աղբալյանն արդեն խոսել է, ես նոր ի՞նչ պիտի գրեմ: Չարենցը չառարկեց և չբողոքեց. իբրև բարեկամներ բաժանվեցինք մենք և բաժանվեցինք առհավետ»: Եվ այս հատվածի վերջաբանը. «Ես, համաձայն խոստումիս, որևէ տեղ ոչինչ չգրեցի,

Վահան Նավասարդյանը տիկնոջ՝ Հերսելիա Նավասարդյանի հետ Լոնդոն 1952 թ.

անգամ իր «Պատմվածքը» լույս տեսնելուց հետո, ուր բանաստեղծը, քաղաքական գործչի հովեր առնելով, քաշքշում էր ինձ և Դաշնակցությունը»[20]:

Վերջում Նավասարդյանը Չարենցին է հանձնում Երևանում ապրող մորը հասցեագրված նամակ, որը Չարենցը վերադարձին հանձնում է հասցեատիրոջը:

Նավասարդյանի գիրքն անձնական հանդիպման դրվագներից բացի՝ նաև Չարենցի ստեղծագործության վերլուծության փորձ է: Նախապես ասենք, որ կան փաստական տարբեր բնույթի վրիպումներ. գրում է՝ Հռոմից առաջ Չարենցը եղել էր Վենետիկում, մինչդեռ Վենետիկ պիտի գնար Հռոմից հետո[21], կարծիք է հայտնում, թե ««Երեքների» գրական այս որջի քայքայումին մեջ, ըստ երևույթին, իր մեծ դերը ունեցած է նաև ընկ. Ն. Աղբալյան»[22], մի բան, որ ամենևին այդպես չէ: Կա անտեղյակություն. նրան անհայտ է Չարենցի վերջին գրքի տպագրության պատմությունը, չգիտի, որ 1933-ին լույս տեսնելու փոխարեն «Գիրք ճանապարհին» փոփոխություններով լույս տեսավ 1934-ին և զարմանում է, թե ինչպես 1933-ին լույս տեսած գրքում կարող էին տեղ գտնել 1934-ին գրված գործեր. «Այս է, որ մնում է անըմբռնելի»[23]: Սկսում է 1922 թ. «Երեքի» դեկլարացիայից, հիշեցնում սեռական առողջ բնազդի տեսությամբ պոեզիայի մեջ կուտակված «բարոյական տիղմը»[24]: Անդրադառնում է Աղբալյանի «Եղիշե Չարենցն ու ես» («Ակոս», Զ., Բեյրութ, 1945) գրությանը, Աղբալյան – Չարենց հարաբերություններին, միջարկում, որ Աղբալյանի մասին խոսել են իրենց հանդիպումների ժամանակ: Այն կարծիքին է, որ Չարենցի «Ես այն չեմ այլևս…» բանաստեղծության «Գգվեց ինձ սիրով մի ձեռք հայրենի, // Եվ ես մի գիշեր իմաստուն դարձա» տողերի մեջ «հայրենի ձեռքը» իր «առաջին ուսուցիչ» Աղբալյանն է (Չարենցն այդպես է ընծայագրել իր մոսկովյան երկհատորյակի վրա):

Զրույցի ժամանակ Չարենցը ասել է. «Բարի եղեք, խնդրում եմ, ասել Նիկոլ Աղբալյանին, որ ես իրենից չեմ վախենում», հետո բացատրում է. «Նիկոլը կարծում է, որ ես իբրև բանաստեղծ կմեռնեմ, թող չվախենա, չեմ մեռնի»[25]: Մեջ է բերում Աղբալյանի բարձր գնահատանքի խոսքերը՝ «Նա մրրկահավն եղավ աշխարհասասան հեղափոխության…»[26] և իր կողմից ավելացնում. «Չարենցի հոչակը շատերի նախանձը շարժեց, և որքան ավելի ծավալեց պոետի համբավը, այնքան կրքերն ավելի բորբոքվեցին նրա անվան շուրջ»[27]:

Մեջբերումներով հիշատակում է «Էպիքական լուսաբաց» և «Գիրք ճանապարհի» ժողովածուները, «Դաշնակցականներին» բանաստեղծությունը, բացահայտում Դաշնակցության հանդեպ անդրադարձներն այդ գրքերում:

Հիշատակում է Մակինցյանի, Վանանդեցու, Դաբաղյանի, Տեր-Սիմոնյանի և այլոց կարծիքները Չարենցի մասին, Նաիրի Զարյանի մեղադրանքները, որն ամեն ինչի մեջ նացիոնալիզմ էր տեսնում: Այս մարդկանց միջոցով է, որ Չարենցը հռչակվում է նացիոնալիստ, դասակարգային թշնամու գործակալ, ժողովրդի թշնամի, անգամ հակահեղափոխական ու ահաբեկիչ: Նավասարդյանը ճիշտ հետևության է հանգում. «Չարենցի դեմ տեղացող մեղադրանքները խտացված են գլխավորաբար մեկ բառի մեջ՝ ԴԱՇՆԱԿԻԶՄ», այնուհետև. «Չարենցը փորձեց այս երկուսը՝ «Դաշնակցությունը» և «դաշնակիզմը», զատել իրարից, առաջինի դեմ պայքարել, իսկ երկրորդի հետ հաշտ ապրել, երբ խորքին մեջ էականը երբեք անոթը չէ (Դաշնակցություն), այլ ոգին, հոգեբարոյական այն գանձը, այն մեծ ու հավերժական գաղափարը (Դաշնակցություն), որ ամփոփված է այդ անոթի մեջ»[28]: Այս հայացքով Չարենցի բանաստեղծություններից բերում է տողեր, որոնցում նա «…պայքարում է Դաշնակցության դեմ» և տողեր, որոնցում թևածում են Դաշնակցության գաղափարները և, առաջին հերթին, «Պատգամ» բանաստեղծության միջնակապը՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»[29]:

Ըստ նրա՝ Դաշնակցության դեմ է ուղղված «Սոնետի» «Օ՜, դուք, որ բիրտ ու բութ՝ քարկոծել եք ինձ միշտ…» տողով սկսվող հատվածը[30], մինչդեռ.

«Չեմ հիշում, թե մենք պայքարած լինենք Չարենցի դեմ. ընդհակառակն, մենք սիրած ենք իր քնարը և մեծարած իր երկերը մեր հանդեսներում և հավաքույթներում»[31]:

Ուշագրավ է երկու Չարենց հարցադրումը. «...այն օրից, երբ Հայաստանում հաստատվեց խորհրդային իշխանությունը, երկու Չարենցներ հարատևաբար, մինչև պոետի եղերական մահը մաքառում էին իրարու դեմ»[32]:

Մեկը բոլշևիկ Չարենցն է, որ կուսակցական պարտավորություն ուներ, իբր «...երբեմն կորսվում, տկարանում և գլուխ ու հոգի էր ծռում մինչև իր քնարն ուրանալու աստիճան, մինչև պայքարը բուն իսկ Չարենցի դեմ»[33]:

Սա ուրացող Չարենցն է. ըստ նրա՝ ուրացավ «Ես իմ անուշ...»-ը, չգետեղեց «Երկերում»: Այնտեղ ասում էր. «Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա», իսկ «Գիրք ճանապարհի»-ում՝ «Օ՛, մռայլախոս դպիրներ սև, // Դռ՛ու Շնորհալի՛, և դու, Նարեկ»: Նավասարդյանը հավելում է. «Նարեկացու «լուսապսակ ճակատ»-ը իշխանավորի սաստի տակ այստեղ դարձել է... անլույս և անարև, դարձել է պատան մտքի, դարձել է դագաղ»[34]:

Մյուսը ազատ, ապերասան ասպատակն է: Այս տեսակետից ճիշտ դիտարկումներ է անում «Գիրք ճանապարհի» ժողովածուի տպագրության և դրա դեմ ուղղված բոլշևիկյան քննադատության մասին. գիրք, որը «փոթորիկ ստեղծեց իր շուրջ»[35]: Այստեղից անցնում է այդ գրքի վերլուծության և եզրակացնում, որ այն «...ճիշտ այս բևեռացած, երկու այս իրարամերժ զգացումների արտահայտությունն է»[36]:

Երկրորդ՝ Չարենցը, ըստ նրա, այլ է. «...ըմբոստացավ պոետը և պայքարի դրոշ պարզեց իր հալածիչների դեմ, ի հայտ եկավ, որ նա մի պահ տկարացած էր միայն մարմնով, բայց երբեք՝ հոգիով»[37]: Հղումներ է անում 1935-1937 թթ. «Գրական թերթի» արյունոտ էջերից, հասնում մինչև Չարենցով հետաքրքրված Ստալինի խոսքերին, անգամ տեղեկացնում, որ այն տպագրվել է չորս պաշտոնաթերթում («Պրավդա», «Իզվեստիա», «Զարյա Վոստոկա», «Խորհրդային Հայաստան»), մեր կողմից հավելենք՝ նաև «Գրական թերթում»:

Ճիշտ դիտարկում է Չարենցի պատմական հայացքի այս ճեղքումը. «Երկու ուժեր – վարիչ և ժողովուրդ...»[38], որոնք հակադրված են «Պատմության քառուղիներով» պոեմում. անանուն արքաներ են, իշխաններ և ճորտեր:

Մինչդեռ «Մահվան տեսիլ» պոեմում ամեն ինչ այլ է. քողարկված անուններ են, այդ թվում՝ ՀՅԴ-ի առաջնորդներ և երևելի դեմքեր[39]: «Հանդիպում ենք նաև «Հրդահյուն, Հրդահյուն, հրդահյուն»-ի, որ տարբեր մեկը չէ, քան Հ. Յ. Դաշնակցությունը»[40]:

Իսկ «Խան-Բան-ոտ» արտահայտությամբ Դաշնակցության գործերից պոեմում Չարենցն ակնարկում է նախ՝ 1897 թ. Խանասորի արշավանքը և ապա՝ 1896-ի օգոստոսին Բանկ Օտտոմանի գրավումը: Նրա մեջ հարգանք է առաջացնում Չարենցի «Մեր երկրի արի այրերից կազմված մեծ մի բանակ» տողը («Մահվան տեսիլ», տող 239):

Քանի որ ինչպես «Էպիքական լուսաբաց»-ում, այնպես և «Գիրք ճանապարհի»-ում և անտիպներում Չարենցը շատ հիմնավոր է անդրադառնում Դաշնակցությանը, ուստի հարցի քննարկումը մեր կողմից կանենք առանձին:

Անդրադարձ կա «Ընտիր էջեր հայ գրականության» (Երևան, 1946) գրքին, որի մեջ ստալինյան գործերով ընդգրկված է նաև Չարենցը («Երրորդ այգաբաց», «Թուղթ Իոսիֆ Ստալինին» պոեմի «Ուղերձը») և քննարկում է Չարենց - Ստալին հարցը:

Ճիշտ է ներկայացնում «Հայնրիխ Հայնե» բանաստեղծության էությունը, ըստ որի՝ այն ուղղված է բոլշևիկյան տականքի դեմ, որը սպառնում է իրեն[41]: Ամբողջությամբ մեջ է բերում «Պատգամը» և գնահատում համազգային նշանակությամբ, ըստ որի՝ այն ոչ թե հայության մասի մասին է, այլ ամբողջի, ինչի վկայությունը գաղտնագրի «հավաքական ուժ» արտահայտությունն է[42]:

Ըստ Նավասարդյանի՝ «Հայաստանը տակավին չխորհրդայնացած՝ Չարենցն արդեն Չարենց էր: <...> ... նրան ևս մենք ժառանգություն ձգեցինք նոր իշխանության և ելանք երկրից»[43]: Չարենցի գնահատությունն, ըստ ամենայնի, շատ բարձր է. «... նորագույն շրջանի մեծագույն բանաստեղծ»[44]:

Վերջում Չարենցի տողերով հիշում է Պուշկինին և ավելացնում. «Հավերժաբար մաքուր և մեծ պիտի մնա իր երախտագետ ժողովրդի մեջ նաև այս եղերաբախտ ու անմահ գուսանը՝ Հայոց Աշխարհի Պուշկինը»[45], այսինքն՝ Չարենցը:

Գիրքն ավարտվում է «Մայրս» վերջաբան-վերջերգով: Գրում է, որ նամակ տվեց, որպեսզի հանձնի մորը. «Եվ պոետն էլ սիրալիր պատրաստակամությամբ նամակս առավ և ծոցագրպանը դրավ»[46]: Հիշում է մորը՝ Հռիփսիմե Սաֆարյանին, հորը, որը մահացել է ամուսնությունից հինգ տարի անց՝ թողնելով երեք անչափահաս երեխաների: Շուշին կորցնելուց հետո տեղափոխվել են Թիֆլիս, այնուհետև հաստատվել Երևանում: Հայաստանի խորհրդայնացումից հետո ինքը տարագրվել է, մայրը մնացել է Երևանում: Մոր հետ պահպանվել է նամակագրական անխաթար կապ, ինչի համար իր գոհունակությունն է հայտնում խորհրդային իշխանությանը: Հաճախակի և շատ անհարկի հիշեցնում է, որ իր նյութական դժվար պայմաններում միշտ օգնել է մորը (իհարկե, պիտի օգներ, ինչ ասելու բան է):

Չարենցի «Արտասահմանյան պատմվածքը» «Խորհրդային Հայաստան» օրաթերթում տպագրվելուց հետո մայրը վրդովմունքով ու բողոքով գնացել է խմբագրություն, հասել մինչև խմբագիր, հայտնել դժգոհությունը. հանգստացրել, ճամփու են դրել:

Ավելի ուշ մայրը գրում է որդուն. «Մի օր դուռս մեկը ծեծեց, բացի ու տեսա, որ երիտասարդ ու կարճահասակ մեկը քաղցր ձայնով ինձ մայրիկ ասելով՝ մի նամակ է տալիս ինձ. Չարենցն էր, մեկ

այնպիսի լեզու բանեցրեց, որ ես ամեն ինչ մոռացած՝ կլոլակի հրավիրեցի իրեն. Կիրակի օրը եկավ ու կերավ. կարծեմ իր կյանքումը էդպես կլոլակ դեռ չէր կերած»[47]: Նորից հաղթում է մայրական համերաշխության ոգին, երկու որդիների միջև նորից կանգնում է Մայր Հայաստանը: Եվ ամենևին պատահական չէ, որ Նավասարդյանը գիրքը եզրափակում է Չարենցի «Մորս համար գազել»-ով և իր դեմ ուղղված Չարենցի հիշյալ գրությամբ: ■

Մորս համար գազել

Հիշում եմ դեմքը քո ծեր, մայր իմ անուշ ու անգին,
Լույս խորշոմներ ու գծեր, մայր իմ անուշ ու անգին:

Ահա նստած ես տան դեմ, ու կանաչած թթենին
Դեմքիդ ստվեր է գցել, մայր իմ անուշ ու անգին:

Նստել ես լուռ ու տխուր, հին օրերն ես հիշում այն,
Որ եկել են ու անցել, մայր իմ անուշ ու անգին:

Եվ հիշում ես քո որդուն, որ հեռացել է վաղուց,-
Ո՞ւր է արդյոք հեռացել, մայր իմ անուշ ու անգին:

Ո՞ւր է արդյոք հիմա նա, ողջ է արդյոք, թե մեռած,
Եվ ի՞նչ դոներ է ծեծել, մայր իմ անուշ ու անգին:

Եվ երբ հոգնած է եղել, և երբ խաբվել է սիրուց -
Ո՞ւմ գրկում է հեծեծել, մայր իմ անուշ ու անգին:

Մտորում ես դու տխուր, և օրրում է թթենին
Տխրությունը քո անծիր, մայր իմ անուշ ու անգին:

Եվ արցունքներ դառնաղի ահա ընկնում են մեկ-մեկ
Քո ձեռքերի վրա ծեր, մայր իմ անուշ ու անգին...

Ծանոթագրություններ

1 Տես Ա. Սարյանի հուշերը, «Սփյուռք», Բեյրութ, 1966, թիվ 38, էջ 2:

2 Տես ԽՀ, 1925, թիվ 77-78. 5, 7 ապրիլ:

3 Տես Ա. Խաչատրյան, «Եղիշե Չարենցի հետ Հոռմի մեջ», Բեյրութ, 1966, էջ 12-13, «Չարենցի հետ: Հուշեր», 1997, էջ 161:

4 Տես «Պրոլետարական գրականության նվիրված «Մուրճ» ամսագրի N 1-ի առթիվ», ԽՀ, 1922, թիվ 267-268, 1-2 դեկտեմբեր:

5 Տես Ռ. Արիստակեսյան, «Գրական վավերագրեր. 1920-1930-ական թվականներ», հ. 1, Ե., 2020, էջ 605:

6 Նույն տեղում:

7 Նույն տեղում, էջ 606:

8 Նույն տեղում, էջ 607:

9 Տես նույն տեղում, էջ 607:

10 Նույն տեղում:

11 Տես նույն տեղում, էջ 608:

12 Նույն տեղում, էջ 608, 609:

13 Տես նույն տեղում, էջ 609:

14 Տես նույն տեղում, էջ 609:

15 Տես Վ. Նավասարդյան, «Չարենց: Հուշեր և խորհրդածություններ», Ե., 2007, էջ 25:

16 Նույն տեղում, էջ 24-26:

17 Նույն տեղում, էջ 27:

18 Նույն տեղում, էջ 31-32:

19 Նույն տեղում, էջ 42: Նավասարդյանը նույնը մտաբերում է մեկ անգամ ևս էջ 49-50:

20 Նույն տեղում, էջ 43:

21 Նույն տեղում, էջ 27:

22 Նույն տեղում, էջ 33:

23 Նույն տեղում, էջ 41, էջ 51:

24 Նույն տեղում, էջ 22:

25 Նույն տեղում, էջ 42:

26 Նույն տեղում, էջ 43:

27 Նույն տեղում, էջ 46:

28 Նույն տեղում, էջ 58:

29 Տես Ե. Չարենց, ԵԺ, IV, էջ 427-428:

30 Նույն տեղում, էջ 399:

31 Նույն տեղում, էջ 59:

32 Նույն տեղում, էջ 60:

33 Նույն տեղում, էջ 60:

34 Նույն տեղում, էջ 49:

35 Նույն տեղում, էջ 64:

36 Նույն տեղում, էջ 68:

37 Նույն տեղում, էջ 50:

38 Նույն տեղում, էջ 75:

39 Տես ԵԺ, IV, էջ 231-241:

40 Նույն տեղում, էջ 78:

41 Տես նույն տեղում, էջ 91:

42 Նույն տեղում, էջ 96:

45 Նույն տեղում, էջ 131:

46 Նույն տեղում, էջ 132:

47 Նույն տեղում, էջ 145:

Վրիպած հուշի մի պատառիկ

Դավիթ Գասպարյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«Ալիք» թերթի խունացած էջերից հայտնաբերվել է հուշի մի պատառիկ, որ լույս է սփռում Եղիշե Չարենցի կյանքի մի դրվագի վրա: Հուշի հեղինակն է Սաքո Շատախունին, վերնագիրը՝ «Մի հուշ Չարենցի մասին»[1]: Հեղինակի մասին իր գրածից պետք է ենթադրել, որ 1921 թ. Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո բոլշևիկների կողմից ձերբակալված դաշնակցականներից է: Բանտում գտնվելու և հուշի տպագրության թվականներից դատելով՝ 1972-ին տարիքը պետք է լիներ 70-ի մատույցներում:

Հուշը վերաբերում է Չարենցի առաջին բանտարկությանը (5. X. 1926 – 24. II. 1927)[2]: Այդ ժամանակ Իսահակյանը Հայաստանում էր. այցելում է Չարենցին բանտ և նրա միջոցով դաշնակցական ընկերներին փոխանցում 500 ռուբլի: Չարենցը վերափոխանցման գործողությունը կատարում է հստակ, նաև գրությամբ տեղեկացնում, թե ում միջոցով է ստացել գումարը: Այսպես Չարենցը բանտում օգնում է նրանց, որոնց դեմ որպես կոմունիստ 1921 թվականի Փետրվարյան ապստամբության օրերին կռվում էր Արտաշատի ճակատում: Ահա այս փոփոխությունը նկատի ունի հեղինակը, երբ գրում է. «Բազմաթիւ են այն փաստերը, որոնք գալիս են հաստատելու, որ Եղիշէ Չարենցի մէջ բեկում էր առաջ եկել 1925 թւականին իսկ և ոչ թէ «Գիրք ճանապարհ[ի]»ի շրջանից»:

Չարենցի մեջ հեղափոխության հանդեպ բեկումն առաջացավ 1927-ից, բայց դա, բնականաբար, հասունացել էր աստիճանաբար: Որպես օրինակ հուշագիրը նշում է «Լենինն ու Ալին» պոեմը: Այս մասին առիթ ունեցել ենք մանրամասն գրել և ցույց տալ, որ Չարենցը հանճարեղորեն ակնարկել է, որ Լենինի մահը, այո՛, պիտի ողբար հենց թուրք Ալին և ոչ թե որևէ հայ աշխատավոր, որովհետև ռազմաքաղաքական գործունեությամբ Լենինը խորամանկ Աթաթուրքի բարեկամն էր և ոչ թե ոտքի տակ տրորված հայի[3]: Այդ նկատի ունենալով՝ հենց Ստամբուլում էլ 1924-ին Չարենցը գրեց ու տպագրեց «Ստամբոլ» պոեմը և ապտակի պես շրխկացրեց Թուրքայի դեմքին. «Մի անուն ունես, Ստամբոլ.- // Միջազգային պոռնիկ»:

Իրավացի է Շատախունին. «Չարենցը երբ գրեց «Լենինն ու Ալին» պոէման, նա արդէն բեկուած էր: Այնտեղ ասում է. «Լենինի մահաւն պատճառաւ տխրել է մեր դարաւոր թշնամու ներկայացուցիչ Ալին»: Այսպիսի վրանքաց ելոյթ՝ հաստատում է թուրք և բոլշևիկ բարեկամութիւնը...»:

Հուշագրի հաջորդ ակնարկը վերաբերում է Չարենցի «Սոմա» պոեմին: Հիշողությամբ պոեմի բնագրից բավականին շեղված և սխալ մեջբերում է անում և ենթադրում. «Սոման սոցիալիստական միութիւնն է, քուրմը Կրեմլինի գահակալներն են: Ասում է[՝] «անվերջ քեզ փնտռեցի, բայց քո մէջ սոցիալիստականութիւնը չգտայ, և քեզ սիրողը

պիտի մեռնի»»: Այս դատողությունը հեղինակը չի մանրամասնում և թողնում է որպես ենթադրություն: Մենք ևս մեր հերթին այս ենթադրությունը կթողնենք առկախ, որովհետև Չարենցի խորհրդանշանների բարդ համակարգի բացատրությունը այսպես նաև անհատական բնույթ ունի:

«Ալիքի» տպագրությունը սխալաշատ է. անհասկանալի է «մի կտոր թուղթ՝ ձեռքով գրած, տպագիր». և՛ «ձեռքով գրած», և՛ «տպագիր» միաժամանակ չի լինում: Ակնհայտ սխալների ուղղումները քառակուսի վանդակներով արել ենք շարվածքի մեջ, որպեսզի տեքստի նույնականությունը պահպանվի:

ՄԻ ՅՈՒՇ ՉԱՐԵՆՑԻ ՄԱՍԻՆ

ՍԱՔՕ ՇԱՏԱԽՈՒՆԻ

Անցեալում անդրադարձել ենք 1926-1927 թվականի մեր բանտային կեանքին Երևանում: Մենք քաղաքական բաժանմունքի խցիկներում էինք, և այդ ժամանակ Եղիշէ Չարենցը բանտարկուած էր հիւանդանոցին կից մի խցիկի մէջ, որի պատուհանը բացւում էր մեր պրագուլկայի բակի վրայ:

Մի օր պրագուլկայի ժամանակ բանտի բալանակիր [բանալիակիր] Մոկացի Խաչիկը բերնից թոցրեց և իր բանտարկեալ հայրենակցին ասաց. «...բանաստեղծ Աւետիք Իսահակեանը հիմա գալու է Չարենցի [Չարենցին] տեսութեան»:

Եւ իրօք, մեծ դարպասի բացերից երևաց Ավետիք Իսահակեանը, որից յետոյ մենք անցանք մեր խցիկները և չիմացանք, թէ որքա՞ն մնաց Չարենցի մօտ և ի՞նչ խօսեցին:

Երկու օր յետոյ, մեր պրագուլկայի ժամանակ Չարենցի պատուհանը յաճախ բացւում էր, և Չարենցի գլուխը երևում էր՝ դէս-դէն նայելով: Բայց մենք

Ավետիք Իսահակյան Եղիշե Չարենց

չգիտէինք, թէ ումն է փնտռում Չարենցը:

Այդ օրերում մեր սիրելի ընկեր Սահակ Ստեփանեանի աչքերը ցաւում էին, և շաբաթը երկու անգամ բանտային բժիշկ Լուսինեանի մօտ էին տանում: Նրա դարմանատունը կից էր Չարենցի խցիկին: Մի օր Սահակը բժիշկի կաբինետից դուրս գալու ժամանակ Չարենցը քսելով Սահակին՝ անցնում է: Սահակը զգում է ինչ-որ մի տարօրինակութիւն...

Խցիկը վերադառնալով՝ գրպանից հանեց մի թաշկինակ, բացեց ծալած թաշկինակը, տեսաւ 500 ռուբլի դրամ կայ մէջը և մի կտոր թուղթ՝ ձեռքով գրած, տպագիր.«Օգնութիւն բանտարկեալ դաշնակցականներին»:

Նախքան դա մի անգամ էլ մենք դրամական օգնութիւն ստացանք, բայց գիտէինք, թէ որտեղից էր: Այս վերջինը մեզ համար անհասկանալի էր և Չարենցի՛ միջոցով...

Ընկեր Սահակ Ստեփանեանը դրամը բաժանեց մեզ: Ընկերներ Աւս Դովլաթեանը և Շարուրցի Մուշեղը չվերցրին, խնդրեցին այդ գումարը բաժանել այն ընկերներին, որոնք աւելի կարիքի մէջ էին: Հաջորդ օրը Չարենցի պատուհանից մի լուցկու տուփի չափով թուղթ վար ընկաւ: Ընկերներից մէկը վերցրեց և յանձնեց Սահակին: «Ձեր նախկին մեծ քիթ ընկերը տուեց»,—գրուած էր թղթի վրայ: Մեզ համար պարզուեց, որ Աւետիք Իսահակեանն էր դրամը բերողը, բայց մինչև վերջ էլ չպարզուեց՝ ի՞նչ կողմից էր, թէ ինքը միայն փոխանցողն էր:

1924 թւականներին Երևանի համալսարանում ընդյատակեայ մի փոքրիկ խմբակցութիւն կար: Նրանք իրենց անկախ մարքսիստներ էին համարում, բայց կատաղի հակաբոլշևիկներ էին: Այդ խըմբակն ևս բանտարկուեց:

Նրանց մէջն էր Աւետիք Իսահակեանի եղբօր որդին՝ Աբաս Իսահակեանը, որին տեսութեան է գնում Աւետիք Իսահակեանը և առաջարկում է.«Դեկլարացիա ստորագրի՛ր, դուրս արի»:

Աբասը զայրացած՝ նրան վիրաւորում է՝ ասելով. «Փոխանակ մի բոմբով Չեկան պայթեցնելու, եկել ես ինձ դաւաճանական ճամբա՛յ ես ցոյց տալիս: Եթէ ինձ բարոյապէս չես ուզում օգնել, գոնէ օգնիր քո վաղեմի ընկերներին, որոնք խցիկներում բոլորը քայքայուած են և ենթակայ՝ թոքախտի»:

Աւետիք Իսահակեանը պատասխանում է.«Նրանց հանդէպ մի փոքրիկ պարտականութիւն կատարել եմ»:

Նորից մեզ համար չպարզուեց այդ գաղտնիքը, որով մենք շատ հետաքրքրուած էինք:

Բազմաթիւ են այն փաստերը, որոնք գալիս են հաստատելու, որ Եղիշէ Չարենցի մէջ բեկում էր առաջ եկել 1925 թւականին իսկ և ոչ թէ «Գիրք ճանապարհ[ի]»ի շրջանից:

Չարենցը երբ գրեց «Լենինն ու Ալին» պոէման, նա արդէն բեկուած էր: Այնտեղ ասում է[.] «Լենինի մահուան պատճառաւ տխրել է մեր դարաւոր թշնամու ներկայացուցիչ Ալին»:

Այսպիսի վրանքաց ելոյթ հաստատում է թուրք և բոլշևիկ բարեկամութիւնը...

Չարենցը մի բանաստեղծութիւն [պոեմ] ունի՝ «Սոմա» վերնագրով, ուր գրում է.

-«Որպէս քուրմը Գանգէսի կարօտակէզ, սիրակէզ,
կեանքս տուել եմ լոյսիդ և երգում եմ քեզ հիմա,
խելագար Սոմա:
Տարիներ անվերջ՝ աշխարհում մինակ
Ես քեզ փնտռեցի,
Սարեր ու ձորեր ջահեր վառեցի, բայց չգտայ քեզ:
Կեանքս երգ շինած՝ քե՛զ էի փնտռում այս չար
Աշխարհում,
Բայց չէի գտնում, Սոմա, ո՛չ մի տեղ:
Բայց պիտի մեռնի նա՝ ով որ քեզ սիրէ,
Խելագա՛ր Սոմա»:

[Մեջբերումն արված է հիշողությամբ և սխալներով]:

Սոման սոցիալիստական միութիւնն է, քուրմը Կրեմլինի գահակալներն են:

Ասում է. «Անվերջ քեզ փնտռեցի, բայց քո մէջ սոցիալիստականութիւնը չգտայ, և քեզ սիրողը պիտի մեռնի»:

Չարենցը բոլշևիկեան ուղկանը չընկնելու համար յաճախ է գործածել ակրոստիկոսներ, շատ խորիմաստ, այլաբանական մտքեր:

Նրա գրուածքները դեռևս կարոտ են լուրջ ուսումնասիրութեան:

Այդ բոլորով մէկտեղ, նա ի վերջոյ ընկաւ ուղկանը և զոհ գնաց ստալինյան հալածանքին:

«Ալիք», Թեհրան, 1972, թիւ 39, 19 փետրուարի շաբաթ, էջ 5:

Հղումներ

1 Տես «Ալիք», Թեհրան, 1972, թիվ 39, 19 փետրվարի, շաբաթ, էջ 5:

2 Տես Դ. Գասպարյան, «Եղիշե Չարենցի կյանքը և ժամանակը», 2022, էջ 341-357:

3 Տես Դ. Գասպարյան, Ընկեր Ալին ու արխադաշ Լենինը, «Հայ գրականություն», 2017, գիրք 6, էջ 303-307:

Մոռացված անուն եվրոպական հայասիրական շարժման մեջ Հովհաննես Լոռիս-Մելիքով

Գոհար Խանումյան
Պատմաբան

Պատմության մեջ հանիրավի մոռացված շատ անուններ կան. նրանցից է գիտնական, բժիշկ, հասարակական-քաղաքական գործիչ Հովհաննես Լոռիս-Մելիքովը, որը 20-րդ դարի սկզբներին Արևմտյան Եվրոպայում հայասիրական շարժման կազմակերպիչն ու համակարգողն էր:

Հովհաննես Լոռիս-Մելիքովի գործունեության վերաբերյալ կարևոր տեղեկություններ են պահպանվել հայ դիվանագետ Մարատ Խարազյանի[1] հրատարակած աշխատություններում, որոնք առանցքային դեր են ունեցել սույն հոդվածի համար:

Հովհաննես (Ժան) Լոռիս-Մելիքովը ծնվել է 1862 թ. նոյեմբերի 6-ին Թիֆլիսում: Սերում է Լոռիս-Մելիքովների ազնվական տոհմից: Նրա հայրը՝ Զաքարը, հայտնի պետական և ռազմական գործիչ Միքայել Լոռիս-Մելիքովի հորեղբոր որդին էր: Հովհաննեսը Թիֆլիսում գիմնազիան ավարտելուց հետո կրթությունը շարունակել է Փարիզի բարձրագույն բժշկական ակադեմիայում (1882-1888), որը հաջողությամբ ավարտելուց հետո պաշտպանել է ատենախոսություն. այս ընթացքում նա ուսումնասիրել է նաև միկրոկենսաբանություն՝ որպես բժշկության նոր ուղղություն: Փարիզում ուսումնառության տարիներին նա շփվել է ռուս նարոդնիկների հետ և որոշակիորեն ազդվել նրանց գաղափարներից: Ընկերական հարաբերություններ ուներ ռուս սոցիոլոգ, նարոդնիկության գաղափարախոս Պյոտր Լավրովի հետ: Ակադեմիան ավարտելուց հետո վերադառնում է Թիֆլիս, ուր միաժամանակ զբաղվում է բժշկությամբ և գիտությամբ: Մի քանի տարի անց՝ 1896 թ., Սանկտ-Պետերբուրգի բժշկական ակադեմիայում պաշտպանում է իր երկրորդ ատենախոսությունը[2]:

Հովհաննես Լոռիս-Մելիքովի համար ճակատագրական էր հանդիպումը Քրիստափոր Միքայելյանի հետ. նրանք դառնում են գաղափարակից ընկերներ: 1890 թ. ամռանը Թիֆլիսում հիմնադրվում է Հայ Յեղափոխական Դաշնակցությունը (հիմնադիրներ՝ Քր. Միքայելյան, Սիմոն Զավարյան և Ստեփան Զորյան (Ռոստոմ)). նորաստեղծ կուսակցության կենտրոնական վարչության առաջին անդամներից էր նաև Հովհաննես Լոռիս-Մելիքովը: Նրա թիֆլիսյան բնակարանում տեղի ունեցան կուսակցության հիմնադիր ժողովներ, այս տանը 1891 թ. տպվեցին «Դրօշակի» առաջին երկու համարները (մայիս, սեպտեմբեր)[3]:

1898 թ. ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովում Քրիստափոր Միքայելյանի նախաձեռնությամբ ձևավորվեց ՀՅԴ եվրոպական քարոզչության քաղաքական ծրագիրը, որի նպատակն էր ընդարձակել Հայկական հարցի օգտին տարվող քարոզչությունը[4]: Հովհաննես Լոռիս-Մելիքովը 1900 թ. Քրիստափոր Միքայելյանի առաջարկությամբ կրկին մեկնում է Փարիզ՝ Եվրոպայում հայասիրական քարոզչությունը համակարգելու նպատակով կապ հաստատելու եվրոպական երկրների քաղաքական և հասարակական գործիչների հետ: Կարճ ժամանակահատվածում Հովհ. Լոռիս-Մելիքովը Վիկտոր Ժակլարի[5] և Պիեռ Քիյառի[6] հետ թողարկեց «Պրո Արմենիա» պարբերականի առաջին համարը (25 նոյեմբերի, 1900 թ.): Անձնական կապերի շնորհիվ նրան հաջողվեց թերթի խմբագրակազմի մեջ ընդգրկել ֆրանսիացի նշանավոր մտավորականների և քաղաքական գործիչների՝ Անատոլ Ֆրանսին[7], Ժորժ Կլեմանսոյին[8], Ժան Ժորեսին[9], Ֆրանսիս դը Պրեսանսեին[10]: Հեղինակավոր խմբագրական կազմի ստեղծումը նպաստեց նրան, որ Եվրոպայում գործող բոլոր պրոհայկական խմբերը համախմբվեն: «Պրո Արմենիա» թերթի հրատարակչական ծախսերը ՀՅԴ-ն վերցրեց իր վրա[11]: Պարբերականը տպագրվում էր ընդամենը 2000 տպաքանակով և անվճար բաժանվում ոչ միայն գրադարաններին, այլ նաև պատգամավորներին, լրագրողներին, մշակույթի գործիչներին, այսինքն՝ հանրային կարծիքը ձևավորողներին: Հովհաննես Լոռիս-Մելիքովը, որին Ֆրանսիայում անվանում էին Ժան, ապահովում էր թերթի անխափան գործունեությունը՝ տարածքի վարձակալությունը, տպագրության համար անհրաժեշտ նյութերի ապահովումը, տպաքանակի տարածումը և այլն:



Հովհաննես Լոռիս-Մելիքով

Ֆրանսիայում հայասիրական շարժման ծավալմանն ուղղված ակտիվ գործունեությանը զուգահեռ Հովհ. Լոռիս-Մելիքովը աշխատանքի է անցնում Պաստերի ինստիտուտում՝ կատարելով բժշկագիտական ուսումնասիրություններ[12] և շուտով ստանում Ֆրանսիայի քաղաքացիություն (1903)[13]:

Հայասիրական շարժման հաջորդ փուլն, որն իրականացրեց Հովհ. Լոռիս-Մելիքովը, զանգվածային իրազեկման միջոցառումների կազմակերպումն էր Եվրոպայում: Այս աշխատանքը նա կատարեց հիանալի վարպետությամբ և բժշկին հատուկ բծախնդրությամբ. անձամբ ժամանելով եվրոպական երկրներ՝ նա ստանձնեց կազմակերպչական աշխատանքները: Այդ գործունեության արդյունքում 1902 թ. հուլիսին Բրյուսելում տեղի ունեցավ առաջին համաեվրոպական պրոհայկական համագումարը[14]՝ արմենոֆիլների բրյուսելյան կոնգրեսը, որն իրականացավ դանիացի արմենոֆիլների նախաձեռնությամբ: Բրուսելյան կոնգրեսը, ըստ էության, առաջին համաեվրոպական պրոհայկական կոնգրեսն էր:

Լոռիս-Մելիքովի ակտիվ գործունեության շնորհիվ հայասիրական շարժման մեջ ընդգրկվեց ևս մեկ եվրոպական երկիր՝ Իտալիան: Գրեթե բոլոր խոշոր իտալական քաղաքներում (Հռոմ, Միլան, Թուրին, Վենետիկ, Ջենովա) 1903 թվականից սկսած կազմակերպվում էին բազմահազարանոց ցույցեր՝ ի պաշտպանություն Օսմանյան կայսրությունում ապրող իրավազուրկ հայ ժողովրդի: Հայկական հարցին սկսեց ակտիվորեն անդրադառնալ նաև իտալական մամուլը[15]:

1903 թ. փետրվարի 3-ին Փարիզի «Շատո դ՛Օ թատրոնում» (Théâtre Château d'Eau) Հովհ. Լոռիս-Մելիքովի ջանքերով կազմակերպվեց խոշոր միտինգ, որին մասնակցեց 4000 մարդ: Հետաքրքիրն այն է, որ այստեղ ի պաշտպանություն Հայկական հարցի հավաքվել էին Ֆրանսիայի քաղաքական դաշտի անհաշտ գործիչները:

1903 թ. հոկտեմբերի 25-ին Փարիզում բացվեց արմենոֆիլների 2-րդ կոնգրեսը, որին մասնակցում էին Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից, Բելգիայից, Գերմանիայից, Դանիայից և այլ երկրներից շուրջ 60 պատվիրակներ: Նույն օրը Փարիզում անցկացվեց շուրջ երեք հազարանոց աննախադեպ խոշոր ցույց: Կոնգրեսի և միտինգի աշխատանքների հաջող կազմակերպման գործում իր ուրույն դերն ունեցավ Ժան Լոռիս-Մելիքովը: Այդ մասին «Պրո Արմենիա» թերթում (15 նոյեմբերի, 1903) Պ. Քիյառը գրեց. «Հոկտեմբերի 25-ի հաջողությունը պետք է վերագրվի բժիշկ Լոռիս-Մելիքովին, որը համբերատար, անխոնջ և համեստորեն կազմակերպեց ցույցը»[16]:

1904 թ. Սասունի կոտորածներից հետո Մեծ Բրիտանիայում հայասիրական շարժումը Լոռիս-Մելիքովի ջանքերով կրկին ակտիվացավ:

1904 թ. Սասունի հայկական կոտորածների հետ կապված եվրոպական հայասիրական շարժումը ավելի լայն թափ առավ: 1904 թ. հունիսի 29-ին Լոնդոնում ի պաշտպանություն հայերի տեղի ունեցավ բազմահազարանոց ցույց[17], որի ժամանակ զգացմունքային ելույթով հանդես եկավ Լոռիս-Մելիքովը: Կաթողիկոս Խրիմյան Հայրիկի նախաձեռնությամբ Ժան Լոռիս-Մելիքովը Հնդկաստանի և Պարսկաստանի արքեպիսկոպոսներ Սվաճյանի և Այվազյանի հետ ընդգրկվեց մի պատվիրակության մեջ, որն եվրոպական բարձրաստիճան պետական գործիչների հետ հանդիպումների միջոցով պետք է հասներ Սասունում բարենորոգումների ծրագրի իրականացմանը: Հայկական պատվիրակությունը Ֆրանսիայում հանդիպեց արտաքին գործերի նախարար Թեոֆիլ Դելկասեի և նախագահ Էմիլ Լուբեի հետ: Մեծ Բրիտանիայում նրանց ընդունեցին արտաքին գործերի նախարար Լանսդաուն և Քենթրբերիի արքեպիսկոպոսը, իսկ ԱՄՆ-ում՝ նախագահ Թեոդոր Ռուզվելտը: Բացի վերոհիշյալ երկրների քաղաքական գործիչների մի քանի հայտարարություններից՝ պատվիրակությունն այլ էական արդյունքների չհասավ[18]:

1906 թ. Ժան Լոռիս-Մելիքովը հեռացվեց «Պրո Արմենիա» թերթի իր զբաղեցրած պաշտոնից և Եվրոպայում ՀՅԴ կողմից պրոհայկական պրոպագանդան իրականացնելուց: Նրա ակտիվ գործունեությունը առաջացրեց որոշ կուսակցական և ոչ կուսակցական գործիչների դժկամությունը:

Վերջիններս Քրիստափոր Միքայելյանի մահից հետո (1905) սկսեցին հանդես գալ Եվրոպայում նրա իրականացրած գործունեության դեմ: Նա ՀՅԴ-ից դուրս գալու դիմում գրեց, որն ուղղված էր կուսակցության IV ժողովին (Վիեննա, 1907 թ.): Այս կապակցությամբ Ալ. Շիրվանզադեն՝ Հ. Լոռիս-Մելիքովի կնոջ եղբայրը, գրում է. «Բժիշկ Հովհաննես Լոռիս-Մելիքյանը՝ Դաշնակցության գլխավոր հիմնադիրներից մեկը, նույնպես հեռացել էր կուսակցությունից՝ հանձնելով Պիեռ Քիյառին թե՛ «Pro Armenia» թերթի խմբագրությունը և թե՛ իր մոտ գտնված կուսակցական դրամը՝ մինչև վերջին

սանտիմ: Նա պնդում էր, թե Ավետիք [Ավետիս] Ահարոնյան, Ակնունի, Միքայել Հովհաննիսյան, մանավանդ այս վերջինը և չգիտեմ՝ էլ ովքեր իր դեմ որոգայթներ էին լարել և ոչ մի միջոց չեն խնայում իրան տապալելու ու վարկաբեկելու համար: Ես լավ էի ճանաչում բժշկի բնավորությունը. նա մի քիչ կասկածամիտ մարդ էր, բայց ներկա դեպքում նրա կասկածն իրավացի էր, ինչպես և այդ ապացուցվեց ապագայում: Մի անգամ նա ինձ ցույց տվեց Սիմեոն Զավարյանի մի ընդարձակ նամակը՝ Կ. Պոլսից գրած և խնդրեց թարգմանել: Այսօր ես բառ առ բառ չեմ կարող մտաբերել այդ նամակը, բայց լավ հիշում եմ, որ նրա բովանդակությունը բավական անմխիթար էր այն հայտնի դաշնակցականների վարքուբարքերի համար, որոնց մասին գրում էր Զավարյանը: Ինքը՝ Լոռիս-Մելիքյանն, [Լոռիս-Մելիքովը] ավելի արհամարհանքով էր խոսում իր նախկին գաղափարակիցների մասին, քան ատելությամբ: Դաշնակցությունից հեռանալով՝ նա չէր դադարել զբաղվել այսպես կոչված «Հայկական խնդրով»...» [19]:

Լոռիս-Մելիքովը հեռացավ Ֆրանսիայից և առժամանակ հաստատվեց Սանկտ-Պետերբուրգում (1906-1908): Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նա՝ որպես զինվորական բժիշկ, մասնակցեց արևմտյան և սալոնիկյան ռազմաճակատներին և պարգևատրվեց Ռազմական խաչով:

1919 թ. վարչապետ Ժ. Կլեմանսոյի առաջարկությամբ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությունը հատուկ առաքելությամբ նրան գործուղեց գեներալ Դենիկինի մոտ: Հետադարձ ճանապարհին Լոռիս-Մելիքովը այցելեց Վրաստան և Հայաստան: Այս ուղևորությունից հետո նա 1920 թ. ֆրանսերենով հրատարակեց իր «Ռուսական հեղափոխությունը և Անդրկովկասի նոր հանրապետությունները. բոլշևիզմ և հակաբոլշևիզմ» գիրքը (La Révolution Russe et les Nouvelless Républiques transcaucasiennes. Bolchévisme et Antibolchévisme, Paris, 1920): Հետագա տարիներին նա այս գրքի հիման վրա գրեց մի քանի հոդվածներ[20]:

1925 թ. հունվարի 1-ին ֆրանսիական «La Nouvelle Revue» պարբերականը հրատարակեց Ժան Ժորեսի և Անատոլ Ֆրանսի հին նամակները՝ ուղղված Հովհ. Լոռիս-Մելիքովին:

1920-ական թթ. Լոռիս-Մելիքովի նյութական վիճակը ծայրահեղ վատ էր. մահացել էին նրա նշանավոր արմենոֆիլ ընկերները (Պիեռ Քիյառը՝ 1912 թ., Ֆրենսիս Պրեսանսեն և Ժան Ժորեսը՝ 1914 թ., Անատոլ Ֆրանսը՝ 1921 թ.), իսկ երբեմնի կուսակցական ընկերները երես էին թեքել նրանից: Կյանքի վերջին տարիներն անցկացնելով միայնության մեջ՝ բոլորից լքված և մոռացված, Ժան Լոռիս-Մելիքովը մահացավ քաղցկեղից 1931 թ. հուլիսի 10-ին Փարիզի պանսիոններից մեկում: Նրա մահվան լուրը չարձանագրվեց Ֆրանսիայում լույս տեսնող ոչ մի հայկական պարբերականում:

Ժան Լոռիս-Մելիքովն օժտված էր անուրանալի տաղանդով. տարբեր համոզմունքների տեր մարդկանց միավորել հանուն արդար գործի, ինչպիսին Օսմանյան կայսրությունում ապրող հայ ազգաբնակչության շահերի պաշտպանությունն էր: Կարելի է ասել, որ նրա անձնային հատկանիշներով էր պայմանավորված Եվրոպայում 20-րդ դարի սկզբում սկսված հայասիրական շարժման վերելքը, որը, սակայն, մարեց և կորցրեց երբեմնի հուժկու թափը, երբ դրանից հեռացավ ազնվական ծագումով, կազմակերպչական ունակություններով և մարդկային տեսակին բնորոշ լավագույն հատկանիշներով օժտված անհատականությունը: ■

Օգտագործուած աղբիւրներ

1. Մարատ Խարազյան (1931, Թբիլիսի-2006, Երևան) -Հայ դիվանագետ, պետական, հասարակական գործիչ, գիտնական: 1953 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, ապա ուսումը շարունակել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանում: 1960-ական թթ. սկզբներին եղել է ՀՀ Կենտկոմի առաջին քարտուղար Յակ. Զարուբյանի օգնականը, 1966-1971 թթ.՝ Ֆրանսիայում ԽՍՀՄ դեսպանության քարտուղար, 1971-1993 թթ.՝ՀԽՍՀ մշակույթի նախարարի առաջին տեղակալ: 1998-2006 թթ. ապրել է Փարիզում: 2004 թ. Սորբոնի համալսարանում պաշտպանել է դոկտորական դիսերտացիան:
2. Марат Харазян, От иллюзии к трагедии; Франция и армянский вопрос (1894-1908), Ереван, 2011, стр. 386:
3. Лорис-Меликовъ, Иванъ Захаровичъ, Къ вопросу о продуктивном воспалении сухожилий: Дис. на степ. д-ра мед., Серия докторских диссертаций, допущенных к защите в Военно-медицинской академии в 1895-96 учебном году . №4:
4. Այս մասին մանրամասն տես Գ. Ս. Խուդինյան, ՀՅ Դաշնակցությունն առաջավորասիական և արևելաեվրոպական երկրների քաղաքական համակարգերում 19-րդ դարի վերջերին, 20-րդ դարի սկզբներին, «ՎԷմ», ԺԴ (Ի) տարի, թիվ 4 (80), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2022, էջ 35-59:
5. Շաղ Վիկտոր Ժակլար (1840-1903)-ֆրանսիացի հայասեր, լրագրող, հեղափոխական գործիչ, բժիշկ: Փարիզյան կոմունայի մասնակիցներից է:
6. Պիեռ Քիյառ (1864-1912)- ֆրանսիացի հայասեր, գրող հրապարակախոս:1893-1896 թթ. Կ. Պոլսում դասավանդել է Կեդրոնական վարժարանում: Ականատես է եղել Օսմանյան կայսրությունում հայերի հանդեպ իրականացվող համիդյան կոտորածներին և այդ օրերին թղթակցել է ֆրանսիական թերթերին: Եղել է «Պրո Արմենիա» թերթի խմբագիրը: Հեղինակել է Հայկական հարցի վերաբերյալ մի շարք աշխատություններ:
7. Անատոլ ֆրանս(1844-1924)-ֆրանսիացի նշանավոր հայասեր, գրող, ֆրանսիական ակադեմիայի անդամ, Նոբելյան մրցանակի դափնեկիր: Նախկինում քաղաքականությամբ չհետաքրքրվող Անատոլ ֆրանսը Համիդյան կոտորածներից հետո Եվրոպայում դարձավ հայերի ամենաակտիվ պաշտպաններից մեկը: 1900-1908 թթ. եղել է «Պրո Արմենիա» թերթի խմբագրական խորհրդի անդամ: Մտերիմ ընկերական հարաբերություններ է ունեցել Հ. Լոռիս-Մելիքովի հետ:
8. Ժորժ Կլեմանսո (1841-1929)- ֆրանսիացի հայասեր, պետական-քաղաքական գործիչ, ֆրանսիական ակադեմիայի անդամ, բժիշկ: 1900-1908 թթ. եղել է «Պրո Արմենիա» թերթի խմբագրական խորհրդի անդամ: 1906-1909 թթ., 1917 թ.՝ Ֆրանսիայի վարչապետ: 1919-1920 թթ. եղել է Փարիզի հաշտության կոնֆերանսի նախագահ և Վեսալյան հաշտության պայմանագրի հեղինակներից:
9. Ժան Ժորես (1859-1914)- ֆրանսիացի հայասեր, քաղաքական գործիչ, պատմաբան, փիլիսոփա: «Պրո Արմենիա» թերթի խմբագրական խորհրդի անդամ:
10. Ֆրանսիս դը Պրեսանսե (1853-1914)- ֆրանսիացի հայասեր, հասարակական-քաղաքական գործիչ, Ֆրանսիայի խորհրդարանի պատգամավոր: «Պրո Արմենիա» թերթի խմբագրական խորհրդի անդամ:
11. Марат Харазян, От иллюзии к трагедии, էջ 238:
12. Պաստերի ինստիտուտ-ֆրանսիական մասնավոր գիտահետազոտական ինստիտուտ, որը զբաղվում է կենսաբանության, միկրոօրգանիզմների, ինֆեկցիոն հիվանդությունների և պատվաստանյութերի հետազոտություններով:
13. Տես Неизвестные имена, էջ 20:
14. Տես Марат Харазян, От иллюзии к трагедии, էջ 264-267:
15. Տես Марат Харазян, От иллюзии к трагедии, էջ 269-271:
16. Նույն տեղում, էջ 22:
17. Մեծ Բրիտանիայում հայասիրական շարժման մասին մանրամասն տես Բենիամին Պողոսյան, Հայասիրական շարժումը Մեծ Բրիտանիայում, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005:
18. Տես Марат Харазян, От иллюзии к трагедии, էջ 276:
19. Ալ. Շիրվանզադե, Երկերի ժողովածու, Կյանքի բովից, Հուշեր, հ. 8, Երևան, 1961, էջ 351:
20. Նույն տեղում, էջ 387:

Հայեացքը՝ լուսաստղին - ՄԱՅԻՍ 28

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Ինչպէս կ'ուզէք, բանաձևեցէք անոր խորհուրդը, ան է՛ ու կը մնայ միակ լուսաստղը, որ մեր ուղեցոյցն է, մեր անփոխարինելի՛ լուսաստղը, մեր անշեղ ուղեցոյցը:

«Ազատ, անկախ և միացեալ Հայաստան», «Ամբողջական Հայաստան՝ ամբողջական հայութեամբ»: Ահա թէ ինչ կը թելադրէ մեզի 28 ՄԱՅԻՍը: Ինչպէս կ'ուզէք, որակեցէք մեր գաղափարականի այս զոյգ բանաձևումները՝ երազատեսութիւն, թէ ցնորապաշտութիւն, պէտք չէ մտահան ընել, որ անոր հաւատքով դիմացանք մենք՝ տարագիր հայութիւնս, Մեծ եղեռնէն ետք, ամբողջ 70 տարի, մինչև Հայաստանի Հանրապետութեան վերանկախացում, այդ հաւատքով ալ դիմացաւ հայրենահայութիւնը, որքան որ ամեն ճիգ թափուեցաւ թշնամիին ու բարեկամին կողմէ՝ նսեմացնելու մեր այդ հաւատքը, պարպելու մեր հոգիները անոր ներգործութենէն:

ՄԱՅԻՍ 28:

Այո՛, մեր պատմութիւնը ունի ուրիշ յաղթանակներու շատ թուականներ, ինչպէս և ունի պարտութիւններու թուականներ, ունի մեծ խորհուրդներ բովանդակող իրադարձութիւններ, սակայն մեր գոյատևման ապահովումը՝ Սարդարապատի, Բաշ Ապարանի ու Ղարաքիլիսէի դիւցազնամարտերով ու Հայաստանի Հանրապետութեան ստեղծումը կը հանդիսանան հայոց պատմութեան նոր ժամանակներու ամենէն կարևոր իրագործումը: Եթէ մինչև 1991 բոլորս չէ, որ կը դաւանէինք այս իրողութեան, անկէ ասդին չեմ կարծեր, թէ որևէ ազգային կուսակցութիւն, որևէ ազգային ուժ այլևս տարբեր մօտեցում կը ցուցաբերէ:

Սա յաղթանակն է Գաղափարին:

Այսօր այդ Գաղափարի կրողն են աւանդական ազգային երեք կուսակցութիւնները, և այդ Գաղափարի կրողը պիտի ըլլան ՀՀ և թէ Արցախի Հանրապետութեան մէջ գործող կուսակցութիւնները, բացայայտօրէն զայն ընդունած ըլլան, թէ ոչ: Այլապէս ի՞նչ դերակատարութիւն կրնան ունենալ անոնք հայաշխարհի մէջ: Կրնա՞ն ընդդիմանալ «Ազատ-անկախ-միացեալ»-ին ու տակաւին ինքզինք հայ կարծել, կրնա՞ն ուրանալ կենսականութիւնը «Ամբողջական Հայաստան-ամբողջական հայութիւն» յղացքին ու յաւակնիլ գործելու հայութեան ու հայրենիքի հզօրացման ի խնդիր: Բոլոր կուսակցութիւնները՝ աւանդականներն ալ, նորերն ալ, կրնան ունենալ, ունի՞ն իրենց տարբեր տնտեսական, ընկերային, թէ այլ ոլորտներու հասկացութիւնները՝ կառավարելու մեր հայրենիքն ու հայաշխարհը, սակայն ազգի գոյութեան վերաբերեալ դժուար թէ այլ ըմբռնում կարելի ըլլայ երևակայել:

ՄԱՅԻՍ 28:

Այո՛, իհարկէ կայ դաստիարակութեան կարիքը, որ այս ըմբռնումը ընդհանրանայ: Սփիւռքի մէջ ըլլայ, թէ հայրենիքի: Պէտք է ընդունիլ, որ այս մարզին մէջ մենք աւելի քան հարիւրամեայ թերացում ենք արձանագրած: Հայաստանի Հանրապետութեան առաջին անկախութեան կորուստէն ետք, 1920-1921-էն ասդին մեր ամբողջ ճիգը պիտի ըլլար կրթել մեր ժողովուրդը, որ հաւաքաբար հաւատար ՄԱՅԻՍ 28-ի Գաղափարին, որ ան միայն փոքրամասնութեան մը հաւատամքը չըլլար: Այսինքն՝ հաւաքաբար ստանձնուէր Հայ դատի հետապնդումը: Երկար, շատ երկար ժամանակ առաւ, որ իրականութիւն դառնար այս կազմակերպակա՛ն մակարդակի վրայ: Իսկ անհատակա՞ն:

Որքան շատ էին անոնք, որոնք ջերմ պաշտպաններն էին լեզուի պահպանման, մշակոյթի փոխանցման, սակայն կը հակառակէին քաղաքականացման աշխատանքին, քաղաքակա՛ն աշխատանքին, այսինքն՝ Դատին՝ առանց անդրադառնալու, որ մէկը առանց միւսին անիմաստ կը դառնար: Ափսո՛ս, դեռ ալ կան այդպէս մտածողներ ոչ միայն ընդհանուր հասարակութեան մէջ, այլև նոյնիսկ մտաւորականութեան, ընտրանիին:

Չեն անդրադառնար անոնք, որ եթէ ճիշտ է, թէ հայրենի հողերու ազատագրումը և հայութեան համախմբումը քաղաքական, այլև ռազմական գործունէութեամբ է, որ կրնայ իրականանալ, ճիշտ է նաև, որ այդ ազատագրումն ու համախմբումը մեր լեզուն պահելու, մեր ինքնութի՛ւնը պահպանելու նպատակով է, մեր մշակոյթը զարգացնելու, քաղաքակրթութեան մեր սեփական ներդրումը ունենալ կարենալու համար: Ճիշտ է նաև, որ ինքնութեան պահպանումը պայման է Դատը հետապնդել կարենալու համար: Երկուքը անքակտելիօրէն շաղկապուած են իրարու: Այս դաստիարակութիւնը մեր առաջնահերթութիւնը պէտք է դառնայ: Առանց այդ դաստիարակութեան ինչպէ՞ս ունենալ հայրենիքի սահմանները պաշտպանող բանակ և ինչպէ՞ս ունենալ մայրենիքի անաղարտութիւնը պաշտպանող վաշտեր:

ՄԱՅԻՍ 28:

Ինքնութիւնը պահել՝ Դատը հետապնդելու համար, Դատը հետապնդել՝ ինքնութիւնը պահպանելու համար: Հող և մշակոյթ: Մշակոյթ և հող:

Հայրենիքի մէջ, թէ Սփիւռքի այս պիտի ըլլայ մեր կրթական ծրագրերու հիմքը, անկախ որևէ կուսակցական, դաւանական կամ այլ պատկանելիութիւններէ: Ահա ուղի մը երկարաժամկէտ համազգային աշխատանքի մը համար:

Բայց այս կը նշանակէ միասնական ծրագրում, կը նշանակէ կռուաններու ստեղծում, կը նշանակէ անդուլ ջանք ու ճիգ: Բոլորի՛ն մասնակցութեամբ:

«Ազատ, անկախ և միացեալ Հայաստան», «Ամբողջական Հայաստան՝ ամբողջական հայութեամբ»... կարգախօսներու կը վերածուին պարզապէս, եթէ չգիտակցինք, թէ ինչ պարտաւորութիւններ ունինք զանոնք կեանքի վերածելու համար: Ապրումի՛: Ամենօրեայ ապրումի՛:

ՄԱՅԻՍ 28:

Մեր լուսաստղը, որուն ուղղուած պիտի ըլլայ մեր հայեացքը այսօր և ընդմիշտ: ■

Հայաստանի և Արցախի հանրապետությունների քաղաքական ուժերի համատեղ հայտարարությունը

18 ՄԱՅԻՍ 2023

Բրյուսելյան վերջին հանդիպման ավարտին հայտարարված արդյունքները, ինչպես նաև Ռեյկյավիկում Ն. Փաշինյանի կողմից հնչեցրած մոտեցումները խոր մտահոգություն են առաջացրել հայ ժողովրդի մեջ:

Աշխարհաքաղաքական ստեղծված իրավիճակում հայ-ադրբեջանական բանակցությունների արհեստական արագացումը, այն էլ ճնշումների և սպառնալիքների ներքո թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ չի բխում հայ ժողովրդի շահերից:

Այսպես.

1 Ցանկացած բանակցային բովանդակություն, ըստ որի՝ Հայաստանի իշխանությունները համաձայնելու են, որ Արցախը լինի Ադրբեջանի կազմում՝ անտեսելով ինքնորոշման իրավունքը, զուրկ է օրինական հիմքից, քանզի հակասում է՝

- ՄԱԿ-ի կանոնադրությանը,
- Հելսինկյան եզրափակիչ ակտին,
- Արցախյան բանակցությունների միջազգայնորեն ճանաչված միակ ձևաչափի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից բանակցությունների ընթացքում ընդունված փաստաթղթերին,
- Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենսդրությանը,
- Արցախի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նիկոլ Փաշինյանը իրավասու չէ և որևէ լիազորություն չունի արցախյան բանակցությունների և հայ-ադրբեջանական կարգավորման շուրջ նման պայմանավորվածություններ ձեռք բերելու և խոստումներ տալու, առավել ևս, որ վերջին խորհրդարանական ընտրությունների ժամանակ իր տված խոստումներն ու կառավարության ծրագիրը արցախյան հակամարտության և հայ-ադրբեջանական կարգավորումների հետ կապված՝ պարունակում են բոլորովին այլ դրույթներ, քան հնչեցվում են միջազգային ձևաչափով տարբեր հանդիպումների ժամանակ և որևէ ամբիոնից պաշտոնական դիրքորոշում հայտնելիս:

3. Պետք է բացառել էքստերիտորիալ կոմունիկացիոն ցանկացած տիպի հաղորդակցում Հայաստանի Հանրապետության տարածքով:

4. Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ինքնիշխան տարածքներից անհապաղ պետք է դուրս բերվեն ադրբեջանական զորքերը:

5. 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարությունից հետո հայ ռազմագերիների գտնվելը ադրբեջանական կալանավայրերում եռակողմ հայտարարության կոպտագույն խախտում է, և նրանց ազատ արձակումը հրամայական է, այլ ոչ՝ բանակցությունների առարկա:

6. Բաքվի և Ստեփանակերտի միջև ցանկացած հնարավոր երկխոսություն պետք է իրականացնել միջազգայնորեն ճանաչված ձևաչափով և հստակ երաշխիքներով՝ հիմված կողմերի իրավահավասարության վրա՝ սահմանափակված չլինելով որևէ պարտադրված օրակարգով: Որևէ այլ ձևաչափ Արցախի ժողովրդի համար անընդունելի է:

7. Դելիմիտացիայի և դեմարկացիայի գործընթացները պետք է ամրագրեն արցախյան առաջին պատերազմի արդյունքում տեղի ունեցած փոխադարձ դեանկլավիզացիան և պետք է բացառել վերադարձ անկլավներին:

8. Միջազգային հանրության գերակա պարտավորությունն ու առաքելությունը հայ-ադրբեջանական կարգավորման հարցում պետք է լինի հրադադարի պահպանման երաշխավորումը, ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառման բացառումը, միջազգայնորեն ընդունված ձևաչափի գործարկումը՝ որպես բանակցային հարթակ և միջազգային իրավունքին համահունչ լուծումների առաջարկումը:

9. Անհապաղ պետք ապահովել Բերձորի /Լաչինի/ միջանցքի ապաշրջափակումը և նրա լիարժեք վերագործարկումը՝ 2020 թվականի նոյեմբերի 9-ի հայտարարությամբ ամրագրված պայմաններին համապատասխան:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հայտարարում ենք, որ ցանկացած բանակցային արդյունք, որը կհակասի այս դրույթներին, անընդունելի է ու չի արտացոլում աշխարհասփյուռ հայության շահերը, և Նիկոլ Փաշինյանը կամ որևէ այլ քաղաքական գործիչ իրավասու չէ բանավոր կամ գրավոր խոստումներ տալ կամ պարտավորություններ ստանձնել այս օրակարգից տարբերվող օրակարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցություն
ՀՀ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցություն
«Ազատություն» կուսակցություն
«Ազգային համաձայնություն» կուսակցություն
«Ազգային անվտանգություն» կուսակցություն
«Ազգային ժողովրդավարական միություն» կուսակցություն
«Երկիր ծիրանի» կուսակցություն
«Ժառանգություն» կուսակցություն
«Ինտելեկտուալ Հայաստան» կուսակցություն
«Համերաշխություն» կուսակցություն
«Հայրենիք» կուսակցություն
«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն
Հայաստանի հանրապետական կուսակցություն
«Հայաստանի ժողովրդավարական ազատական միություն»
Հայաստանի դեմոկրատական կուսակցություն
«Միացյալ Հայաստան» կուսակցություն
«Սահմանադրական իրավունք միություն» կուսակցություն
«Վերածնված Հայաստան» կուսակցություն
«5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցություն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Արցախի «Արդարություն» կուսակցություն
«Ազատ Հայրենիք» կուսակցություն
ՀՅԴ Արցախի կառույց
Արցախի ժողովրդավարական կուսակցությունը
«Քաղաքական միացյալ դաշինք» կուսակցություն
«Ազգային միաբանություն» կուսակցություն
«Միասնական հայրենիք» կուսակցություն
Արցախի պահպանողական կուսակցություն
Արցախի հանրապետական կուսակցություն
«Շարժում- 88» կուսակցություն
Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցություն
«Ազգային վերածնունդ» կուսակցություն
Հայտարարությունը բաց է ստորագրման համար

ԴՐՕՇԱԿ

Ստեփանակերտ
9 մայիսի 2023 թ.